497

Կ. Մարքս

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

1940
3K13
Ք-16

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна



3K13
Ք-16
Ь 2005
NOV 2009

Կ. ՄԱՐՔՍ

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

497
26 JUN 2013
1392
40

КАРЛ МАРКС

ГРАЖДАНСКАЯ ВОЙНА
ВО ФРАНЦИИ

Государственное издательство политической литературы
Ереван • 1940

## ՀԱՅՊԵՏՔԱՂՀՐԱՏԻ ԿՈՂՄԻՑ

Կարլ Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» այս գրքի ռուսերենից հայերեն կատարած թարգմանության համեմատությունը և խմբագրությունը կատարված է Մարքսի՝ 1939 թվին հրատարակված «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» վերնագիրը կրող գրքի հետևյալ հոդվածներից՝ «Հրատարակչության կողմից», «Ֆ. Էնգելսի ներածականը», «Մարքսի՝ Կուգելմանին ուղղած նամակներից», «Անվանացուցակը» և «Ֆրանսիայում տեղի ունեցած դեպքերի խրոնիկան», իսկ առաջին և յերկրորդ կոչերն ու «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» հոդվածը համեմատված են ու խմբագրված 1939 թվին ռուսերեն լեզվով հրատարակված «Կ. Մարքս—Առաջին Ինտերնացիոնալի փաստաթղթերը» գրքի համապատասխան հոդվածների համաձայն:

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում 1871 թվին» մանիֆեստը գրել է Մարքսը Առաջին Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի հանձնարարությամբ 1871 թվի մայիսին, այն օրերը, յերբ կռիվը դեռ վերջացած չեր Փարիզի բարիկադների վրա: Վերջին բարիկադները, վորոնց վրա մարտնչում եյին Կոմունայի հերոսական մարտիկները, Վերսալցիները գրավեցին մայիսի 28-ին: Յերկու որ անց, մայիսի 30-ին, Մարքսը Գլխավոր Խորհրդի նիստում հայտարարեց իր յերևելի «Մանիֆեստը», վորի մեջ նա ցույց տվեց Փարիզի Կոմունայի պատմական նշանակությունը և արձանագրեց, վոր Փարիզի Կոմունայի ամենամեծ ծառայությունն այն եր, վոր նա փորձեց ջարդել, կոտրել բուրժուազիայի բյուրոկրատական-ռազմական պետական մեքենան և պետության նոր տիպ ստեղծել—պրոլետարիատի պետությունը:

«Այդ Կոմունայի բովանդակության և նշանակության հանճարեղ վերլուծությունը, վոր տվել է Մարքսն իր «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքի մեջ, ցույց տվեց, վոր Կոմունան ստեղծեց պետության նոր տիպ, պրոլետարական պետությունը»,—գրում եր Լենինը:

Բուրժուազիան կատաղի չարանենգությամբ, գրպարտության հեղեղներով դիմավորեց «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքի լույս տեսնելը: 1871 թ. հունիսի 18-ին Կուգելմանին ուղղած նամակում Մարքսը գրում եր.

«Դու գիտես, վոր Փարիզի վերջին հեղափոխության ամբողջ ընթացքում վերսալյան լրագրերը (վորոնց մեջ մասնակցում է Շտիբերը), իսկ նրանց հետևից նաև այստեղի լրագրերը անընդհատ ամբաստանում եյին ինձ իբրև «Ինտերնացիոնալի մեծ առաջնորդին»:

Այժմ ավելանում է այս մանիֆեստն էլ, որ դու, հավանորեն, արդեն ստացել ես: Այն հրեշավոր իրարանցում կառաջացնի, և յես պատիվ ունեմ ներկայումս այն մարդը լինելու, որին ամբողջ Լոնդոնում ամենից ավելի ուժեղ կերպով են զրպարտում և որին ամենից ավելի յեն սպառնում: Այս բանը, ճիշտ որ, հիանալի յե քսանամյա տաղտկալի ճահճային իդիլլիայից հետո: Կառավարական օրգան «Ոբսերվերը» սպառնում է ինձ դատական հետաքննությամբ: Թո՛ղ համարձակվեն: Թքո՛ւմ եմ յես այդ օրենքների վրա»...

---

Այս հրատարակության մեջ տրվում են Առաջին Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի առաջին և յերկրորդ կոչերը ֆրանս-պրուսական պատերազմի մասին, որ նույնպես գրել է Մարքսը:

Գրքի վերջում կցված են Մարքսի յերկու նամակներն Առաջին Ինտերնացիոնալի անդամ—Կուգելմանին:

Մարքսի աշխատությունների և Ֆ. Ենգելսի «Ներածության» թարգմանության տեքստը վերցրած է «Կ. Մարքս: Ընտիր յերկեր յերկու հատորի մեջ: Հատոր II» վերնագիրը կրող յերկհատորյակից:



# ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

---

Բանվորների Միջազգային Ընկերության Գլխավոր Խորհրդի կոչը՝ «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում»՝ վերահրատարակելու և նրա համար մի ներածություն գրելու առաջարկն ինձ համար անսպասելի յեր: Այդ պատճառով էլ յես կարող եմ այստեղ կարճ կերպով միայն ամենաէյական կետերը շոշափել:

Վերև հիշված ծավալով համեմատաբար ավելի մեծ աշխատությունից առաջ յես զետեղում եմ Գլխավոր Խորհրդի յերկու ավելի կարճ դիմումները ֆրանս-պրուսական պատերազմի առթիվ: Այդ բանն անում եմ նախ՝ այն պատճառով, որովհետև «Քաղաքացիական պատերազմի» մեջ ցուցումն է արվում յերկրորդ դիմումի վրա, որն ինքնըստինքյան, առանց առաջնի ամենուրեք հասկանալի չէ: Իսկ յերկրորդ՝ որովհետև այդ յերկու, նույնպես Մարքսի ձեռքով գրված դիմումները, հանդիսանում են վոչ պակաս քան «Քաղաքացիական պատերազմը», հոչակավոր նմուշներ հեղինակի զարմանալի, առաջին անգամ «Լուի Բոնապարտի Բրյումերի 18-ի» մեջ հանդես յեկած ձիրքի՝ ճիշտ ըմբռնելու խոշոր պատմական դեպքերի բնույթը, նշանակությունն ու անհրաժեշտ հետևանքները, այնպիսի ժամանակ, յերբ այդ դեպքերը դեռ կատարվում են մեր աչքերի առաջ կամ հենց նոր են ավարտվել: Յեվ վերջապես, որովհետև մենք Գերմանիայում դեռ այսօր էլ հեծում ենք այդ դեպքերի Մարքսի կողմից նախագուշակված հետևանքների ճնշման ներքո:

Մի՞թե չարդարացավ առաջին դիմումի այն նախագուշակումը, թե յեթե Գերմանիայի պաշտպանողական պատերազմը Լուի Բոնապարտի դեմ աղավաղվի և նվաճողական պատերազմ դառնա ֆրանսական ժողովրդի դեմ, ապա Գերմանիան ստիպված կլինի կրկին և ե՛լ ավելի մեծ չափով ապրելու այն դժբախտություննե-

րը, վոր նրան բաժին ընկան այսպես կոչված ազատագրական պատերազմներից հետո: Չունեցա՞նք մենք արդյոք Բիսմարկի ևս քսան տարվա իշխանություն, իսկ դեմագոգներին հալածելու փոխարեն—բացառիկ օրենք և սոցիալիստների հալածանքը, նույնպիսի վոստիկանական կամայականությամբ, օրենքի տառացի նույնպիսի ամենավրդովեցուցիչ մեկնաբանությամբ:

Յեվ մի՞թե բառացի չիրականացավ այն նախագուշակությունը, թե Էլզաս-Լոթարինգիայի գրավումը «Ֆրանսիային կմղի Ռուսաստանի գիրկը»[1], և թե այդ գրավումից հետո Գերմանիան ստիպված պետք ե լինի կա՛մ Ռուսաստանի ակնհայտնի սպասավորը դառնալու, կա՛մ մի կարճատև հանգստից հետո պետք ե նոր պատերազմի նախապատրաստվի, և այն էլ՝ «մի ցեղային պատերազմի՝ սլավոնների և ռոմանների միացած ցեղերի դեմ»: Մի՞թե ֆրանսական նահանգների բռնագրավումը Ֆրանսիային չմղեցի՞ն Ռուսաստանի գիրկը: Մի՞թե Բիսմարկն ամբողջ քսան տարի ապարդյուն կերպով չե՞ր ձգտում ցարի բարեհաճությունը ձեռք բերել, սպասավորելով նրան և ե՛լ ավելի ստրկաբար ծունկ չոգելով «սուրբ Ռուսիայի» առաջ, քան սովոր եր այդ անելու փոքրիկ Պրուսիան, նախ քան իր «Յեվրոպայի առաջին մեծ պետությունը» դառնալը: Յեվ մի՞թե ամեն օր մեր գլխին կախված չե պատերազմի դամոկլյան սուրը, վորն առաջին օրն ևեթ փոշի կդարձնի թագավորների բոլոր թղթե դաշնակցությունները. մի պատերազմի, վորի վերաբերմամբ վոչինչ վորոշ չե, բացի նրա ելքի բացարձակ անորոշությունից. մի ցեղային պատերազմի, վոր ամբողջ Յեվրոպան կենթարկի տասնհինգ կամ քսան միլլիոն զինված մարդկանց ավերածությանը, և վորը միայն այն պատ—

[1] Քաղվածք Գլխավոր խորհրդի յերկրորդ կոչից՝ Ֆրանս-պրուսական պատերազմի առթիվ: Մարքսը նախատեսում եր, վոր Էլզաս-Լոթարինգիայի անեքսիայից հետո ռևանշի ծարավի Ֆրանսիան դաշնակից է վորոնելու առաջին հերթին ի դեմս ցարական Ռուսաստանի: 1870 թ. սեպտեմբերի 1-ին Մարքսը գրում եր Զորգեյին. «Այս պատերազմը կհասցնի,—մի բան, վոր պրուսական էշերը չեն կարողանում հասկանալ,—ճիշտ այնպես պատերազմի Ռուսաստանի և Գերմանիայի միջև, ինչպես վոր 1866 թվի պատերազմը հասցրեց պատերազմի Պրուսիայի և Ֆրանսիայի միջև, և այդ այժմյան պատերազմի ամենալավ հետևանքը կլինի Գերմանիայի վերաբերմամբ: Իսկական պրուսականությունը յերբեք գոյություն չի ունեցել և գոյություն ունենալ չի կարող այլ կերպ, բայց յեթե միայն դաշնակցած Ռուսաստանի հետ և նրանից ստրկական կախման մեջ գտնվելով: Բացի դրանից, այդպիսի № 2 պատերազմը անխուսափելի ռուսական սոցիալական հեղափոխության վերաբերմամբ մանկաբարձուհու դեր կկատարի»:




et qu'on pouvait entrer. M. Thiers le savait, car la France entière l'a su dès le premier jour. Cependant, M. Thiers hésitait à décorer M. Ducatel, et chaque fois qu'on lui parlait de ce Ducatel, il enrageait. Pourquoi? Parce que Ducatel lui a ravi la moitié de sa gloire. M. Thiers voulait absolument prendre Paris d'assaut et y entrer par la brèche. Il le voulait si bien, que, le 22 mai, c'est-à-dire le lendemain de l'entrée des troupes, annonçant à la Chambre ce grand résultat, il déclara que, la brèche étant faite, toute l'armée s'y était précipitée. Il adressa aux préfets des dépêches dans le même sens. Enfin, il lui fallait sa brèche à tout prix. Or, la brèche, c'est Ducatel et son mouchoir blanc!

Je ne vous cacherai pas que Ducatel, avec son histoire qui vaut bien une légende, me paraît aussi grand que Léonidas aux Thermopyles; mais M. Thiers, en cette circonstance, ne s'est pas élevé à la hauteur de Ducatel. Pourquoi l'oublier, le rapetisser, l'enterrer sous cette brèche imaginaire? Evidemment M. Thiers a été jaloux, et cette jalousie a fait taire en lui les scrupules de l'historien. La vérité, la vérité, cet idéal auquel il sacrifie tout (dans ses préfaces), lui a paru indigne, cette fois, de la majesté exécutive; et il a brodé de ses mains le joli récit que vous savez. Malheureusement on a protesté, on proteste encore tous les jours, et quelques malveillants vont jusqu'à dire que M. Thiers écrit l'histoire comme le général Trochu.

Ah! si vous avez l'âme sensible et que vous teniez à conserver le cœur lég..., comme disait M. Ollivier, n'allez pas vous promener dans la galerie de la Paix, à l'heure où nos gentilshommes de la droite échangent d'habitude leurs poignées de mains et leurs pensées.

Je vous assure que c'est navrant comme la levée du corps, vous savez, cet instant suprême où le maître des cérémonies annonce le clergé et appelle la famille.

Les burgraves du Parlement commencent à s'apercevoir qu'ils ne représentent peut-être pas d'une manière tout-à-fait complète la vraie opinion publique, et c'est dur de s'avouer cela, surtout quand, comme le menteur qui finit par croire lui-même à ce qu'il dit, ces gens-là en étaient arrivés à se persuader que c'était la nation elle-même qui prenait part, en leur personne, à tous leur tripotages et à toutes leurs menées de fusion et de restauration.

Կ. Մարքսի տետրակը Փարիզի կոմունայի մասին գրած հոդվածների կտրածքներով և քաղվածքներով:

ճառով չի բռնկել դեռևս, վորովհետև նրա վերջնական հետևանքները նախատեսելու լիակատար անկարելիությունը վախեցնում է զինվորական մեծ պետություններից նույնիսկ ամենաուժեղին:

Այդ պատճառով ել առավել ևս անհրաժեշտ է 1870 թ. միջազգային բանվորական քաղաքականության հեռատեսության այս կիսով չափ մոռացված, բայց փայլուն ապացույցները կրկին մատչելի դարձնել գերմանական բանվորներին:

Ինչ վոր ասացի այս յերկու դիմումների մասին, հավասարապես վերաբերում է նաև «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքին: Մայիսի 28-ին Կոմունայի վերջին մարտիկներն ընկան Բելվիլի ստորոտներում թշնամու գերակշռող ուժերի դեմ մղվող պայքարում, իսկ դրանից հազիվ յերկու որ անցած, մայիսի 30-ին, Մարքսը Գլխավոր խորհրդի առաջ կարդաց իր աշխատությունը, վորի մեջ նկարագրված է Փարիզի Կոմունայի պատմական նշանակությունը հակիրճ, ուժեղ գծերով, բայց այնպիսի դիպուկությամբ և—վոր գլխավորն է—այնպիսի ճշտությամբ, վորպիսի բարձրության այլևս յերբեք չի հասել այդ նյութի մասին յեղած հետագա ամբողջ ընդարձակածավալ գրականությունը:

1789 թ. սկսած Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական զարգացման շնորհիվ Փարիզում վերջին հիսուն տարում այնպիսի վիճակ եր ստեղծվել, վոր այնտեղ չեր կարող վորևէ հեղափոխություն բռնկել, առանց պրոլետարական բնույթ ընդունելու. իր արյունով հաղթությունը տանող պրոլետարիատը հաղթությունից հետո հանդես եր գալիս իր սեփական պահանջներով: Այդ պահանջներն ավելի կամ պակաս չափով մութն եյին լինում և մինչև իսկ խառնաշփոթ, նայելով Փարիզի բանվորների յուրաքանչյուր անգամ ունեցած զարգացման մակարդակին. սակայն նրանք, վերջիվերջո բոլորն ել վեր եյին ածվում կապիտալիստների և բանվորների միջև յեղած դասակարգային հակադրությունը վերացնելուն: Թե ի՞նչպես պետք է տեղի ունենար այդ, իհարկե վոչ վոք չգիտեր: Բայց հենց այդ պահանջը, վորքան ել անորոշ եր նրա ձևակերպումը, իր մեջ վտանգ եր բովանդակում գոյություն ունեցող հասարակակարգի համար: Այդ պահանջը ներկայացնող բանվորները դեռևս զինված եյին լինում. այդ պատճառով ել պետության ղեկի մոտ կանգնած բուրժուաների համար բանվորների զինաթափումն առաջին պատվիրանն եր: Դրա համար ել՝ բանվորների միջոցով՝ ձեռք բերված յուրաքանչյուր հե-

ղափոխությանը մի նոր կռիվ եր հաջորդում, վոր վերջանում եր բանվորների պարտությամբ:

Այդ բանն առաջին անգամ տեղի ունեցավ 1848 թվին: Պառլամենտական ոպոզիցիային պատկանող լիբերալ բուրժուաները բանկետներ եյին սարքում՝ այն ընտրական ռեֆորմն անցկացնելու նպատակով, վորը պետք ե ապահովեր իրենց կուսակցության իշխանությունը: Կառավարության դեմ կռվելիս նրանք ավելի և ավելի հաճախ ստիպված եյին ժողովրդի վճռին դիմելու, ստիպված եյին լինում թույլ տալու, վորպեսզի հետզհետե առաջին պլանի վրա յելնեն բուրժուազիայի և մանր բուրժուազիայի արմատական և հանրապետական շերտերը: Բայց վերջիններիս թիկունքում կանգնած եյին հեղափոխական բանվորները, իսկ սրանք 1830 թ. սկսած շատ ավելի մեծ քաղաքական ինքնուրույնություն եյին ձեռք բերել, քան կռահում եյին բուրժուաներն ու մինչև անգամ հանրապետականները: Յերբ կրիզիս առաջացավ կառավարության և ոպոզիցիայի հարաբերությունների միջև, բանվորներն սկսեցին կռիվը փողոցներում: Լուի-Ֆիլիպը չքացավ, նրա հետ միասին չքացավ նաև ընտրական ռեֆորմը, իսկ նրա տեղն առաջ յեկավ հանրապետությունը, և այն ել մի հանրապետություն, վոր հաղթական բանվորներն իրենք հայտարարեցին մինչև անգամ «սոցիալական» հանրապետություն: Թե ինչ պետք եր հասկանալ սոցիալական հանրապետություն ասելով, դրա մասին վոչ վոք պարզ գաղափար չուներ, մինչև անգամ բանվորներն իրենք ել չգիտեյին, թե ինչ ե այն: Բայց նրանք այժմ զենք ունեյին և ուժ եյին դարձել պետության մեջ: Այդ պատճառով ել՝ հենց վոր պետությունը ղեկավարող բուրժուական հանրապետականները փոքրի-շատե հաստատուն հող զգացին իրենց վոտքերի տակ, նրանց առաջին գործն յեղավ՝ զինաթափ անել բանվորներին: Այս բանը տեղի ունեցավ նրանով, վոր ուղղակի խախտելով նրանց տված խոսքը, բացարձակ ծաղր ու ծանակով և բոլոր գործազուրկներին հեռավոր գավառ աքսորելու փորձով՝ բանվորներին մղեցին դեպի 1848 թ. հունիսի ապստամբությունը: Կառավարությունը նախապես հոգացել եր, վոր իրեն ուժերի ճնշող գերակշռություն ունենա: Հնգորյա հերոսական դիմադրությունից հետո՝ բանվորները պարտվեցին: Յեվ այն ժամանակ անզեն գերիների մեջ սկսվեց մի արյան բաղնիս այնպիսի չափերով, վորպիսին դեռ չեր տեսնվել Հռոմեյական հանրապետության անկմանը նախորդող քաղաքացիական պատերազմների որերից իվեր:



Առաջին անգամն եր, վոր բուրժուազիան ցույց եր տալիս, թե վրեժխնդրության ինչպիսի կատաղի վայրագությամբ ե լցվում նա, յերբ պրոլետարիատը հանդգնում ե իբրև առանձին դասակարգ հանդես գալ նրա հանդեպ, իր սեփական շահերով և պահանջներով: Բայց, այնուամենայնիվ, 1848 թիվը յերեխայական մի խաղ եր այն մոլեգնության համեմատությամբ, վոր այդ բուրժուազիան ցուցաբերեց 1871 թվին:

Դրան կրնկակոխ հետևեց պատիժը: Յեթե պրոլետարիատը դեռևս չեր կարող, ապա բուրժուազիան արդեն այլևս չեր կարողանում կառավարել Ֆրանսիան, չեր կարողանում գոնե այն ժամանակ, յերբ նա մեծամասնությամբ դեռ միապետական տրամադրություններ ուներ և բաժանված եր յերեք դինաստիական կուսակցությունների[1] և մի չորրորդ՝ հանրապետական կուսակցության: Նրա ներքին յերկպառակությունները թույլ տվին արկածախնդիր Լուի Բոնապարտին տիրանալու իշխանության ամբողջ ապարատին—զորքին, վոստիկանությանը, կառավարչական մեքենային—և 1851 թ. դեկտեմբերի 2-ին[2] պայթեցնելու բուրժուազիայի վերջին հաստատուն ամրոցը՝ Ազգային Ժողովը: Սկսվեց յերկրորդ կայսրությունը[3],—Ֆրանսիայի շահագործումը քաղաքական և ֆինանսական արկածախնդիրների մի սրիկայախմբի ձեռքով, բայց միաժամանակ սկսվեց նաև այնպիսի մի արդյունաբերական զարգացում, վոր յերբեք հնարավոր չեր Լուի-Ֆիլիպի անհոգի և յերկչոտ սիստեմի ժամանակ, յերբ բացառապես իշխում եր խոշոր բուրժուազիայի միայն մի փոքրիկ մասը: Լուի Բոնապարտը խլեց կապիտալիստներից նրանց քաղաքական իշխանությունը՝ բուրժուազիային բանվորների դեմ պաշտպանելու նպատակով, ինչպես և բանվորներին նրա դեմ պաշտպանելու համար. բայց միևնույն ժամանակ նրա իշխանությունը նպաստեց սպեկուլյացիային և արդյունաբերական գործու-

---

[1] Միապետականները Ֆրանսիայում յերեք կուսակցության եյին բաժանվում՝ լեգիտիմիստներ — Բուրբոնների «լեգիտիմ» («որինական») միապետության կողմնակիցներ, օրլեանիստներ — Օրլեանների դինաստիայի կողմնակիցներ և բոնապարտիստներ — Լուի Բոնապարտի կողմնակիցներ:

[2] 1851 թ. դեկտեմբերի 2-ին Լուի Բոնապարտը, լինելով Ֆրանսական հանրապետության նախագահ, պետական հեղաշրջում կատարեց, ցրեց Ազգային Ժողովը և մի տարի հետո իրեն կայսր հայտարարեց:

[3] Յերկրորդ կայսրություն եր կոչվում Ֆրանսիայում այն ժամանակաշրջանը, յերբ կայսր եր Լուի Բոնապարտ—Նապոլեոն III-ը (1852—1870 թ. թ.), տարբերելու համար Նապոլեոն I-ի առաջին կայսրությունից (1804—1814) թվականներին):

նեյությանը, կարճ՝ նպաստեց ամբողջ բուրժուազիայի մինչև այն չլսված չափերով տնտեսապես ծաղկելուն և հարստանալուն: Սակայն ե՛լ ավելի խոշոր չափերով զարգացավ այն անձերի ապականությունն ու մասսայական գողությունը, վորոնք համախմբվելով կայսերական արքունիքի շուրջը, այդ հարստացումից խոշոր տոկոս եյին գանձում իրենց ոգտին:

Բայց յերկրորդ կայսրությունը մի կոչ եր՝ ուղղված Ֆրանսական շովինիզմին. դա մի պահանջ եր՝ վերադարձնելու առաջին կայսրության 1814 թ. կորցրած սահմանները, առնվազն առաջին հանրապետության սահմանները: Ֆրանսական կայսրությունը հին միապետության սահմաններով, և դեռ ավելին՝ 1815 թ. ավելի նեղացրած սահմաններով՝ յերկար ժամանակ չեր կարող գոյություն ունենալ: Այստեղից առաջ եր գալիս պարբերական պատերազմների և սահմաններն ընդարձակելու անհրաժեշտությունը: Սակայն վո՛չ մի սահմանի ընդարձակումն այնպես չեր հրապուրում Ֆրանսական շովինիստների յերևակայությունը, վորքան ընդարձակումը Հռենոսի գերմանական ձախ ափի հաշվին: Նրանց համար մի քառակուսի մղոնը Հռենոսի վրա ավելի գին ուներ, քան տասը քառակուսի մղոնն Ալպերում կամ այլուր: Քանի գոյություն ուներ յերկրորդ կայսրությունը, Հռենոսի ձախ ափը վերադարձնելու պահանջը, միանգամից թե մաս առ մաս, միայն ժամանակի խնդիր եր: Այդ ժամանակը յեկավ 1866 թ. ավստրո-պրուսական պատերազմի հետ. խաբված «տերիտորիալ փոխհատուցման» իր ակնկալությունների մեջ Բիսմարկի կողմից և իր չափազանց խորամանկ դանդաղկոտ քաղաքականության շնորհիվ՝ Նապոլեոնին այժմ այլևս ուրիշ բան չեր մնում, բացի պատերազմից, վորը բռնկեց 1870 թվականին և նրան դեպի Սեդան և այնտեղից ել Վիլհելմսհոե գերի տարավ:

Դրա անխուսափելի հետևանքը յեղավ 1870 թ. սեպտեմբերի 4-ի փարիզյան հեղափոխությունը: Կայսրությունը խորտակվեց ինչպես խաղաթղթերից շինած մի տնակ. նորից հայտարարվեց հանրապետություն: Սակայն թշնամին կանգնած եր դռների առաջ. կայսրության զորաբանակները կամ անհույս կերպով պաշարված եյին Մեցում կամ գերի եյին տարված Գերմանիա: Այս խիստ նեղ վիճակի մեջ ժողովուրդը թույլ տվեց նախկին Օրենսդրական Մարմնի Փարիզի պատգամավորներին իրենցից «Ազգային Պաշտպանության Կառավարություն» կազմելու: Այս բանին ավելի ևս հեշտությամբ համաձայնեցին, վորովհետև այժմ պաշտպա-



նության նպատակով զենքի ընդունակ բոլոր փարիզեցիները մտել եյին ազգային գվարդիայի մեջ և զինված եյին, այնպես վոր հիմա բանվորները խոշոր մեծամասնություն եյին կազմում այնտեղ: Սակայն շուտով արդեն յերևան յեկավ հակասությունը համարյա միայն բուրժուաներից կազմված կառավարության և զինված պրոլետարիատի միջև: Հոկտեմբերի 31-ին բանվորական գումարտակները գրոհ տվին քաղաքային տան վրա և կառավարության անդամներից միքանիսին կալանավորեցին: Դավաճանությունը, իր տված խոսքի ուղղակի խախտումը կառավարության կողմից և մանր-բուրժուական միքանի գումարտակների միջամտությունն ազատեց նրանց կրկին, բայց վորպեսզի ոտար պատերազմական ուժերի կողմից պաշարված քաղաքի ներսում քաղաքացիական պատերազմ չհրահրվի, մինչայժմյան կառավարությունը թողնվեց իր պաշտոնի մեջ:

Վերջապես, 1871 թ. հունվարի 28-ին, սովատանջ Փարիզն անձնատուր յեղավ: Բայց նա անձնատուր յեղավ պատերազմների պատմության մեջ մինչև այն ժամանակ չլսված պատվավոր պայմաններով: Ամրությունները հանձնվեցին, շուրջանակի պարիսպը զինաթափ արվեց, գծային զորքերը և թռուցիկ գվարդիան հանձնեցին զենքերը, և նրանք հայտարարվեցին պատերազմական գերիներ: Բայց Ազգային գվարդիան պահեց իր զենքերն ու թնդանոթները և միայն զինադադար կնքեց հաղթողների հետ: Իսկ վերջիններս իրենք չհանդգնեցին հաղթական յերթով Փարիզ մտնել: Նրանք գրավեցին Փարիզի միայն մի փոքրիկ, մասամբ հասարակական պարտեզներից կազմված անկյուն, և այդ ել միայն մի-յերկու որով: Յեվ այս ժամանակի ընթացքում հաղթողները, վորոնք Փարիզը 131 որ շարունակ պաշարված եյին պահել, իրենք եյին շրջապատված Փարիզի զինված բանվորների կողմից, վորոնք արթուն հսկում եյին, վորպեսզի վո՛չ մի «պրուսացի» չանցնի այն փոքրիկ անկյունի նեղ սահմաններից, վոր թողնված եր ոտար նվաճողներին: Այսպիսի պատկառանք եյին ներշնչում Փարիզի բանվորներն այն զորաբանակին, վորի առաջ կայսրության բոլոր զորքերը վայր եյին դրել իրենց զենքերը: Յեվ պրուսական յունկերները, վորոնք յեկել եյին այստեղ վրեժ առնելու հեղափոխության ոջախից, հարկադրված եյին հարգանքով կանգ առնելու և պատիվ տալու հենց այդ զինված հեղափոխությանը:

Պատերազմի ընթացքում Փարիզի բանվորները սահմանափակվել եյին միայն նրանով, վոր պահանջել եյին յեռանդով շա-

թունակել կռիվը: Բայց այժմ, յերբ Փարիզի անձնատուր լինելուց հետո՝ հաշտություն կնքվեց, կառավարության նոր պարագլուխը՝ Թիերը պետք ե համոզվեր, վոր ունևոր դասակարգերի—խոշոր հողատերերի և կապիտալիստների—տիրապետությունը միշտ վտանգի տակ կլինի, քանի Փարիզի բանվորները զինված կլինեն: Նրա առաջին գործն յեղավ նրանց զինաթափ անելու փորձը: Մարտի 18-ին նա գծային զորամասեր ուղարկեց, հրաման տալով նրանց՝ խլելու Ազգային գվարդիայի հրետանին, վոր պատրաստվել եր Փարիզի պաշարման ժամանակ և վճարվել հասարակական հանգանակությամբ: Փորձն անհաջող անցավ. ամբողջ Փարիզն իբրև մի մարդ վոտքի յելավ դիմադրության համար և պատերազմը Փարիզի և Վերսալում նստած ֆրանսական կառավարության միջև հայտարարված եր:—Մարտի 26-ին ընտրվեց և 28-ին հայտարարվեց Փարիզի Կոմունան: Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեն, վոր մինչ այն իր ձեռքն եր առել կառավարության ղեկը, իր լիազորությունները հանձնեց նրան, նախորոք Փարիզի խայտառակ «բարոյականության վոստիկանության» վերացումը դեկրետագրելուց հետո: Մարտի 30-ին Կոմունան վոչնչացրեց զինվորագրությունը և մշտական զորքը և միակ զինված ուժը հայտարարեց Ազգային գվարդիան, վորին պետք ե պատկանեյին բոլոր զենք կրելու ընդունակ քաղաքացիները: Կոմունան վերացրեց բնակարանային վարձի բոլոր հաշիվները 1870 թ. հոկտեմբերից մինչև ապրիլ, մինչև այն վճարված գումարները գրելով ապագայի հաշվին, և կանգնեցրեց քաղաքային լոմբարդում գրավ դրված իրերի վաճառումը: Նույն որն իրենց պաշտոններում հաստատվեցին Կոմունայի մեջ ընտրված ոտարերկրացիները, վորովհետև «Կոմունայի դրոշակը համաշխարհային հանրապետության դրոշակն ե»:—Ապրիլի 1-ին վորոշում ընդունվեց, վոր Կոմունայի պաշտոնյաների, ուրեմն նաև նրա անդամների, ամենաբարձր ռոճիկը չպետք ե անցնի 6000 ֆրանկից (4800 մարկ): Հետևյալ որը դեկրետագրվեց յեկեղեցու բաժանումը պետությունից, վերացվեցին կրոնական նպատակների համար տրվող բոլոր պետական վճարումները և բոլոր յեկեղեցական գույքերն ազգային սեփականություն հայտարարվեցին. դրա հետևանքով՝ ապրիլի 8-ին վորոշվեց դպրոցներից վտարել բոլոր յեկեղեցական սիմվոլները, պատկերները, դավանանքները, աղոթքները, կարճ՝ «այն ամենը, ինչ վոր վերաբերում ե ամեն մի առանձին անհատի խղճին», վոր և հետզհետե իրականաց-



վեց:—Ապրիլի 5-ին, նկատի ունենալով Կոմունայի դեմ ընկած մարտիկների ամեն որ կրկնվող գնդակահարությունները վերսալյան զորքերի կողմից, դեկրետ հրատարակվեց պատանդներ ձերբակալելու մասին, բայց այդ դեկրետը յերբեք լրիվ չիրագործվեց:—Ապրիլի 6-ին Ազգային գվարդիայի 137-րդ գումարտակը դուրս քաշեց գիլյոտինը և հրապարակով այրեց ժողովրդի ցնծության աղաղակների տակ:—Ապրիլի 12-ին Կոմունան վորոշեց ցած գլորել Վանդոմի հրապարակի հաղթության սյունը, վոր ձուլել եր տվել Նապոլեոնը 1809 թվի պատերազմից հետո՝ թշնամիներից իր նվաճած թնդանոթներից և վորը հանդիսանում եր շովինիզմի և ազգային թշնամության խորհրդանշանը:—Այդ վորոշումն իրագործվեց մայիսի 16-ին:—Ապրիլի 16-ին Կոմունան կարգադրեց ցուցակագրել այն ֆաբրիկաները, վոր չեյին բանեցնում ֆաբրիկանտները, և պլան մշակել այդ ֆաբրիկաները նրանց մեջ մինչև այն աշխատած բանվորների կոոպերատիվ ընկերությունների միջոցով բանեցնելու մասին, ինչպես և այդ ընկերություններից մի մեծ միություն կազմակերպելու մասին:—Ապրիլի 20-ին Կոմունան վերացրեց հացագործների գիշերային աշխատանքը, ինչպես և վոչնչացրեց աշխատանք գտնող գրասենյակները, վորոնք յերկրորդ կայսրության որերից սկսած՝ վոստիկանության կողմից նշանակված անձերի մենաշնորհն եյին կազմում, անձեր, վորոնք բանվորներին շահագործելու մեջ առաջնակարգ տեղ եյին գրավում:—Աշխատանք գտնելու այդ գործը հանձնարարվեց Փարիզի 20 շրջանների մերիաներին:—Ապրիլի 30-ին Կոմունան վերացրեց փոխատուական գանձարկղները, վորոնք բանվորների մասնավոր շահագործման միջոցներ եյին և հակասում եյին նրանց իրավունքին՝ իրենց աշխատանքի գործիքների և վարկի վերաբերմամբ:—Մայիսի 5-ին Կոմունան վորոշեց քանդել ապաշխարության մատուռը, վոր կառուցված եր Լուդովիկոս XVI-ի գլխատման քավության համար:

Այդպիսով՝ մարտի 18-ից սկսած կտրուկ և վորոշակի կերպով յերևան յեկավ Փարիզի շարժման զուտ դասակարգային բնույթը, վորը մինչև այն՝ թշնամական ներխուժման դեմ կռվելու պատճառով՝ հետին պլանն եր մղվել: Կոմունայի մեջ նստած եյին գրեթե միայն բանվորներ կամ նրանց ճանաչված ներկայացուցիչները, այդ պատճառով ել նրա վորոշումները վճռական պրոլետարական բնույթ ունեյին: Կոմունան կամ այնպիսի ռեֆորմներ եր որինադրում, վոր հանրապետական բուրժուազիան





Гос. Публ. Библиотека им. А. Мясникяна

միայն իր յերկչոտությունից եր անտես արել, բայց վորոնք բանվոր դասակարգի ազատ գործունեյության համար անհրաժեշտ հիմք եյին ծառայում, ինչպես, որինակ, այն սկզբունքի անցկացնելը, թե պետության հանդեպ կրոնը միայն անհատական գործ ե. կամ Կոմունան վորոշումներ եր անցկացնում հատկապես բանվոր դասակարգի շահերից յելնելով, վորոշումներ, վորոնք մասամբ խորապես խարխլում եյին հին հասարակակարգը: Բայց պաշարված քաղաքում միայն այդ բոլորի կենսագործման սկիզբը կարող եր դրվել: Արդեն մայիսի սկզբից սկսած՝ բոլոր ուժերը գործադրվում եյին Վերսալի կառավարության շարունակ աճող զորամասերի դեմ կռիվ մղելու համար:

Ապրիլի 7-ին վերսալցիները գրավեցին Սենայի անցքերից մեկը Նեյիի մոտ, Փարիզի արևմտյան ճակատում. բայց ապրիլի 11-ին գեներալ Եդը [Eudes] նրանց արյունահեղ պարտություն պատճառեց հարավային ճակատի վրա հարձակվելու ժամանակ: Փարիզը շարունակ ռմբակոծվում եր, և այն ել այն մարդկանց կողմից, վորոնք նույն քաղաքի ռմբակոծումը պրուսացիների ձեռքով խարանել եյին իբրև սրբապղծություն: Այդ նույն մարդիկն ել այժմ պաղատում եյին պրուսական կառավարությանը, վորպեսզի նա շուտով հետ ուղարկի Սեդանում և Մեցում գերված ֆրանսական զինվորներին, վորոնք պետք ե նրանց համար Փարիզը հետ նվաճեյին: Այդ զորամասերի հետզհետե վերադառնալով՝ վերսալցիները մայիսի սկզբից սկսած վճռական գերակշռություն ձեռք բերին: Այս բանը պարզ յեղավ արդեն ապրիլի 23-ին, յերբ Թիերը դադարեցրեց Կոմունայի առաջարկությամբ սկսած բանակցությունները Փարիզի արքեպիսկոպոսին և մի շարք այլ՝ Փարիզում իբրև պատանդ պահվող քահանաներին միայն Բլանկիի հետ փոխանակելու մասին, վոր արդեն յերկու անգամ ընտրվել եր Կոմունայի անդամ, բայց բանտարկված եր Կլերվոյում: Ել ավելի պարզ յերևաց այդ բանը Թիերի ճառերի փոխված տոնից. մինչև այն զսպված և յերկդիմի՝ նա այժմ հանկարծ դարձավ հանդուգն, սպառնալից, կոպիտ:—Մայիսի 3-ին վերսալցիները գրավեցին Մուլեն-Սակե ռեդուտը հարավային ճակատում, 9-ին—ռմբակոծությունից բոլորովին ավերակ դարձած Իսսի ամրոցը, 14-ին—Վանվ ամրոցը: Արևմտյան ճակատում նրանք հետզհետե առաջ անցան մինչև քաղաքի ամրությունների գլխավոր գիծը, գրավելով այն բազմաթիվ գյուղերն ու շենքերը, վորոնք հասնում եյին մինչև քաղաքի պարիսպը:—Մայիսի 21-ին նրանց հաջողվեց





Կոմունայի հռչակումը 1871 թ. մարտի 28-ին:

դավաճանության շնորհիվ և այստեղ կանգնած Ազգային գվարդիայի անփութության հետևանքով՝ ներխուժել քաղաք: Պրուսացիները, վորոնք գրաված եյին պահում հյուսիսային և արևելյան ամրությունները, թույլ տվին վերսալցիներին գրավելու քաղաքի հյուսիսային կողմն ընկած վայրը, վոր զինադադարի պայմանների համաձայն նրանց համար անմատչելի պետք է լիներ. այդպիսով նրանք հնարավորություն ստացան գրոհ տալու քաղաքի վրա մի յերկար ճակատով այն կողմից, վոր փարիզեցիները զինադադարի պայմանների պատճառով ապահով եյին համարում հարձակումից, և այդ պատճառով էլ համեմատաբար թույլ կերպով եյին պաշտպանում: Դրա հետևանքով՝ դիմադրությունը Փարիզի արևմտյան կեսում, քաղաքի ամենահարուստ թաղերում, համեմատաբար թույլ եր: Այդ դիմադրությունն այնքան ավելի համառ և հզոր եր դառնում, վորքան ներխուժող զորամասերը մոտենում եյին մայրաքաղաքի արևելյան կեսին, իսկական բանվորական քաղաքին: Միայն ութօրյա կռվից հետո ընկան Կոմունայի վերջին պաշտպանները Բելվիլի և Մենիլմոնտանի բարձունքների վրա և անզեն մարդկանց, կանանց ու յերեխաների սպանությունները մի ամբողջ շաբաթ ավելի և ավելի ուժեղացող թափով մոլեգնելով՝ այժմ հասան իրենց գագաթնակետին: Կատարելագործված հրացանը բավականաչափ արագ կերպով չեր սպանում այլևս, դրա համար էլ պարտվածներին հարյուրներով գնդակահարում եյին միտրալյոզներով: «Père Lachaise»-ի գերեզմանատան «Կոմունարների պատը», վորտեղ տեղի ունեցան վերջին մասսայական սպանությունները, դեռ այսօր էլ կանգնած է իբրև մի լուռ, բայց պերճախոս վկայություն այն բանի, թե ի՛նչպիսի կատաղության է ընդունակ իշխող դասակարգը, յերբ պրոլետարիատը հանդգնում է իր իրավունքները պաշտպանել: Այնուհետև սկսվեցին մասսայական ձերբակալությունները. և վորովհետև անհնար եր կոտորել բոլոր կալանավորվածներին, կամայականորեն ջոկում եյին նրանց շարքերից առանձին զոհերի և գնդակահարում. մնացածներին տարան մի մեծ ճամբար, վորտեղ նրանք պետք է սպասեյին ռազմական դատարանի առաջ յելնելուն: Պրուսական զորամասերը, վորոնք գրավում եյին Փարիզի հյուսիս-արևելյան մասը, հրաման ունեյին թույլ չտալ վո՛չ մեկին փախչելու, սակայն սպաները հաճախ մատների արանքով եյին նայում, յերբ զինվորներն ավելի մարդասիրական զգացմունքներին եյին հնազանդվում, քան թե գերագույն հրամանատարության կարգադրությանը: Հատկապես սաքսոնական զինվո-

րական կորպուսը հաշտվեց նրանով, վոր շատ մարդկայնորեն եր վարվում և թույլ եր տալիս փախչելու շատերին, վորոնց Կոմունայի մարդիկ լինելն ակներև եր:

---

Յեթե մենք այժմ, քսան տարուց հետո, հետադարձ հայացք գցենք 1871 թ. Փարիզի Կոմունայի գործունեության և պատմական նշանակության վրա, ապա մենք կգտնենք, վոր «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքի նկարագրությանը միքանի լրացումներ պետք ե անել:

Կոմունայի անդամները բաժանվում եյին յերկու մասի. մեծամասնությունը բլանկիստներն եյին, վորոնք գերակշռում եյին նաև Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեյում. իսկ փոքրամասնությունը բաղկացած եր Բանվորների Միջազգային Միության անդամներից, վորոնք պատկանում եյին առավելապես Պրուդոնի սոցիալիստական դպրոցին: Բլանկիստներն այն ժամանակ մեծ մասամբ սոցիալիստ եյին հեղափոխական, պրոլետարական բնազդով. միայն քչերը նրանցից հասել եյին սկզբունքային դրույթների ավելի պարզ ըմբռնմանը շնորհիվ Վայյանի, վորը ծանոթ եր գերմանական գիտական սոցիալիզմին: Այստեղից՝ հասկանալի յե դառնում, թե ինչու Կոմունան տնտեսական տեսակետից շատ բան անտես արեց, ինչ վոր մեր այժմյան ըմբռնումների համաձայն նա պետք ե աներ: Իհարկե, ամենից դժվար ըմբռնելին այն սուրբ պատկառանքն եր, վորով նա հարգալից կանգ առավ Ֆրանսիական բանկի դռների առաջ: Այդ բանը նույնպես մի ծանր քաղաքական սխալ եր: Բանկը Կոմունայի ձեռքերում ավելի մեծ նշանակություն կունենար, քան տասը հազար պատանդ: Այդ կհարկադրեր ամբողջ ֆրանսիական բուրժուազիային ճնշում գործ դնելու Վերսալի կառավարության վրա՝ Կոմունայի հետ հաշտություն կնքելու համար: Սակայն, ե՛լ ավելի զարմանալի յե, թե ինչպես Կոմունան հաճախ միանգամայն ճիշտ եր վարվում, չնայելով վոր նա կազմված եր բլանկիստներից և պրուդոնիստներից: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր Կոմունայի տնտեսական բովանդակություն ունեցող դեկրետների համար, թե՛ նրանց արժեքավոր և թե՛ պակասավոր կողմերի համար, առաջին հերթին պատասխանատու յեն պրուդոնիստները, ինչպես վոր քաղաքական գործողությունների և թերությունների համար ել պատասխանատու յեն բլանկիստները: Յեվ պատմության ծաղրն եր կարծես, վոր յերկու դեպքում ել,—



ինչպես սովորաբար լինում ե, յերբ իշխանությունն անցնում ե դոկտրինյորների ձեռքը,—թե՛ մեկը և թե՛ մյուսը կատարում եյին հակառակն այն բանի, ինչ վոր կարգադրում եր նրանց դպրոցական դոկտրինան:

Պրուդոնը, մանր գյուղացիների և արհեստավորների այդ սոցիալիստը, ուղղակի ատում եր ասոցիացիան: Նա ասում եր, թե այդ ասոցիացիայի մեջ ավելի շատ վատ բան կա, քան թե լավ, վոր նա ի բնե անպտուղ ե, մինչև անգամ վնասակար, վոր նա բանվորի ազատությունը կաշկանդող մի շղթա յե, նա մի դատարկ դոգմա յե, անարդյունավետ և նեղիչ, վոր հակասում ե վո՛չ միայն բանվորի ազատությանը, այլև աշխատանքի խնայողության սկզբունքին, և նրա պակասավոր կողմերն ավելի արագությամբ են աճում, քան թե առավելությունները. նրա դիմաց՝ մրցակցությունը, աշխատանքի բաժանումը, մասնավոր սեփականությունը տնտեսական ոգտակար ուժեր են հանդիսանում: Բանվորների ասոցիացիան տեղին ե միայն բացառիկ դեպքերում—ինչպես ասում ե Պրուդոնը—խոշոր արդյունաբերության և խոշոր ձեռնարկությունների մեջ, որինակ՝ յերկաթուղիներում (տե՛ս «Idée générale de la Révolution, 3 ètude) [«Հեղափոխության ընդհանուր իդեան» 3-րդ ուրվագիծ]:

Իսկ 1871 թվին խոշոր արդյունաբերությունը մինչև անգամ Փարիզում, գեղարվեստական իրերի արհեստավորական արտադրության այդ կենտրոնում, դադարել եր բացառություն լինելուց, և Կոմունայի անշուշտ ամենակարևոր դեկրետը պահանջում եր այնպես կազմակերպել խոշոր արդյունաբերությունն ու մինչև անգամ մանուֆակտուրան, վոր նա հիմնված լինի վո՛չ միայն բանվորների ասոցիացիայի վրա յուրաքանչյուր առանձին ֆաբրիկայում, այլ միավորի այդ բոլոր ընկերությունները մի մեծ միության մեջ: Այդպիսի մի կազմակերպություն, ինչպես ճիշտ կերպով ասում ե Մարքսը «Քաղաքացիական պատերազմի» մեջ, վերջիվերջո պետք ե դեպի կոմունիզմ տաներ, ուրեմն բոլորովին հակառակը Պրուդոնի ուսմունքի: Հենց այդ պատճառով ել Կոմունան սոցիալիզմի պրուդոնյան դպրոցի գերեզմանն եր: Այդ դպրոցն այժմ անհետացած ե ֆրանսիական բանվորական շրջաններից. այնտեղ այժմ անվիճելի կերպով իշխում ե Մարքսի թեորիան, ինչպես մարքսիստների, այնպես ել պոսսիբիլիստների մեջ: Պրուդոնիստներ դեռ ևս հանդիպում են միայն «արմատական» բուրժուազիայի շարքերում:

Ավելի լավ չեղավ բլանկիստների դրությունը: Կրթված-մե-

ծացած դավադրության դպրոցում, իրար հետ կապված նրան համապատասխան խիստ կարգապահությամբ՝ նրանք այն կարծիքն ունեյին, թե համեմատաբար սակավաթիվ վճռական, լավ կազմակերպված մարդիկ կարող կլինեն վորոշ նպաստավոր մոմենտում վո՛չ միայն իրենց ձեռքը ձգել իշխանությունը, այլև այդ իշխանությունը յեռանդուն, վճռական գործունեյություն ծավալելով այնքան պահել իրենց ձեռքերում, մինչև վոր հաջողվի ժողովրդի բազմությունը գրավելու հեղափոխության կողմը և նրան համախմբելու փոքրիկ ղեկավար խմբակի շուրջը: Դրա համար ամենից առաջ հարկավոր եր ամբողջ իշխանությունը ամենախիստ, դիկտատորական յեղանակով կենտրոնացնել նոր հեղափոխական կառավարության ձեռքում: Իսկ ի՞նչ արեց Կոմունան, վոր իր մեծամասնությամբ հենց այդ բլանկիստներից եր բաղկացած: Գավառների ֆրանսացիներին ուղղված իր բոլոր պրոկլամացիաների մեջ նա հրավիրում եր սրանց, վորպեսզի բոլոր ֆրանսական համայնքները մի ազատ ֆեդերացիա կազմեն Փարիզի հետ, մի ազգային կազմակերպություն, վոր իսկապես առաջին անգամ պետք ե կազմվեր ազգի կողմից: Հատկապես հենց մինչայժմյան կենտրոնացրած կառավարության այն ճնշող ուժը—բանակը, քաղաքական վոստիկանությունը, բյուրոկրատիան, վոր ստեղծել եր Նապոլեոնը 1798 թվին և վորը նրանից հետո բոլոր կառավարությունները սիրով ընդունել եյին իբրև հարմար գործիք և իրենց հակառակորդների դեմ ոգտագործել,—հատկապես հենց այդ ուժը պետք ե ամենուրեք ընկներ, ինչպես վոր այն արդեն ընկել եր Փարիզում:

Կոմունան սկզբից ևեթ ստիպված եր ընդունել, վոր բանվոր դասակարգը, մի անգամ իշխանության հասնելով, չեր կարող տնտեսավարությունը շարունակել ոգտագործելով հին պետական մեքենան. վոր այդ բանվոր դասակարգը, յեթե նա չի ուզում իր, հենց նոր նվաճած իշխանությունը կրկին կորցնել, պետք ե մի կողմից՝ վերացնի բոլոր հին, մինչև այժմ հենց իրեն դեմ գործադրվող ճնշման մեխանիզմը, իսկ մյուս կողմից՝ իրեն ապահովի հենց իր սեփական պաշտոնյաների և պատգամավորների դեմ, նրանով, վոր նրանց բոլորին, առանց վորևե բացառության, հայտարարի փոփոխելի միշտ և ամեն ժամանակ: Վո՞րն եր մինչայժմյան պետության բնորոշ առանձնահատկությունը: Հասարակությունն՝ իր ընդհանուր շահերը պահպանելու համար՝ սկզբնապես աշխատանքի պարզ բաժանման միջոցով իրեն համար հատուկ որգաններ ստեղծեց: Սակայն այդ որգանները, ինչպես



և նրանցից գլխավորը, պետական իշխանությունը, ժամանակի ընթացքում, իրենց սեփական մասնավոր շահերին ծառայելով՝ հասարակության ծառաներից դարձան նրա տերերը: Այդ բանը տեղի յե ունեցել վո՛չ միայն ժառանգական միապետության, այլև դեմոկրատական հանրապետության մեջ: «Քաղաքագետները» վո՛չ մի տեղ ավելի մեծ ազդեցություն չունեն և այնպես առանձնացած չեն ազգի մյուս մասերից, ինչպես Հյուսիսային Ամերիկայում: Այստեղ յերկու մեծ կուսակցություններից յուրաքանչյուրը, վորոնք փոփոխակի անցնում են իշխանության գլուխը, իրենց հերթին կառավարվում են այնպիսի մարդկանց կողմից, վորոնք քաղաքականությունը իրենց համար ոգտակար գործ են դարձնում, վորոնք սպեկուլյացիա յեն անում միության կամ առանձին նահանգների որենսդրական ժողովների պատգամավորական տեղերի համար, կամ ապրում են իրենց կուսակցության ոգտին ագիտացիա անելով և նրա հաղթությունից հետո պարգևատրվում են վորևե պաշտոնով: Հայտնի յե, թե ինչպես ամերիկացիները 30 տարուց ի վեր փորձում են մի կողմ նետել այս անտանելի դարձած լուծը, և թե ինչպես նրանք, հակառակ ամեն ինչի, ավելի ու ավելի յեն խորասուզվում ապականության ճահճի մեջ: Հատկապես Ամերիկայում կարող ենք մենք ամենից ավելի լավ տեսնել, թե ինչպես ե կատարվում պետական ուժի այդ անկախացումը հասարակության հանդեպ, վորի լոկ գործիքը պետք ե լիներ նա սկզբնապես: Այնտեղ չկա դինաստիա, չկա ազնվականություն, չկա մշտական բանակ, բացի հնդկացիների վրա հսկող սակավաթիվ զինվորներից, չկա ապահոված պաշտոններով կամ կենսաթոշակի իրավունք վայելող բյուրոկրատիա: Յեվ այնուամենայնիվ մենք այստեղ ունենք քաղաքական սպեկուլյանտների յերկու մեծ վոհմակ, վորոնք փոփոխակի տիրանում են պետական իշխանությանը և շահագործում են այն ամենաստոր միջոցներով ամենացած նպատակների համար,—իսկ ազգն անզոր ե քաղաքագետների այս յերկու մեծ միությունների հանդեպ, վորոնք իբր թե ծառայում են նրան, բայց իրոք կողոպտում են նրան և իշխում նրա վրա:

Պետության և պետական որգանների՝ այս ձևով հասարակության ծառաներից հասարակության տերերի փոխակերպվելու դեմ, վոր անխուսափելի յե դարձել մինչայժմյան բոլոր պետությունների մեջ, Կոմունան յերկու անվրեպ միջոց գործադրեց: Առաջին, բոլոր պաշտոնները—ուսուցիչների, դատական գործիչ-

ների, ադմինիստրատորների — պետք է տրվեյին ընտրությամբ, քվեարկում ընտրությանը պետք է մասնակցեյին ընդհանուր ձայնավորության իրավունքով բոլոր շահագրգռված անձերը· սրանք էլ իրավունք ունեյին ուզած ժամանակ հետ կանչելու իրենց ընտրածին: Յեվ յերկրորդ — Կոմունան բոլոր ծառայությունների համար, բարձր թե ցածր, միայն մի այնպիսի աշխատավարձ եր վճարում, վոր ստանում եյին բանվորները: Ամենաբարձր ռոճիկը, վոր նա ընդհանրապես վճարում եր, 6·000 ֆրանկ եր: Դրանով ապահովապես արգելք եր հարուցվում կարյերիզմի և պաշտոնների հետևից ընկնելու առաջ, նույնիսկ առանց այն կաշկանդիչ մանդատների էլ, վոր ներկայացուցչական մարմինների պատգամավորները, բացի այդ բոլորից, ստանում եյին իրենց ընտրողներից:

Մինչայժմյան պետական իշխանության այդ պայթեցումը (Sprengung) և նրա փոխարինումը մի նոր, իսկապես դեմոկրատական իշխանությամբ՝ մանրամասն նկարագրված է «Քաղաքացիական պատերազմի» յերրորդ հատվածում: Սակայն անհրաժեշտ եր այստեղ մի անգամ էլ կարճ կերպով կանգ առնել այդ պրոցեսի միքանի գծերի վրա, վորովհետև հատկապես Գերմանիայում սնահավատությունը պետության վերաբերմամբ՝ փիլիսոփայությունից անցել է բուրժուազիայի և մինչև իսկ շատ բանվորների ընդհանուր գիտակցության մեջ: Փիլիսոփայական պատկերացման համաձայն՝ պետությունը «իդեայի իրականացումն է» կամ, փիլիսոփայական լեզվի վերածած՝ աստծու թագավորությունը յերկրի վրա, պետությունն այն տերիտորիան է, վորի վրա կենսագործվում է կամ պետք է կենսագործվի հավիտենական ճշմարտությունն ու արդարությունը: Իսկ դրանից բղխում է այնուհետև մի սնահավատ ակնածանք դեպի պետությունն ու այն ամենը, ինչ վոր կապ ունի պետության հետ. այդ ակնածանքն ավելի ևս ուժեղանում է նրանով, վոր մարդիկ յերեխայական հասակից սովորում են յերևակայել, թե ամբողջ հասարակության համար ընդհանուր գործերն ու շահերը չեն կարող ա՛յլ կերպ իրականացվել, բայց յեթե այնպես, ինչպես մինչև այժմ, այն է՝ պետության և նրա լավ վարձատրվող պաշտոնյաների միջոցով: Մարդիկ յերևակայում են, թե հսկայական հանդուգն քայլ են անում դեպի առաջ, յերբ կարողանում են ազատվել ժառանգական միապետության մասին ունեցած հավատից և անցնում են դեմոկրատական հանրապետության կողմը: Բայց իսկապես պե-



տությունը վո՛չ այլ ինչ է, յեթե վոչ մի մեքենա, վորով մի դասակարգ ճնշում է մյուսին և այն էլ՝ դեմոկրատական հանրապետության մեջ բնավ վոչ պակաս, քան միապետության մեջ: Յեվ լավագույն դեպքում պետությունը մի չարիք է, վոր իբրև ժառանգություն անցնում է դասակարգային իշխանության կռվի մեջ հաղթանակող պրոլետարիատին: Հաղթող պրոլետարիատը պետք է անխուսափելի կերպով, ինչպես և Փարիզի Կոմունան, անմիջապես վերացնի այդ չարիքի վատթարագույն կողմերը, մինչև վոր մի նոր, ազատ հասարակակարգում մեծացած սերունդ կկարողանա թոթափել իրենից պետականության այդ ամբողջ հնոտին:

Վերջին ժամանակներս սոցիալ-դեմոկրատական ֆիլիստերը կրկին սկսում է փրկարար սարսափ զգալ պրոլետարիատի դիկտատուրա բառերը լսելիս: Լավ, դո՛ւք պարոններ, ուզո՞ւմ եք արդյոք իմանալ, թե ի՛նչ է այդ դիկտատուրան: Դիտեցե՛ք Փարիզի Կոմունան: Նա պրոլետարիատի դիկտատուրան եր:

Լոնդոն,
Փարիզի Կոմունայի 20-րդ տարեդարձին,
1891 թ. մարտի 18-ին:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՉԸ ՖՐԱՆՍ-ՊՐՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ[1]

### *ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՅԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ*

---

*Բանվորների միջազգային ընկերության հիմնադրության մանիֆեստի մեջ 1864 թվականի նոյեմբերին մենք ասել ենք· «Յեթե բանվոր դասակարգի ազատագրումը պահանջում է բանվորների յեղբայրական միություն և գործակցություն, ապա ի՞նչպես կարող է բանվոր դասակարգն իրագործել այդ մեծ միսիան, քանի վոր արտաքին քաղաքականությունը՝ հանցավոր նպատակներ հետապնդելով՝ հրահրում է ազգային նախապաշարմունքները և կողոպտիչ պատերազմների մեջ թափում է ժողովրդի արյունն ու վատնում է նրա գույքը»: Յեվ մենք բնորոշեցինք Ինտերնացիոնալի ձգտած արտաքին քաղաքականությունը հետևյալ խոսքերով· «Բարոյականության և արդարության միևնույն հասարակ որենքները, վորոնք պետք է կարգավորեն հարաբերությունները մասնավոր մարդկանց միջև, պետք է դառնան այն բարձրագույն որենքները, վորոնք կարգավորում են նաև միջազգային հարաբերությունները»:*

*Զարմանալի չէ, վոր Լուի Բոնապարտը, վոր իր իշխանությունը բռնությամբ գրավեց դասակարգային պայքարը Ֆրանսիայում շահագործելու միջոցով և յերկարաձգեց այն՝ մի շարք արտաքին պատերազմների շնորհիվ,—հենց սկզբից Ինտերնացիոնալին վերաբերվեց իբրև իր ամենավտանգավոր թշնամու: Պլեբիսցիտի[2] (հանրաքվե) նախորյակին նա արշավանք է ձեռնարկում*

---

[1] *Գրված է Կ. Մարքսի կողմից և հաստատված է I Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի նիստում 1870 թվի հուլիսի 23-ին:* Խմբ.:

[2] Պլեբիսցիտ *(համաժողովրդական ձայնատվություն) սարքեց Նապոլեոն* III-*ը կայսրությունն ամրապնդելու և հանրապետական ագիտացիան յերկրում ջլատելու նպատակով: Նապոլեոնյան կայսրության կառավարական ապարատը ճնշման բոլոր միջոցները գործադրեց ընտրողների վրա, վորի հետևանքով* 1870 *թ. մայիսին անց կացրած պլեբիսցիտն ստեղծեց՝ ժողովրդի կողմից Նապոլեոն* III-*ի ձեռնարկումներին տրվող հավանության յերևույթը:*

բանվորների Միջազգային Ընկերության կարգադրիչ հանձնաժողովների անդամների դեմ Փարիզում, Լիոնում, Ռուանում, Մարսելում, Բրեստում, մի խոսքով՝ ամբողջ Ֆրանսիայում, այն պատրվակով, թե Ինտերնացիոնալը գաղտնի ընկերություն է և դավադրություն է պատրաստում՝ նրան սպանելու նպատակով. այդ հերյուրանքի անհեթեթությունը շուտով բաց արին հենց նրա սեփական դատավորները: Ո՞րն էր իսկապես Ինտերնացիոնալի ֆրանսական սեկցիաների իրական հանցագործությունը: Այն, որ նրանք բացարձակ և հաստատապես ասում էին ֆրանսական ժողովրդին, թե պլեբիսցիտի օգտին ձայն տալ՝ կնշանակի ձայն տալ ներքին բռնակալության և արտաքին պատերազմի օգտին: Յեվ իսկապես, նրանց կատարած գործն էր, որ Ֆրանսիայի բոլոր մեծ քաղաքներում, բոլոր արդյունաբերական կենտրոններում բանվոր դասակարգն իբրև մի մարդ հանդես յեկավ պլեբիսցիտի դեմ: Դժբախտաբար, բանվորների ձայները ճնշվեցին գյուղական շրջանների խոր տգիտության պատճառով: Բորսաները, պետությունների կաբինետները, տիրապետող դասակարգերը և գրեթե ամբողջ յեվրոպական մամուլը տոնում էին պլեբիսցիտի հաղթանակն իբրև ֆրանսական կայսրի փայլուն հաղթությունը ֆրանսական բանվոր դասակարգի դեմ. իսկ իրականության մեջ՝ պլեբիսցիտը ազդանշան էր ո՛չ թե մի անհատի, այլ ամբողջ ժողովուրդների սպանության:

1870 թվականի հուլիսի պատերազմական դավադրությունը[1] միայն 1851 թվականի դեկտեմբերի պետական հեղաշրջման բարեփոխված տարբերակն է հանդիսանում: Առաջին հայացքից գործն այնքան անհեթեթ էր թվում, որ Ֆրանսիան չէր ուզում հավատալ, թե պատերազմի մասին յեղած լուրերը լուրջ են: Շատ ավելի մեծ սիրով նա հավատում էր այն պատգամավորին, որը մինիստրների ռազմաշունչ ճառերի մեջ բորսայական հասարակ մանյովր էր տեսնում: Յերբ հուլիսի 15-ին, վերջապես, պատերազմի մասին պաշտոնապես հայտնվեց Օրենսդիր Մարմնին,— ամբողջ օպոզիցիան հրաժարվեց հաստատել նախնական ծախսերը. Թիերն ինքը խարանեց պատերազմն իբրև ինչ-որ «զզվելի» մի բան. Փարիզի բոլոր անկախ լրագրերը դատապարտում էին այն, և, զարմանալի չէ, գավառական մամուլը համարյա ամբողջությամբ համաձայնում էր նրանց հետ:

[1] 1870 թվի հուլիսի 19-ին սկսվեց պատերազմը Ֆրանսիայի և Գերմանիայի միջև:



Մինչ այս մինչ այն՝ Ինտերնացիոնալի Փարիզի անդամները նորից գործի կպան: «Réveil»-ի հուլիսի 12-ի համարում նրանք մանիֆեստ հրատարակեցին «բոլոր յերկրների բանվորներին», որի մեջ ասված է.

«Քաղաքական փառասիրությունը՝ ազգային պատվի և յեվրոպական հավասարակշռության պաշտպանության պատրվակով՝ կրկին սպառնում է ընդհանուր խաղաղությանը: Ֆրանսական, գերմանական և սպանական բանվորնե՛ր: Միացնենք մեր ձայներն իբրև վրդովմունքի մի ընդհանուր աղաղակ՝ պատերազմի դեմ...: Գերակշռություն ձեռք բերելու ցանկությունից առաջացած պատերազմը, կամ որևէ դինաստիայի շահերի համար մղվող պատերազմը չի կարող բանվորների աչքում որևէ այլ բան լինել, քան հանցավոր խելագարություն: Մենք, որ կարիք ունենք խաղաղության և աշխատանքի, մենք բարձրագոչ բողոքում ենք այն մարդկանց ռազմաշունչ կանչերի դեմ, ովքեր կարող են գնումով ազատվել «արյան հարկը» վճարելուց և որոնց համար հասարակական աղետը նոր սպեկուլյացիայի աղբյուր է ծառայում...: Մեր գերմանացի յեղբայրնե՛ր: Թշնամությունը մեր՝ ֆրանսական և գերմանական բանվորների միջև միմիայն այն հետևանքը կունենար, որ բռնակալությունը լիովին կհաղթանակեր Հռենոսի յերկու կողմերում...: Բոլոր յերկրների բանվորնե՛ր: Ինչ էլ որ լինեն տվյալ մոմենտում մեր ընդհանուր ջանքերի արդյունքները, մենք, Բանվորների Միջազգային Ընկերության անդամներս, որոնց համար գոյություն չունի ո՛չ մի պետական սահման, ուղարկում ենք ձեզ, իբրև անխզելի համերաշխության գրավական, Ֆրանսիայի բանվորների բարի ցանկությունները ու ողջույնը»:

Մեր Փարիզի սեկցիաների այդ մանիֆեստին հետևեցին բազմաթիվ նույնանման ֆրանսական կոչեր, որոնցից մենք կարող ենք այստեղ միայն մեկը մեջ բերել, Neuilly sur Seine [Նեյի Սենայի վրա] սեկցիայինը՝ հրատարակված «Մարսելյոզա» լրագրի հուլիսի 22-ի համարում. «Արդարացի՞ յե արդյոք այս պատերազմը: Ո՛չ: Ազգայի՞ն է արդյոք այս պատերազմը: Ո՛չ: Սա— բացառապես դինաստիական պատերազմ է: Հանուն մարդկայնության, հանուն դեմոկրատիայի, հանուն Ֆրանսիայի իսկական շահերի,—մենք ամբողջությամբ և ամենայն յեռանդով միանում ենք Ինտերնացիոնալի բողոքներին պատերազմի դեմ»:

Այդ բողոքներն արտահայտում էին ֆրանսական բան-

վորների իսկական զգացմունքները, ինչպես վոր շուտով պարզ ցույց տվեց մի բնորոշ դեպք: Յերբ սկզբնապես Լուի Բոնապարտի նախագահության ժամանակ կազմակերպված «Դեկտեմբերի 10-ի»[1] ցուցարարների վոհմակը, բանվորական բլուզներ հագցրած, փողոց դուրս բերին, վորպեսզի հնդկացիներին վայել ռազմական պարերի միջոցով հրահրի պատերազմական տենդը,—արվարձանների իսկական բանվորներն այնպիսի ազդու ցույցերով պատասխանեցին խաղաղության ոգուն, վոր վոստիկանական պրեֆեկտ Պյետրին հարկավոր համարեց միանգամից վերջ դնել ամեն տեսակ հետագա փողոցային ցույցերին, այն պատրվակով, թե փարիզյան հավատարիմ ժողովուրդն արդեն բավականաչափ արտահայտել է իր յերկար ժամանակ զսպված հայրենասիրությունը և իր անսպառ ռազմական վոգևորությունը:

Ինչով ել վերջանալու լինի Լուի Բոնապարտի պատերազմը Պրուսիայի դեմ—Փարիզում արդեն հնչել են յերկրորդ կայսրության թաղման զանգերը: Յերկրորդ կայսրությունը կվերջանա այնպես, ինչպես վոր սկսվել է—վողորմելի պարոդիայով: Բայց չպետք է մոռանալ, վոր հատկապես յեվրոպական կառավարությունները ու տիրապետող դասակարգերը հնարավորություն տվին Լուի Բոնապարտին տասնութ տարի շարունակ խաղալու յերկրորդ կայսրության ռեստավրացիայի դաժան ֆարսը:

Գերմանիայի համար այս պատերազմը պաշտպանողական պատերազմ է: Բայց ո՞վ Գերմանիային դրեց պաշտպանվելու անհրաժեշտության դրության մեջ: Ո՞վ հնարավորություն տվեց Լուի Բոնապարտին պատերազմ մղելու Գերմանիայի դեմ: Պրո՞ւսիան: Վոչ այլ վոք, բայց յեթե Բիսմարկն եր, վոր դավադրություն եր կազմում Լուի Բոնապարտի հետ, հույս ունենալով ճնշելու Պրուսիայի ներսում դեմոկրատական օպոզիցիան և ապահովելու Գերմանիան Հոհենցոլլերնների դինաստիայի համար: Յեթե Սադովայի ճակատամարտը[2] չվերջանար հաղթությամբ, այլ տանուլ տրված լիներ, ֆրանսական գումարտակները կհեղեղեյին Գերմանիան իբրև Պրուսիայի դաշնակիցներ: Մի՞թե Պրուսիան հաղթությունից հետո գեթ մի րոպե մտածեց այն մասին,

[1] Խոսքը վերաբերում է «դեկտեմբերի 10-ի ընկերությանը», վոր կազմակերպել եր Լուի Բոնապարտը բնակչության զանազան դասակարգերի տականքներից և այդպես անվանել ի հիշատակ Լուի Բոնապարտի ֆրանսական հանրապետության նախագահ ընտրվելու օրվա (1848 թ. դեկտեմբերի 10-ի):

[2] Սադովայի ճակատամարտը (Բոհեմիայում) տեղի ունեցավ 1866 թվի հուլիսի 4-ին և վերջացավ Պրուսիայի հաղթությամբ Ավստրիայի դեմ:



վոր ստրկացրած Ֆրանսիային հակադիր մի ազատ Գերմանիա: Բոլորովին ընդհակառակը: Նա յեռանդով պահպանում եր իր հին սիստեմի վաղեմի հրաշալիքները և իբրև լրացում՝ յերկրորդ կայսրությունից փոխ առավ նրա բոլոր հնարքները, նրա փաստական բռնակալությունն ու կեղծ դեմոկրատականությունը, նրա քաղաքական ձեռնածություններն ու ֆինանսական սրիկայությունները, նրա բարձրաթռիչ ֆրազները և ամենաստոր խաբեությունները: Բոնապարտական ռեժիմը, վոր մինչև այժմ ծաղկած եր միայն Հռենոսի մի ափին, այդպիսով դարձավ իր կրկնակը նրա մյուս ափին: Իսկ իրերի այդ դրության ժամանակ ել ուրիշ ի՞նչ կարելի յեր սպասել, բացի պատերազմից:

Յեթե գերմանական բանվոր դասակարգը թույլ տա, վոր տվյալ պատերազմը կորցնի իր պաշտպանողական բնույթը և վերածվի պատերազմի ֆրանսական ժողովրդի դեմ,—այն ժամանակ թե՛ հաղթությունը, թե՛ պարտությունը հավասարապես կործանարար կլինեն: Այն բոլոր դժբախտությունները, վոր կրեց Գերմանիան այսպես կոչված ազատագրական պատերազմներից հետո, կրկին կթափվեն նրա գլխին, այս անգամ ավելի մեծ դաժանությամբ:

Սակայն Ինտերնացիոնալի սկզբունքները չափազանց լայն չափով են տարածվել և չափազանց խոր արմատներ են գցել գերմանական բանվոր դասակարգի մեջ, վորպեսզի կարելի լիներ յերկյուղ կրել, թե գործն այդքան տխուր յելք կունենա: Ֆրանսական բանվորների ձայնը իր արձագանքը գտավ Գերմանիայում: Հսկայական բանվորական ժողովը Բրաունշվայգում հուլիսի 16-ին իրեն միանգամայն համերաշխ հայտարարեց Փարիզի մանիֆեստի հետ, վճռականապես մերժեց ազգային թշնամության ամեն մի միտք Ֆրանսիայի դեմ և բանաձև ընդունեց, վորի մեջ ասված է. «Մենք թշնամի յենք ամեն տեսակ պատերազմների, բայց ամենից առաջ—դինաստիական պատերազմներին...: Խորին տխրությամբ և ցավով մենք մեզ հարկադրված ենք տեսնում մասնակցելու պաշտպանողական պատերազմին, իբրև անխուսափելի չարիքի: Բայց միևնույն ժամանակ մենք կոչ ենք անում Գերմանիայի ամբողջ բանվոր դասակարգին՝ անկարելի դարձնել այնքան սոսկալի սոցիալական դժբախտության կրկնությունը, ջանալ այդ առթիվ ժողովուրդների համար իշխանություն ձեռք բերել, վորպեսզի իրենք վճռեն պատերազմի և խաղաղության հարցը, և այդպիսով ժողովուրդներին իրենց սեփական բախտի տերը դարձնեն»:

Քեմնիցում 50·000 սաքսոնական բանվորներ ներկայացնող լիազորների ժողովը միաձայն հետևյալ բանաձևն ընդունեց. «Ընդհանրապես գերմանական դեմոկրատիայի անունից և մասնավորապես սոցիալ-դեմոկրատական կուսակցության բանվորների անունից, մենք ներկա պատերազմը հայտարարում ենք բացառապես դինաստիական պատերազմ...: Ուրախությամբ սեղմում ենք ֆրանսական բանվորների մեզ մեկնած յեղբայրական ձեռքը...: Հիշելով Բանվորների Միջազգային Ընկերության լոզունգը՝ «Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք», մենք յերբեք չենք մոռանա, վոր բոլոր յերկրների բանվորները մեր բարեկամներն են, իսկ բոլոր յերկրների բռնակալները—մեր թշնամիները»:

Ինտերնացիոնալի Բեռլինի սեկցիան էլ պատասխանեց Փարիզի մանիֆեստին. «Մենք ամբողջ հոգով միանում ենք ձեր բողոքին... Մենք մեծ ուխտ ենք անում այն մասին, վոր վո՛չ փողերի ձայնը, վո՛չ թնդանոթների վորոտը, վո՛չ հաղթությունը, վո՛չ պարտությունը մեզ չեն շեղի մեր ընդհանուր գործից—բոլոր յերկրների բանվորների միացումից»:

Այդ ինքնասպան կռվի հետին պլանում յերևում է Ռուսաստանի չարագուշակ կերպարանքը: Վատ նշան է հանդիսանում այն, վոր այս պատերազմի ազդանշանը հենց այն մոմենտին տրվեց, յերբ ռուսական կառավարությունը վերջացրեց ռազմագիտական տեսակետից իրեն համար կարևոր յերկաթուղիների կառուցումը և արդեն զորքեր է կենտրոնացրել Պրուտի ուղղությամբ: Թեև գերմանացիները կարող են լիակատար իրավունքով հույս ունենալ, վոր իրենց պաշտպանողական պատերազմում Բոնապարտի հարձակման դեմ համակրանք կգտնեն,—սակայն նրանք իսկույն ևեթ կկորցնեն այդ համակրանքը, հենց վոր թույլ տան, վոր գերմանական կառավարությունը ոգնության կանչի կազակներին կամ թեկուզ միայն ընդունի նրանց ոգնությունը: Թող նրանք մտաբերեն, վոր Գերմանիան, Նապոլեոն I-ի դեմ իր անկախության համար մղած պատերազմից հետո, տասնյակ տարիներ շարունակ անզոր ընկած էր ցարի վոտքերի մոտ:

Անգլիական բանվոր դասակարգը յեղբայրաբար ձեռք է մեկնում ինչպես ֆրանսական, այնպես և գերմանական բանվորներին: Նա համոզված է, վոր՝ ինչպես էլ վերջանալու լինի առաջիկա գարշելի պատերազմը, բոլոր յերկրների բանվորների միությունը վերջիվերջո վոչնչացնելու յե ամեն պատերազմ: Այն ժամանակ, յերբ պաշտոնական Ֆրանսիան և պաշտոնական Գերմանիան յեղբայրասպան կռվի յեն նետվում միմյանց դեմ, բանվորները հաշտության և բարեկամության պատգամներ են ուղարկում միմյանց: Միայն այդ մեծ փաստն արդեն, վորը իր նմանը չունի պատմության մեջ, ավելի լուսավոր ապագայի հույսեր է ներշնչում մեզ: Նա ցույց է տալիս, վոր, իբրև հակադրություն հին հասարակությանը՝ իր տնտեսական աղքատությամբ և քաղաքական խելագարությամբ, այժմ մի նոր հասարակություն է առաջ գալիս, վորի միջազգային սկզբունքը կլինի հաշտությունը, վորովհետև բոլոր ժողովուրդների մեջ էլ կտիրապետի միևնույն սկզբունքը—աշխատանքը:

Այդ նոր հասարակության նախադուշակը Բանվորների Միջազգային Ընկերությունն է:

Լոնդոն, 23 հուլիսի 1870 թ.

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՉԸ ՖՐԱՆՍ-ՊՐՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ [1]

### *ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՅԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ*

---

*Հուլիսի 23-ին հրատարակած մեր առաջին մանիֆեստում մենք ասացինք. «Փարիզում արդեն հնչել են յերկրորդ կայսրության թաղման զանգերը: Յերկրորդ կայսրությունը կվերջանա այնպես, ինչպես վոր սկսվել է՝ վողորմելի պարոդիայով: Բայց չպետք է մոռանալ, վոր հատկապես յեվրոպական կառավարություններն ու տիրապետող դասակարգերը հնարավորություն տվին Լուի Բոնապարտին տասնութ տարի շարունակ խաղալու յերկրորդ* կայսրության ռեստավրացիայի *դաժան ֆարսը»:*

*Այսպիսով՝ նախքան պատերազմական գործողությունների սկսվելը մենք արդեն բոնապարտական սապոնի պղպջակները գիտել ենք իբրև անցյալին պատկանող գործ:*

*Մենք չենք սխալվել յերկրորդ կայսրության կենսունակության վերաբերմամբ: Մենք անիրավացի չեյինք նաև, յերբ յերկյուղ եյինք կրում, թե Գերմանիայի համար «պատերազմը կկորցնի իր զուտ պաշտպանողական բնույթը և կվերածվի մի պատերազմի՝ ֆրանսական ժողովրդի դեմ»: Պաշտպանողական պատերազմն իսկապես վերջացավ Լուի Նապոլեոնի անձնատուր լինելով, Սեդանի կապիտուլյացիայով և Փարիզում հանրապետության հռչակելով[2]: Բայց այդ դեպքերից դեռ շատ առաջ էլ, այն մոմենտին,*

---

[1] *Գրված է Կ. Մարքսի կողմից և հաստատված է I Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի նիստում 1870 թվի սեպտեմբերի 9-ին:* — Խմբ.:

[2] *Սեպտեմբերի 2-ին ֆրանսական բանակը ջարդվեց Սեդանի մոտ և կայսեր հետ միասին գերի ընկավ: Սեպտեմբերի 4-ին Ֆրանսիայում հանրապետություն հռչակվեց և նոր կառավարություն կազմվեց, այսպես կոչված՝ «ազգային պաշտպանության կառավարությունը»:*






Յերկրորդ կայսրության թաղումը:

յերբ արդեն յերևան յեկավ բոնապարտյան միլիտարիզմի փտությունը, պրուսական ռազմական կամարիլյան վճռեց պատերազմը վերածել նվաճողական պատերազմի: Ճիշտ է, Վիլհելմ թագավորի սեփական պրոկլամացիան պատերազմի սկզբում մի չափ անհաճո խոչընդոտ էր այդ պարոնների համար: Հյուսիսային-գերմանական ռայխստագին ուղղված իր գահական ճառում Վիլհելմը հանդիսավոր կերպով հայտարարել էր, թե նա պատերազմ է մղում միայն ֆրանսական կայսրի, բայց վոչ ֆրանսական ժողովրդի դեմ: Ոգոստոսի 11-ին նա ֆրանսական ազգին ուղղված մի մանիֆեստ հրատարակեց, վորի մեջ ասում էր. «Նապոլեոն կայսրը ցամաքի և ծովի վրա հարձակում գործեց գերմանական ազգի դեմ, վոր ուզում էր և այժմ էլ ուզում է խաղաղ ապրել ֆրանսական ժողովրդի հետ. յես ինձ վրա վերցրի գերմանական բանակի հրամանատարությունը, վորպեսզի հետ մղեմ նրա հարձակումը, և պատերազմական դեպքերի ընթացքն այնպես բերեց, վոր յես ստիպված եյի անցնել Ֆրանսիայի սահմանները»: Զրավականանալով այն հայտարարությամբ, վոր նա գերմանական բանակի հրամանատարությունն իր վրա յե վերցրել, «վորպեսզի հետ մղի հարձակումը», Վիլհելմը, «պատերազմի զուտ պաշտպանողական բնույթն» ավելի ևս չեշտելու համար, հարակցում էր, թե միայն «պատերազմական դեպքերի ընթացքն այն տեղը հասցրեց», վոր նա անցավ Ֆրանսիայի սահմանները: Պաշտպանողական պատերազմն, իհարկե, ամենևին չի բացառում հարձակողական գործողությունները, վորոնք թելադրվում են «պատերազմական դեպքերի ընթացքից»:

Այդպիսով՝ այդ «բարեպաշտ» թագավորը հանդիսավոր կերպով խոստացել էր Ֆրանսիայի և ամբողջ աշխարհի առաջ, վոր նա պետք է միայն զուտ պաշտպանողական պատերազմ մղեր: Ի՞նչպես պետք էր ազատել նրան այդ հանդիսավոր խոստումից: Այդ ամբողջ կատակերգության ռեժիսյորները գործն այնպես պետք է ներկայացնեյին, իբր թե նա իր կամքին հակառակ զիջում է գերմանական ժողովրդի անմերժելի թախանձագին պահանջներին. դրա համար նրանք իսկույն ևեթ համապատասխան նշանաբան տվին գերմանական լիբերալ միջին դասակարգին, իր պրոֆեսորներով ու կապիտալիստներով, իր պատգամավորներով ու լրագրողներով: Այդ միջին դասակարգը, վոր 1846—1870 թ. թ. քաղաքացիական ազատության համար մղվող կռվի մեջ չըտեսնված վախկոտություն, անվճռականություն և անընդունակություն էր հայտնաբերել, իհարկե չափազանց հիացած էր գեր-

մանական հայրենասիրության մռնչացող առյուծի այն դերով, վորով նա պետք է հանդես գար յեվրոպական թատերաբեմում: Նա հագավ քաղաքացիական անկախության դիմակը, վորպեսզի ձևանա, իբր թե նա հարկադրում է պրուսական կառավարությանը... իրագործելու հենց այդ կառավարության գաղտնի նախագծերը: Նա զղջում էր, վոր յերկար տարիներ դրեթե կրոնական հավատ էր ունեցել Լուի Բոնապարտի անսխալականության վերաբերմամբ, և այդ պատճառով էլ այժմ բարձրաձայն պահանջում էր ֆրանսական հանրապետությունը մաս-մաս անել: Գեթ մի րոպե կանգ առնենք այն ուշագրավ փաստարկումների վրա, վոր ասպարեզ հանեցին «հայրենասիրության» այդ ասպետները:

Նրանք չեն համարձակվում պնդել, թե Ելզաս-Լոթարինգիայի բնակչությունը տենչում է ընկնել Գերմանիայի գիրկը: Բոլորովին հակառակը: Վորպեսզի պատժեն Ստրասբուրգը դեպի Ֆրանսիան տածած իր հայրենասիրական զգացմունքների համար, նրան յենթարկում են անողոք և բարբարոսական—վորովհետև ռազմագիտական տեսակետից կարևոր էր վո՛չ թե քաղաքը, այլ ինքնուրույն ընկած ցիտադելը, ռմբակոծության վեց օր շարունակ «գերմանական» պայթուցիկ ռումբերով, հրդեհում են քաղաքը և սպանում բազմաթիվ անպաշտպան բնակիչների: Իհա՛րկե: Այդ յերկրամասերի հողը յերբեմն պատկանել է շատ վաղուց մեռած Գերմանական կայսրությանը: Արդյոք հարկ չէ՞ր լինի այդ հիման վրա բռնագրավել ամբողջ յերկրագունդն իր բնակչությամբ, իբրև դեռ իր վաղեմությունը չկորցրած գերմանական սեփականություն: Չէ՞ վոր յեթե վերականգնենք Յեվրոպայի հին քարտեզը հնության սիրահարների կապրիզի համաձայն, ապա պետք չէ վո՛չ մի դեպքում մոռանալ, վոր իր ժամանակին Բրանդենբուրգի կուրֆյուրստը իբրև պրուսական տիրակալ իշխան Լեհական հանրապետության վասալն է յեղել:

Սակայն ճկուն հայրենասերները Ելզասն ու գերմանական Լոթարինգիան պահանջում են իբրև «նյութական յերաշխիք» ֆրանսիական հարձակումների դեմ: Վորովհետև այդ զարշելի պատրվակը խառնաշփոթություն է սերմանել բազմաթիվ թուլամիտ մարդկանց գլուխներում, մենք մեր պարտքն ենք համարում ավելի մանրամասն կանգ առնել նրա վրա:

Կասկած չկա, վոր Ելզասի և Հռենոսի հակադիր ափի ընդհանուր գիծը, ինչպես նաև Ստրասբուրգի նման խոշոր բերդի առկայությունը Բազելի և Գերմերսհայմի միջև ընկած ճանա-



պարհի գրեթե հենց մեջտեղում, խիստ հեշտացնում է Ֆրանսիայի համար Հարավային Գերմանիա ներխուժելը, մինչդեռ Հարավային Գերմանիայի համար, այդ նույն պատճառով, դժվար է Ֆրանսիա ներխուժելը: Ապա՝ կասկած չկա նաև, վոր Ելզասի և գերմանական Լոթարինգիայի կցումը սաստիկ կուժեղացներ Հարավային Գերմանիայի սահմանները. նա այն ժամանակ կկարողանար տնորինել Վոգեզյան լեռնաշղթայի ամբողջ յերկարությամբ և տիրանալ այն բերդերին, վորոնք փակում են նրա հյուսիսային անցքերը: Յեթե կցվեր նաև Մեցը, Ֆրանսիան այժմ, անկասկած, կզրկվեր յերկու ամենակարևոր ոպերացիոն բազաներից Գերմանիայի դեմ, բայց այդ նրան չէր խանգարի նորերն ստեղծել Նանսիի կամ Վերդենի մոտ: Գերմանիան ունի Կոբլենցը, Մայնցը, Գերմերսհայմը, Ռաշտադտը և Ուլմը—բոլորն էլ ոպերացիոն բազաներ՝ ուղղված հատկապես Ֆրանսիայի դեմ: Գերմանիան վերջին պատերազմում հիանալի կերպով օգտվեց նրանցից: Իրավունքի ի՞նչ նույնիսկ ստվերով կարող է նա նախանձել Ֆրանսիային, վոր այդ մարզում միայն յերկու խոշոր բերդ ունի—Մեցն ու Ստրասբուրգը:

Բացի դրանից, Ստրասբուրգն սպառնում է Հարավային Գերմանիային միայն մինչև այն ժամանակ, քանի նա բաժանված է Հյուսիսային Գերմանիայից: 1792-ից մինչև 1795 թվականները Հարավային Գերմանիան վո՛չ մի անգամ հարձակման չենթարկվեց այդ կողմից, վորովհետև Պրուսիան մասնակցում էր ֆրանսիական հեղափոխության դեմ մղվող պատերազմին: Բայց հենց վոր Պրուսիան 1795 թվին սեպարատ հաշտություն կնքեց և Հարավն իր բախտին թողեց, այն ժամանակ հարձակումներն սկսվեցին Հարավային Գերմանիայի վրա և շարունակվեցին մինչև 1809 թիվը, և այս դեպքում Ստրասբուրգն իբրև ոպերացիոն բազա յեր ծառայում: Ըստ եյության՝ Միացյալ Գերմանիան կարող է միշտ անվտանգ դարձնել Ստրասբուրգը և ամեն մի ֆրանսական բանակ Ելզասում, յեթե նա իր բոլոր զորքերը կենտրոնացնի Սաարլուիի և Լանդաուի միջև, ինչպես այդ յեղավ ներկա պատերազմի ժամանակ, և այնտեղից առաջ շարժի այն կամ ընդունի ճակատամարտը Մայնցից դեպի Մեց տանող ճանապարհի վրա: Յեթե գերմանական զորքերի գլխավոր մասսան այնտեղ է գտնվում, Ստրասբուրգից Հարավային Գերմանիա մտնող ֆրանսիական ամեն զորաբանակ յենթակա յե շրջանցման և բազայից կտրվելու վտանգին: Յեթե վերջին կամպանիան վորևէ բան

ապացուցեց, ապա նա ապացուցեց միայն Գերմանիայից Ֆրանսիայի վրա հարձակվելու հեշտությունը:

Բայց, ազնվաբար դատելով, մի՞թե առհասարակ անհեթեթ քան և անախրոնիզմ չէ ռազմական կշռադատությունները սկզբունքի վերածել, որոնց համաձայն պետք է որոշվեն ազգային սահմանները: Եթե հետևենք այդ կանոնին, ապա Ավստրիան կարող էր դեռևս պահանջել Վենետիկն ու Մինչո գետի գիծը, իսկ Ֆրանսիան—Հռենոսի գիծը, Փարիզը պաշտպանելու համար, որը, անկասկած, ավելի յե յենթակա հարձակման վտանգի հյուսիս-արևելքից, քան թե Բեռլինը—հարավ-արևմուտքից: Եթե ազգային սահմանները որոշվեյին ռազմական շահերի տեսակետից, ապա պրետենզիաներին վերջ չէր լինի, որովհետև ամեն մի ռազմական գիծ անհրաժեշտաբար ունի իր պակասությունները և կարող է բարելավվել նոր յերկրամասեր կցելու միջոցով. բացի դրանից էլ՝ այդ սահմանները յերբեք կարելի չէր լինի վերջնականապես և արդար կերպով հաստատել, որովհետև ամեն անգամ հաղթողը պարտվածին կթելադրեր իր պայմանները, և, հետևաբար, այստեղ արդեն դրված կլիներ նոր պատերազմի սաղմը:

Ամբողջ ազգերի հետ էլ նույնն է պատահում, ինչ որ առանձին անհատների հետ—այդ է ուսուցանում մեզ ամբողջ պատմությունը: Հարձակման հնարավորությունը նրանց ձեռքից խլելու համար՝ հարկավոր է զրկել նրանց պաշտպանության բոլոր միջոցներից: Հարկավոր է ո՛չ միայն բռնել նրանց կոկորդից, այլև սպանել նրանց: Եթե յերբևիցե որևէ հաղթող ձգտել է «նյութական յերաշխիքներ» ձեռք բերել՝ ազգի ուժը կոտրելու համար,—ապա այդ բանն արել է Նապոլեոն I իր Տիլզիտի դաշնագրով[1] և նրանով, թե ինչպես էր գործադրում նա այդ դաշնագիրը Պրուսիայի և մնացած Գերմանիայի նկատմամբ: Յեվ այնուամենայնիվ, մի քանի տարի անց, նրա ամբողջ հսկայական զորությունը գերմանական ժողովրդի առաջ ցրվեց ինչպես ծուխ: Ի՞նչ են ներկայացնում իրենցից այն «նյութական յերաշխիքները», որ Պրուսիան իր ամենակատաղի ցնորքների մեջ հույս ունի ձեռք բերելու Ֆրանսիայից այն յերաշխիքների համեմատությամբ, որ Նապոլեոն I ստացավ Գերմանիայից իրենից: Հետևանքներն այս անգամ ևս ավելի պակաս կործանարար չեն լինի: Պատմությունը կհատուցանի ո՛չ թե Ֆրանսիայից կտրված հողի քառակուսի մղոնների թվի համաձայն, այլ ոճրագործության մեծության համաձայն, որի էությունն այն է, որ XIX դարի յերկրորդ կեսին նորից կյանքի կոչեցին նվաճումների քաղաքականությունը:

[1] Տիլզիտի հաշտությունը կնքվեց 1807 թ. մի կողմից Ֆրանսիայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Պրուսիայի միջև Պրուսիայի ռազմական ջախջախումից հետո:



Տևտոնական հայրենասիրության պաշտպաններն ասում են. բայց դուք չպետք է շփոթեք գերմանացիներին ֆրանսացիների հետ: Մենք փառք չենք կամենում, այլ միայն անվտանգություն: Գերմանացիները—ըստ էության խաղաղասեր ժողովուրդ են: Իրենց խոհական պաշտպանությամբ նրանք մինչև անգամ նվաճումներն ապագա պատերազմի պատճառներից հավիտենական խաղաղության գրավականի յեն վերածում: Իհա՛րկե, Գերմանիան չէր, որ 1792 թվին իր զորքերը Ֆրանսիայի վրա շարժեց՝ սվինների օգնությամբ XVIII դարի հեղափոխությունը վոչնչացնելու վսեմ նպատակով: Կարծես թե Գերմանիան չէր, որ իր ձեռքերը կեղտոտեց Իտալիային ստրկացնելու, Հունգարիային ընկճելու և Լեհաստանը բաժանելու ժամանակ: Նրա ներկա միլիտարիստական սիստեմը, որի շնորհիվ ամբողջ առողջ արական բնակչությունը յերկու մասի յե բաժանվում—մշտական զորաբանակ ծառայության մեջ և յերկրորդ մշտական պահեստի զորաբանակ,—ըստ որում յերկուսն էլ դատապարտված են առանց որևէ առարկության յենթարկվելու իրենց՝ աստծու ողորմությամբ կարգված իշխանությանը,—այդ սիստեմն իհա՛րկե ընդհանուր խաղաղության «նյութական յերաշխիք» է հանդիսանում, և բացի դրանից՝ քաղաքակրթության բարձրագո՛ւյն նպատակը: Գերմանիայում, ինչպես և ամենուրեք, իշխանություն ունեցողների արբանյակները հասարակական կարծիքը թունավորում են խնկարկությամբ և կեղծ ինքնապարծությամբ:

Նրանց, գերմանական այդ հայրենասերներին, շատ են գըրգռում Ֆրանսիական Մեց և Ստրասբուրգ բերդերը, բայց նրանք ո՛չ մի անարդարացի բան չեն տեսնում ռուսական ամրությունների հսկայական սիստեմի մեջ, ինչպիսիներն են՝ Վարշավան, Մոդլինը և Իվանգորոդը: Սոսկալով բոնապարտյան հարձակումների սարսափների առաջ՝ նրանք աչքերը փակում են և չեն տեսնում ցարական խնամակալական իշխանության ամբողջ խայտառակությունը:

Ճիշտ այնպես, ինչպես որ 1865 թվին Բիսմարկն ու Լուի Բոնապարտը խոստումներ արին միմյանց, 1870 թվին նույնը տե-

դի ունեցավ Բիսմարկի և Գորչակովի միջև: Ճիշտ այնպես, ինչպես վոր Լուի Նապոլեոնը իրեն որոշում եր այն հույսով, թե 1866 թվականի պատերազմը, սպառելով յերկու կողմերի—Ավստրիայի և Պրուսիայի—ուժերը, իրեն կդարձնի Գերմանիայի բախտը տնօրինողը, այդպես էլ Ալեքսանդրն եր որոշում իրեն այն հույսով, թե 1870 թվականի պատերազմը՝ սպառելով Ֆրանսիայի և Գերմանիայի ուժերը՝ իրեն հնարավորություն կտա տնօրինելու ամբողջ Արևմտյան Յեվրոպայի բախտը: Ճիշտ այնպես, ինչպես վոր յերկրորդ կայսրությունն իր գոյությունն անկարելի յեր համարում Հյուսիսային-Գերմանական Միության գոյության հետ միասին,—այդպես էլ ինքնակալական Ռուսաստանն իրեն համար վտանգ պետք է զգար գերմանական պետության կողմից Պրուսիայի ղեկավարությամբ: Այդ—հին քաղաքական սիստեմի օրենքն է: Այդ սիստեմի շրջանակներում մի պետության շահը մյուսի համար տանուլ տալ է հանդիսանում: Ցարի գերակշռող ազդեցությունը Յեվրոպայում հիմնված է Գերմանիայի վրա նրա ունեցած ավանդական գլխավորության վրա: Այն մոմենտին, յերբ հրաբխային սոցիալական ուժերը բուն Ռուսաստանում սպառնում են ցնցել ինքնակալության ամենախոր հիմքերը, կարո՞ղ է արդյոք ցարը թույլ տալ, վոր թուլանա իր արտաքին հզորությունը: Մոսկվայի թերթերն արդեն խոսում են այն լեզվով, վորով խոսում եյին բոնապարտյան լրագրերը 1866 թվականի պատերազմից հետո: Մի՞թե տևտոնական հայրենասերները իսկապես կարծում են, թե ազատությունն ու խաղաղությունը Գերմանիայի համար ապահովված կլինի, յեթե նրանք հարկադրեն Ֆրանսիային Ռուսաստանի գիրկն ընկնել: Յեթե պատերազմական բախտը, իր հաջողություններով հարբած լինելը և դինաստիական ինտրիգները Գերմանիային մղեն դեպի ֆրանսական մարզերը բռնագրավելով յուրացնելու ուղին,—ապա նրան միայն յերկու ճանապարհ կմնա: Կա՛մ նա պետք է, ինչպես էլ վոր լինի, դառնա ռուսական նվաճողական քաղաքականության բացարձակ գործիքը, կամ նա պետք է կարճատև հանգստից հետո նորից պատրաստվել մի այլ «պաշտպանողական» պատերազմի, վո՛չ թե այսպես կոչված «լոկալացված» պատերազմներից մեկին, վորոնք հանդիսանում են վերջին ժամանակի հայտնագործումը, այլ ցեղային պատերազմի, մի պատերազմի սլավոնական և ռոմանական միացած ցեղերի դեմ:

Գերմանական բանվոր դասակարգը, հնարավորություն չունենալով խանգարելու այդ պատերազմը, յեռանդուն կերպով պաշտպանում եր այն իբրև Գերմանիայի անկախության համար մղվող պատերազմ, մի պատերազմ, վոր մղվում է Ֆրանսիայի և ամբողջ Յեվրոպայի ազատագրման համար՝ յերկրորդ կայսրության ճնշող լծից: Գերմանական արդյունաբերական բանվորները գյուղական բանվորների հետ միասին կազմում եյին հերոսական զորքերի կորիզը, մինչդեռ նրանց կիսաքաղց ընտանիքները մնում եյին տանը: Բացի աղետներից ռազմի դաշտում արտասահմանում, նրանց վոչ պակաս մեծ աղետներ են սպասում տանը—աղքատությունից: Յեվ նրանք այժմ, իրենց հերթին «յերաշխիքներ» են պահանջում, յերաշխիքներ, վոր նրանց անհամար զոհաբերությունները իզուր չեն յեղել, վոր նրանք իսկապես ազատություն են ձեռք բերել, վոր նրանց տարած հաղթությունները Բոնապարտի բանակների դեմ՝ չեն վերածվի գերմանական ժողովրդի պարտության, ինչպես յեղավ 1815 թվին: Յեվ իբրև առաջին այդպիսի յերաշխիք՝ նրանք պահանջում են պատվավոր հաշտություն Ֆրանսիայի համար և ֆրանսական հանրապետության ճանաչումը:

Գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտեն հոկտեմբերի 5-ին մի մանիֆեստ հրատարակեց, վորի մեջ նա յեռանդով պնդում եր այդ յերաշխիքների վրա: «Մենք,—ասում եր նա,—բողոքում ենք Էլզաս-Լոթարինգիայի կցման դեմ: Յեվ մենք գիտակցում ենք, վոր խոսում ենք գերմանական բանվոր դասակարգի անունից: Հանուն Ֆրանսիայի և Գերմանիայի ընդհանուր շահերի, հանուն խաղաղության և ազատության շահերի, հանուն արևմտա-յեվրոպական քաղաքակրթության արևելյան բարբարոսության դեմ կռվելու շահերի, գերմանական բանվորները լուռ կերպով չեն հանդուրժի Էլզաս-Լոթարինգիայի կցումը...: Մենք հավատարիմ կմնանք մեր ընկերների, մյուս յերկրների բանվորների հետ, պրոլետարիատի ընդհանուր միջազգային գործի համար»:

Դժբախտաբար, մենք չենք կարող հույս ունենալ նրանց անմիջական հաջողության վրա: Յեթե ֆրանսական բանվորները չկարողացան խաղաղ ժամանակ կանգնեցնել հարձակվող կողմին, արդյոք գերմանական բանվորներն ավելի՞ շանսեր ունեն հաղթողին կանգնեցնելու պատերազմական տենդի ժամանակ: Գերմանական բանվորների մանիֆեստը պահանջում է Լուի Բոնապարտին իբրև սովորական վոճրագործի հանձնել ֆրանսական հան-

բռնապետության ձեռքը: Իսկ նրանց շահագործողները բոլոր ուժերով աշխատում են նրան կրկին բազմեցնել Տյուիլրիի գահը, իբրև ամենահարմար մարդը՝ Ֆրանսիային դեպի կործանում տանելու համար: Ինչպես էլ վոր լինի, պատմությունը ցույց կտա, վոր գերմանական բանվորներն այնպիսի թառամած նյութից չեն ստեղծված, ինչպես գերմանական միջին դասակարգը: Նրանք կըկատարեն իրենց պարտքը:

Նրանց հետ միասին մենք վողջունում ենք հանրապետության հաստատումը Ֆրանսիայում, բայց միևնույն ժամանակ մեզ հուզում են այնպիսի յերկյուղներ, վոր, հույս ունենանք, թե անհիմն դուրս կգան: Այդ հանրապետությունը չտապալեց գահը, այլ միայն բռնեց նրա թողած դատարկ տեղը: Նա հայտարարված է ո՛չ իբրև սոցիալական նվաճում, այլ իբրև ազգային պաշտպանության միջոց: Նա գտնվում է ժամանակավոր կառավարության ձեռքերում, վոր կազմված է մասամբ ակներև որլեանիստներից, մասամբ բուրժուական հանրապետականներից. իսկ այդ վերջիններից միքանիսի վրա 1848 թվականի հունիսյան ապստամբությունը անջնջելի բիծ է թողել: Աշխատանքի բաժանումը այդ կառավարության անդամների միջև շատ քիչ լավ բան է խոստանում: Որլեանիստները գրավել են ուժեղագույն դիրքերը—բանակն ու վոստիկանությունը, մինչդեռ կարծեցյալ հանրապետականներին տրամադրել են շաղակրատելու ֆունկցիան: Այդ կառավարության միքանի առաջին քայլերը բավական պարզ ցույց են տալիս, վոր նա կայսրությունից ժառանգել է ո՛չ միայն ավերակների մի կույտ, այլև նրա վախը՝ բանվոր դասակարգի հանդեպ: Յեթե նրանք այժմ հանրապետության անունից մեծադղորդ խոստումներ են անում անկարելի բաների մասին, արդյոք այդ չի՞ արվում նրա համար, վորպեսզի աղմուկ առաջ բերվի «հնարավոր» կառավարության ոգտին: Արդյոք հանրապետությունը բուրժուաների աչքում, վորոնք սիրով նրա գերեզմանափորները կդառնային, չի՞ հանդիսանում միայն մի անցման աստիճան դեպի որլեանիստական ռեստավրացիան:

Այսպիսով, ֆրանսական բանվոր դասակարգն ամենադժվարին դրության մեջ է գտնվում: Նոր կառավարությունը տապալելու ամեն մի փորձ, այն ժամանակ, յերբ թշնամին գրեթե արդեն Փարիզի դռներն է ծեծում, հուսահատ խելագարություն կլիներ: Ֆրանսական բանվորները պետք է կատարեն իրենց քաղաքացիական պարտքը, բայց նրանք չպետք է թույլ տան, վոր 1792



КОМОՒՆԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՊԼԱԿԱՏԸ




Կոմունա.— Յես ուզում եմ ազատ լինել:
Այդ իմ իրավունքն է, և յես պաշտպանվում եմ:

թվի ազգային տրադիցիաները իրենց հրապուրեն, ինչպես ֆրանսական գյուղացիները թույլ տվին խաբելու իրենց առաջին կայսրության ազգային տրադիցիաներով։ Նրանց հարկավոր է ո՛չ թե անցյալը կրկնել, այլ ապագան կառուցել։ Թող նրանք հանգիստ և վճռական կերպով օգտվեն այն բոլոր միջոցներից, որ տալիս է նրանց հանրապետական ազատությունը, որպեսզի ավելի հիմնավոր կերպով ամրապնդեն իրենց սեփական դասակարգի կազմակերպությունը։ Այդ բանը նրանց նոր հերկուլեսյան ուժեր կտա պայքարելու Ֆրանսիայի վերածնության և պրոլետարիատի ազատագրության մեր ընդհանուր գործի համար։ Նրանց զորությունից և իմաստությունից է կախված հանրապետության բախտը։

Անգլիական բանվորներն արդեն որոշ քայլեր արին այն ուղղությամբ, որպեսզի դրսից առողջ ճնշումն գործ դնելով՝ կոտրեն իրենց կառավարության՝ ֆրանսական հանրապետությունը ճանաչելու դժկամությունը։ Անգլիական կառավարությունն այժմյան դանդաղկոտությամբ, յերևի, ուզում է քավել 1792 թվի հակայակոբինյան պատերազմը և այն անվայելուչ փութկոտությունը, որով նա ճանաչեց Նապոլեոնի պետական հեղաշրջումը։ Անգլիական բանվորները, բացի դրանից, իրենց կառավարությունից պահանջում են, որ նա բոլոր ուժերով հակառակի Ֆրանսիան անդամահատելուն, որ անամոթ կերպով պահանջում է անգլիական մամուլի մի մասը։ Այդ հենց այն մամուլն է, որն ամբողջ քսան տարի շարունակ աստվածացնում է Լուի Բոնապարտին իբրև Յեվրոպայի նախախնամությունը և որը խանդավառությամբ ծափահարում էր ամերիկյան ստրկատերերի ապստամբությունը։ Այժմ, ինչպես և այն ժամանակ, նա պայքարում է ստրկատերերի օգտին։

Թող Բանվորների Միջազգային Ընկերության սեկցիաները բոլոր յերկրներում բանվոր դասակարգին գործոն յելույթի հրավիրեն։ Յեթե բանվորները մոռանան իրենց պարտքը, յեթե նրանք պասիվ մնան, այս սոսկալի պատերազմը կդառնա նոր, է՛լ ավելի սարսափելի միջազգային պատերազմների առաջընթացը և ամեն մի յերկրում առաջ կբերի նոր հաղթանակներ բանվորների դեմ՝ սուսերի, կապիտալի և հողատիրության տապետների կողմից։

Vive la République! [Կեցցե՛ հանրապետությունը]։

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ [1]

## *ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՅԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ*

---

### I

1870 *թ. սեպտեմբերի 4-ին, յերբ Փարիզի բանվորները հանրապետություն հռչակեցին, վոր գրեթե նույն րոպեին, առանց նույնիսկ մի ձայնի ընդդիմության, հրճվանքով վողջունեց ամբողջ Ֆրանսիան,—այդ ժամանակ փառասեր փաստաբանների մի վոհմակ, վորոնց քաղաքական գործիչը Թիերն եր, իսկ գեներալը՝ Տրոշյուն, գրավեց քաղաքային տունը: Այս մարդիկ այն ժամանակ այնքան տոգորված եյին մոլեռանդ հավատով, թե Փարիզի կոչումն ե պատմական ճգնաժամերի բոլոր դարաշրջաններում ներկայացնել ամբողջ Ֆրանսիան, վոր նրանք, իրենց բռնությամբ յուրացրած՝ Ֆրանսիայի կառավարիչներ լինելու տիտղոսն արդարացնելու համար միանգամայն բավական եյին համարում ցույց տալ իրենց ժամանակին անցկացրած մանդատները Փարիզի պատգամավորներ լինելու մասին: Մեր յերկրորդ կոչում վերջին պատերազմի մասին, ընդամենը հինգ որ անց այս մարդկանց գործի գլուխ կանգնելուց, մենք բացատրեցինք ձեզ, թե ովքեր եյին նրանք: Սակայն անակնկալ հարձակման յենթարկված, յերբ բանվորների իսկական առաջնորդները դեռ Բոնապարտի բանտերում եյին նստած, իսկ պրուսացիներն արագ մարշի մեջ եյին Փարիզի վրա, Փարիզը թույլ տվեց, վոր այդ մարդիկ գրավեն*

[1] *Գրված ե Կ. Մարքսի կողմից ու հաստատված ե* I *Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի նիստում* 1871 *թ. մայիսի* 30*-ին: Խմբ.:*



*պետական իշխանությունը. բայց միայն այն վորոշակի պայմանով, վոր նրանք այդ պետական իշխանությունը ոգտագործեն բացառապես ազգային պաշտպանության նպատակների համար: Իսկ Փարիզը հնարավոր չեր պաշտպանել, առանց նրա բանվոր դասակարգն սպառազինելու, նրան մի պիտանի պատերազմական ուժ դարձնելու և նրա շարքերը հենց պատերազմի միջոցով պատերազմին վարժեցնելու: Սակայն զինել Փարիզը նշանակում եր զինել հեղափոխությունը: Փարիզի հաղթությունը պրուսական նվաճողների դեմ՝ ֆրանսական բանվորների հաղթանակը կլիներ ֆրանսական կապիտալիստների և նրա պետական պարազիտների դեմ: Ազգային պարտականության և դասակարգային շահի այս յերկպառակության մեջ ազգային պաշտպանության կառավարությունը վո՛չ մի վայրկյան չտատանվեց—նա փոխարկվեց և դարձավ ազգային դավաճանության կառավարություն:*

*Առաջին գործը, վոր նա կատարեց, այն եր, վոր նա Թիերին ուղարկեց ճանապարհորդելու բոլոր յեվրոպական արքունիքները, այնտեղ միջնորդություն աղերսելու համար, իր կողմից պարտավորվելով դրա փոխարեն հանրապետությունը փոխել թագավորի հետ: Փարիզի պաշարումն սկսվելուց չորս ամիս հետո նա համարեց, վոր ժամանակն յեկել ե արտասանելու կապիտուլյացիայի առաջին խոսքը. Տրոշյուն, Ժյուլ Ֆավրի և կառավարության մյուս անդամների ներկայությամբ, դիմեց Փարիզի միատեղ հավաքված մերերին (քաղաքամասերի քաղաքագլուխներին) հետևյալ խոսքերով.*

*«Առաջին հարցը, վոր դրին իմ առաջ իմ ընկերները սեպտեմբերի 4-ի հենց նույն յերեկոյան, հետևյալն եր. կարո՞ղ ե Փարիզը, վորևե հույս ունենալով հաջողության վրա, դիմանալ պրուսական զորքերի պաշարմանը: Յես առանց տատանվելու բացասական պատասխան տվի այդ հարցին: Այստեղ ներկա գտնվող իմ ընկերներից շատերը կհաստատեն իմ խոսքերի ճշմարտությունը, այլև այն, վոր յես չարունակ մնացել եմ նույն կարծիքին: Յես նրանց ասացի, հենց այս նույն խոսքերով, վոր Փարիզը պրուսական պաշարման դեմ պաշտպանելու փորձը՝ հիմարություն ե: Անկասկած, ավելացրի յես, մի հերոսական հիմարություն, բայց հենց միայն այդքան....: Դեպքերը (վոր նա ինքն եր ղեկավարում) իմ կանխատեսությունը սուտ դուրս չբերին»: Տրոշյուի այս սիրունիկ փոքրիկ ճառը հետագայում հրատարակեց ներկա գտնվող մերերից մեկը՝ Կորբոնը:*

Ուրեմն, հանրապետություն հայտարարելու յերեկոյան իսկ Տրոշյուի ընկերներին հայտնի յեր, վոր Տրոշյուի «պլանը» Փարիզի կապիտուլյացիան ե: Յեթե ազգային պաշտպանությունն ավելի բան լիներ, քան լոկ մի պատրվակ Թիերի, Ֆավրի և կոմպանիայի անձնական իշխանության համար,—սեպտեմբերի 4-ին պատահականորեն շարժման գլուխը բարձրացածները սեպտեմբերի 5-ին պետք ե հրաժարվեյին իշխանությունից, Փարիզի ժողովրդին հայտնեյին Տրոշյուի «պլանը» և նրան առաջարկեյին կա՛մ անմիջապես անձնատուր լինել, կա՛մ իր սեփական բախտն իր ձեռքը վերցնել: Փոխանակ այդ անելու՝ պատվից զուրկ այդ խաբեբաները վճռեցին Փարիզի «հերոսական հիմարությունը» բուժել սովով և արյունով, իսկ առժամանակ հիմարացնել նրան փքված մանիֆեստներով, ինչպես որինակ «Տրոշյուն, Փարիզի գուբերնատորը, յերբե՛ք անձնատուր չի լինի» գրված եր այդ մանիֆեստներից մեկում: «Ժյուլ Ֆավրը, արտաքին գործերի մինիստրը յերբե՛ք չի զիջի վո՛չ մի թիզ մեր հողից, և վո՛չ մի քար մեր բերդերից»: Բայց նույն Ժյուլ Ֆավրը Գամբետտային գրած մի նամակում խոստովանում ե, վոր նրանք «պաշտպանվում» են վո՛չ թե պրուսական զինվորներից, այլ Փարիզի բանվորներից: Ամբողջ պաշարման ընթացքում բոնապարտիստական ավազակները, վորոնց Տրոշյուն կանխահոգությամբ վստահացել եր Փարիզի զորքերի հրամանատարությունը, իրենց մտերմական նամակագրության մեջ լպիրշ կերպով ծաղրի եյին յենթարկում պաշտպանության այդ ձևը, վորի իմաստը նրանք լավ եյին հասկանում: (Տեսե՛ք որինակի համար Պատվո Լեգիոնի մեծ խաչի կավալեր, Փարիզի զորքերի հրետանու գլխավոր հրամանատար Ալֆոնս Սիմոն Գիոյի նամակագրությունը հրետանու դիվիզիոնի գեներալ Սյուզանի հետ, մի նամակագրություն, վոր հրատարակվեց Կոմունայի կողմից): Վերջապես, 1871 թ. հունվարի 28-ին խաբեբաները վար առան իրենց դիմակները: Ազգային պաշտպանության կառավարությունը Փարիզի կապիտուլյացիայի ժամանակ հանդես յեկավ ամենածայրահեղ ինքնաստորացման ամբողջ հերոսությամբ, նա հանդես յեկավ իբրև Բիսմարկի գերիներից բաղկացած Ֆրանսիայի կառավարությունը,—այնքան ստոր մի դեր, վորը չհամարձակվեց վերցնել իր վրա նույնիսկ Լուի Նապոլեոնը Սեդանում: Մարտի 18-ից հետո, իրենց խուճապային փախուստի ժամանակ դեպի Վերսալ, «կապիտուլյանտներն» իրենց դավաճանությունն ապացուցող վավերագրերը Փարիզում թողին: Այդ փաստաթղթերը վոչնչացնելու համար,—



ստում ե Կոմունան դավառներին ուղղած իր մանիֆեստներից մեկում,—«այդ մարդիկ կանգ չեյին առնի Փարիզն ավերակների կույտի վերածելու և այն արյան ծովով հեղեղելու առաջ»:

Բայց գործին այդպիսի վերջավորություն տալու համար ազգային պաշտպանության կառավարության գլխավոր անդամներից շատերը բացի դրանից ունեյին նաև բոլորովին հատուկ անհատական պատճառներ:

Զինադադար կնքելուց քիչ հետո՝ Ազգային ժողովի Փարիզի պատգամավոր Միլյերը, վոր այժմ գնդակահարված ե Ժյուլ Ֆավրի հատուկ հրամանով, մի շարք իսկական իրավաբանական փաստաթղթեր հրատարակեց, ապացուցելու համար, վոր Ժյուլ Ֆավրը՝ վայրի ամուսնությամբ ապրելով Ալժիրում բնակված մի հարբեցողի կնոջ հետ, մեծ քանակությամբ և յերկար տարիներ շարունակվող չափազանց հանդուգն կեղծիքների միջոցով՝ իր անառակությունից ծնված յերեխաների անունով մեծ ժառանգություն ե հափշտակել և դրանով հարուստ մարդ ե դարձել, իսկ որինական ժառանգների նրա դեմ բաց արած պրոցեսի ժամանակ նա կեղծիքների մեջ բռնվելուց ազատվել ե միայն նրանով, վոր բոնապարտիստական դատարաններն առանձնապես բարեհաճ վերաբերմունք են ցույց տվել նրան: Վորովհետև այս չոր, դատաստանական փաստաթղթերի դեմ վոչինչ չեր կարելի անել, և ինչպիսի ճարտասանություն ել լիներ, նրա դեմ անզոր կլիներ, դրա համար ել Ժյուլ Ֆավրն առաջին անգամ իր կյանքում բերանն իրեն պահեց և հանդիստ կերպով սպասում եր քաղաքացիական պատերազմի բռնկմանը, վորպեսզի Փարիզի ժողովրդին կատաղաբար հայհոյի՝ իբրև բանտերից փախած վոճրագործների վոհմակ, վորոնք կատարյալ ապստամբություն են բարձրացրել ընտանիքի, կրոնի, կարգի և սեփականության դեմ: Յեվ հենց այս կեղծարարը հազիվ եր իշխանություն ձեռք գցել, յերբ նա, սեպտեմբերի 4-ից անմիջապես հետո, յեղբայրական զգացմունքից դրդված՝ ազատ արձակեց Պիկին և Տայեֆերին, վորոնք նույնիսկ կայսրության ժամանակ դատապարտվել եյին կեղծիք կատարելու համար «Etendard» լրագրի խայտառակ պատմության ժամանակ: Այդ պատվարժան պարոններից մեկը, Տայեֆերն, այնքան հանդուգն եր, վոր Կոմունայի ժամանակ Փարիզ վերադարձավ, բայց Կոմունան իսկույն ևեթ բանտ դրեց նրան: Յեվ դրանից հետո Ժյուլ Ֆավրն Ազգային ժողովի ամբիոնից հայտարարեց ամբողջ աշխարհին, թե փարիզեցիները բանտերից արձակել են բոլոր տաժանակիրներին:

Երնեստ Պիկարը—ազգային պաշտպանության կառավարության Դժո Միլլերը[1],—վոր կայսրության ներքին գործերի մինիստր դառնալու ապարդյուն փորձերից հետո այժմ ինքն իրեն նշանակել էր հանրապետության ֆինանսների մինիստր,—մի ինչ-վոր Արթուր Պիկարի յեղբայրն է, վոր խաբեբայության համար արտաքսվել է Փարիզի բորսայից (տես Փարիզի ոստիկանության պրեֆեկտուրայի 1867 թ. հուլիսի 13-ի տեղեկագիրը), և հենց իր խոստովանության համաձայն՝ բռնվել է 300·000 ֆրանկի գողության մեջ, վոր նա կատարել էր իբրև առևտրական «Գլխավոր Ընկերության» մասնաճյուղի դիրեկտոր, Պալեստրո փողոց № 5 (տես ոստիկանության պրեֆեկտուրայի 1868 թ. դեկտեմբերի 11-ի տեղեկագիրը)։ Յեվ ահա հենց այս Արթուր Պիկարին Երնեստ Պիկարը նշանակեց իր «L'Electeur Libre» լրագրի խմբագիր։ Մինչդեռ այս մինիստրական թերթի պաշտոնական ստերով սովորական բորսայական սպեկուլյանտները մոլորության մեջ էին գցվում, Արթուր Պիկարն ինքն անընդհատ վազ էր տալիս մինիստրությունից բորսա և բորսայից մինիստրություն և ֆրանսական բանակի պարտությունները կանխիկ շահույթի յեր վերածում։ Այս ազնիվ յեղբայրական զույգի ամբողջ գործնական թղթակցությունն ընկավ Կոմունայի ձեռքը։

Ժյուլ Ֆերրին, վոր մինչև սեպտեմբերի 4-ը մի աղքատ փաստաբան էր, կարողացավ, իբրև Փարիզի մեր, պաշարման ընթացքում իրեն համար հարստություն կուտակել մայրաքաղաքի սովի հաշվին։ Այն որը, յերբ նա ստիպված կլինի հաշիվ տալու իր վատթար կառավարչության մասին, այդ որը կլինի նաև նրա դատապարտության որը։

Այս մարդիկ կարող էին իրենց tickets-of-leave[2] գտնել միայն Փարիզի ավերակների վրա. նրանք հենց այն մարդիկ էին, վորոնք պետք էին Բիսմարկի նպատակների համար։ Մի փոքր ձեռնածություն և Թիերը, վոր մինչև այժմ կառավարության գաղտնի խորհրդատուն էր, այժմ կանգնում է նրա գլուխը, իսկ ticket-of-leave-men-երը դառնում են մինիստրներ։

---

[1] Գերմանական հրապարակության մեջ Կարլ Ֆոգտ, ֆրանսականի—Ֆալստաֆ։ Խմբ.։

[2] Անգլիայում սովորական հանցագործներին, իրենց պատժի մեծ մասը կրելուց հետո, հաճախ տալիս են արձակուրդի տոմսեր, վորոնցով նրանք ազատվում են և դրվում ոստիկանության հսկողության ներքո։ Այդ տոմսերը կոչվում են ticket-of-leave (արձակուրդի տոմս), իսկ նրանց տերերը—tickets-of-leave-men։ (Ծանոթագրություն 1872 թ. գերմաներեն հրատարակության)։



Թիերը, այդ գաճաճ հրեշը, կես դարից ավելի կախարդում էր ֆրանսական բուրժուազիային, վորովհետև նա այդ բուրժուազիայի սեփական դասակարգային ապականության ամենակատարյալ իդեական արտահայտությունն է։ Նախքան պետական գործիչ դառնալը՝ նա արդեն իբրև պատմաբան ապացուցել էր իր ստախոսելու տաղանդը։ Նրա հասարակական գործունեության ժամանակագրությունը Ֆրանսիայի դժբախտությունների պատմությունն է։ 1830 թ. առաջ միացած էր հանրապետականների հետ, բայց Լուի-Ֆիլիպի ժամանակ մինիստրական պաշտոն ձեռք գցեց նրանով, վոր դավաճանեց իրեն հովանավորող Լաֆիտին։ Նա թագավորի աչքը մտավ նրանով, վոր ամբոխին դրդեց հոգևորականության դեմ, վորոնց ժամանակ թալանի յենթարկվեցին Սեն-Ժերմեն-Լոկսերրուայի յեկեղեցին և արքեպիսկոպոսական պալատը,—և իր վերաբերմունքով դեպի Բերրիի հերցոգուհին, վորի մոտ նա միաժամանակ խաղում էր մինիստր-լրտեսի և բանտապետ-մանկաբարձի դեր։ Նրա գործն էր հանրապետականների կոտորածը Տրանսնոնենի փողոցում, նրա գործն էր դրան հետևող սեպտեմբերյան զզվելի օրենքները մամուլի և ժողովների ու ընկերությունների իրավունքի դեմ։ 1840 թվի մարտին, յերբ նա կրկին ասպարեզ յեկավ, այս անգամ իբրև մինիստր-նախագահ, նա Ֆրանսիային զարմացրեց իր՝ Փարիզն ամրացնելու պլանով։ Հանրապետականների մեղադրանքին, վորոնք այս պլանը մի նենգամիտ դավադրություն էին համարում Փարիզի ազատության դեմ, նա պատգամավորների պալատում պատասխանեց.

«Ի՞նչպես։ Դուք յերևակայում եք, թե ամրությունները յերբևիցե կարող են վտանգե՞լ ազատությունը։ Ամենից առաջ դուք զրպարտում եք յուրաքանչյուր մի հնարավոր կառավարություն, յեթե յենթադրում եք, թե նա կարող է յերբևէ փորձել իշխանությունը իր ձեռքը պահել Փարիզը ռմբակոծելու միջոցով...։ Այդպիսի կառավարությունն իր հաղթությունից հետո հարյուր անգամ ավելի անկարելի կլիներ, քան առաջ»։ Իսկապես վոր, վո՛չ մի կառավարություն յերբևիցե չէր համարձակվի ամրություններից ռմբակոծել Փարիզը, բացի այն կառավարությունից, վոր նախորոք այդ նույն ամրությունները հանձնել էր պրուսացիներին։

Յերբ Բոմբա-թագավորը 1848 թ. հունվարին փորձեց դաս տալ Պալերմոյին, Թիերը, վոր այն ժամանակ վաղուց այլևս մինիստր չէր, կրկին վեր կացավ և պատգամավորների պալատում ճառ արտասանեց.

«Դուք գիտեք, պարոններ, թե ինչ է կատարվում Պալերմոյում: Դուք բոլորդ սարսափից կդողաք (պառլամենտական իմաստով), յեթե լսեք, որ մի մեծ քաղաք 48 ժամ շարունակ ռմբակոծվել է—ո՞ւմ կողմից: Մի օտարազգի թշնամու կողմի՞ց, որը գործադրում է պատերազմի իրավունքը: Ո՛չ, պարոններ, իր սեփական կառավարության կողմից: Յեվ ի՞նչ պատճառով: Որովհետև այդ դժբախտ քաղաքն իր իրավունքներն էր պահանջում: Յեվ իր իրավունքները պահանջելու համար նա 48 ժամյա ռմբակոծության յենթարկվեց...: Յես դիմում եմ Յեվրոպայի հասարակական կարծիքին: Այս կնշանակի մարդկայնությանը մի ծառայություն մատուցել, յերբ մարդ վեր է կենում և թերևս Յեվրոպայի ամենամեծ ամբիոնից վրդովմունքի մի քանի խոսք է հնչեցնում (այո, իսկապես, խոսքեր) այդպիսի գործերի դեմ: Յերբ ռեգենտ Եսպարտերոն, որ իր հայրենիքին ծառայություններ էր մատուցել (որը Թիերը յերբեք չէր կատարել), մտադրվեց ռմբակոծել Բարսելոնան, այնտեղ բռնկած ապստամբությունը ճնշելու համար, աշխարհի բոլոր ծայրերից հնչեց վրդովմունքի մի ընդհանուր աղաղակ»:

Տասնութ ամիս հետո Թիերը գտնվում էր Հռոմը ֆրանսական զորքերի կողմից ռմբակոծման յենթարկելու ամենակատաղի պաշտպանների շարքերում: Ինչպես յերևում է, Բոմբա-թագավորի սխալը միայն այն էր, որ նա իր ռմբակոծումը 48 ժամով էր սահմանափակում: Դժկամակելով և ձանձրացած՝ պաշտոնից ու պետական դրամները յուրացնելու հնարավորությունից այդքան յերկար ժամանակ վտարված լինելու պատճառով, որպիսի վիճակի դատապարտել էր նրան Գիզոն, Թիերը, փետրվարյան հեղափոխությունից մի քանի օր առաջ ոդի մեջ նախազգաց ժողովրդական վերահաս շարժումը և իր փքված ոճով, որ նրան կպցրել էր Mirabeau–mouche (Միրաբո–ճանճ) ծաղրական մականունը, հայտարարեց պատգամավորների պալատում. «Յես պատկանում եմ հեղափոխության կուսակցությանը, ո՛չ միայն Ֆրանսիայում, այլ ամբողջ Յեվրոպայում: Յես կցանկանայի, որ հեղափոխության կառավարությունը չափավոր մարդկանց ձեռքերում մնար... բայց յեթե այդ կառավարությունն ընկնի տաքգլուխ մարդկանց, մինչև անգամ ռադիկալների ձեռքը, յես այնուամենայնիվ դրա համար իմ գործը չեմ լքի: Յես միշտ կպատկանեմ հեղափոխության կուսակցությանը»:

Յեկավ փետրվարյան հեղափոխությունը: Փոխանակ Գիզո-



յի մինիստրությունը Թիերի մինիստրությամբ փոխարինելու, ինչպես որ յերազում էր այդ մարդուկը, հեղափոխությունը Լուի-Ֆիլիպպին փոխարինեց հանրապետությամբ: Ժողովրդական հաղթության առաջին օրը նա խնամքով թաքնվեց, մոռանալով, որ բանվորների արհամարհանքը պաշտպանում էր իրեն՝ նրանց ատելությունից: Այնուամենայնիվ նա իր վաղածանոթ արիությամբ հեռու մնաց հասարակական ասպարեզից, մինչև որ հունիսյան կոտորածը ասպարեզը մաքրեց նրա նման մարդկանց գործողությունների համար: Այնուհետև նա դարձավ «կարգի կուսակցության» և նրա պառլամենտական հանրապետության ղեկավար գլուխը,—այդ անանուն միջպետության, որի ժամանակ իշխող դասակարգի բոլոր զանազան ֆրակցիաները դաշնի կապեր էին սարքում միմյանց հետ՝ ժողովրդին ճնշելու համար և բանսարկություններ էին անում միմյանց դեմ՝ յուրաքանչյուրն իր սեփական միապետությունը վերահաստատելու համար: Այն ժամանակ էլ, ինչպես և այժմ, Թիերը մեղադրում էր հանրապետականներին իբրև միակ արգելքը՝ հանրապետությունն ամրապնդելու համար. այն ժամանակ էլ, ինչպես և այժմ, նա ասում էր հանրապետությանը, ինչպես դահիճը դոն-Կարլոսին. «Յես քեզ սպանելու յեմ, բայց քո սեփական բարիքի համար»: Այժմ էլ, ինչպես և այն ժամանակ, նա ստիպված կլինի իր հաղթության հետևյալ օրը բացականչելու «L'Empire est fait!» [Կայսրությունը պատրաստ է]: Թիերը մոռացության էր տվել իր կեղծավոր քարոզները անհրաժեշտ ազատությունների մասին, իր անձնական ատելությունը Լուի Բոնապարտի դեմ, որ նրան շահագործել էր և պառլամենտարիզմը դուրս շպրտել (պառլամենտարիզմի արվեստական մթնոլորտից դուրս այս մարդուկը մի ոչընչություն է դառնում, ինչպես ինքն էլ այդ լավ գիտի),—մոռանալով այս բոլորը Թիերը մասնակից էր յերկրորդ կայսրության բոլոր խայտառակություններին, սկսած Հռոմը ֆրանսական զորքերով գրավելուց մինչև պատերազմը Պրուսիայի դեմ: Նա ոժանդակեց այդ պատերազմին, գրգռելով կրքերը իր կատաղի հարձակումներով Գերմանիայի միասնության վրա, որը նա պրուսական բռնակալության քողարկում չէր համարում, այլ մի վոտնձգություն Ֆրանսիայի ժառանգական իրավունքի դեմ՝ տեսնելու Գերմանիան միշտ անմիաբան: Այդ թզուկը սիրում էր Յեվրոպայի աչքերի առաջ թափահարել Նապոլեոն I-ի սուսերը, որի կոշիկ սրբողն էր դարձել նա իր պատմական յերկերում, նրա

արտաքին քաղաքականությունը շարունակ հանգում եր Ֆրանսայի ամենածայրահեղ ստորացմանը, սկսած 1841 թ. Լոնդոնի կոնվենցիայից մինչև 1871 թ. Փարիզի կապիտուլյացիան և վերջապես հասցրեց այժմյան քաղաքացիական պատերազմին, վորի ժամանակ նա Բիսմարկի բարձրագույն բարեհաճությամբ Սեդանի և Մեցի գերիներին գրգռում եր Փարիզի դեմ: Հակառակ իր ընդունակությունների ճկունության և իր նպատակակետերի փոփոխականության՝ այս մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում կաշկանդված է յեղել ամենահնամոլ ռուտինայով: Պարզ է, վոր ժամանակակից հասարակության ավելի խոր շարժումները նրա համար ընդմիշտ անըմբռնելի գաղտնիք պետք է մնային: Բայց մինչև անգամ հասարակական մակերեսի վրա կատարվող շոշափելի փոփոխություններն եյ անըմբռնելի եյին մնում նրա ուղեղի համար, վորի ամբողջ կենսական ուժը տեղավորվել եր լեզվի մեջ: Այդպես, նա սրբապղծություն եր համարում ամեն մի շեղումն ֆրանսական հնացած պրոտեկցիոն սիստեմից: Լուի-Ֆիլիպի օրով մինիստր յեղած ժամանակ նա ծաղր ու ծանակի յե յենթարկել յերկաթուղիները՝ իբրև հիվանդոտ յերևակայության ցնորք, Լուի Բոնապարտի ժամանակ օպոզիցիայի մեջ լինելով՝ նա իբրև սրբապղծություն եր խարանում յուրաքանչյուր ռեֆորմի փորձ, վորի նպատակն եր բարելավել ֆրանսական ռազմական փտած սիստեմը:

Իր յերկարատև քաղաքական գործունեյության ընթացքում նա յերբեք գործնական օգուտ բերող վո՛չ մի նույնիսկ ամենաչնչին ձեռնարկում չկատարեց: Թիերը հետևողական եր միայն իր ագահության մեջ դեպի հարստությունը և իր ատելության մեջ դեպի այն մարդիկ, վորոնք ստեղծում են այդ հարստությունը: Նա Հոբի նման աղքատ եր, յերբ Լուի-Ֆիլիպի ժամանակ առաջին անգամ մինիստր դարձավ. իսկ այդ մինիստրությունից դուրս գալիս նա միլիոներ եր: Վերջին մինիստրության ժամանակ նույն թագավորի օրով (1840 թ. մարտի 1-ից) պատգամավորների պալատում նա հրապարակով մեղադրվեց պետական գանձարանից վատնումներ անելու համար. իբրև պատասխան այդ մեղադրանքի՝ նա բավականացավ միայն արտասուք թափելով,—մի գործ, վորի մեջ նա այնպես ճարպիկ եր, ինչպես Ժյուլ Ֆավրը կամ վորևե այլ կոկորդիլոս: Բորդոյում, 1871 թվին, նրա առաջին քայլը Ֆրանսիան վերահաս ֆինանսական սնանկությունից փրկելու համար այն յեղավ, վոր նա իրեն տարեկան յերեք մի-





Թիերի ստվերը:

ֆրանկանոց ռոճիկ նշանակել տվեց. այդ էր այն «խնայող հանրապետության» առաջին և վերջին խոսքը, որի մասին նա 1869 թվականին հույս էր տվել իր փարիզյան ընտրողներին: Նրա նախկին ընկերներից մեկը 1830 թ. պատգամավորների պալատից, ինքը մի կապիտալիստ,—որը նրան չէր խանգարում Փարիզի Կոմունայի ամենաանձնվեր անդամներից մեկը լինելու,—Բելեն—նորերս իր մի թռուցիկի մեջ դիմեց Թիերին հետևյալ խոսքերով. «Աշխատանքի ստրկացումը կապիտալի կողմից միշտ չեղել է ձեր քաղաքականության անկյունաքարը: Իսկ երբ դուք այժմ Փարիզի քաղաքային տանը հաստատված եք տեսնում աշխատանքի հանրապետությունը, անդադար ձայն եք տալիս Ֆրանսիային—«Տեսե՛ք այդ ոճրագործներին»:—Մանր քաղաքական սրիկայությունների վարպետ, երդմնազանցության և դավաճանության վիրտուոզ, պառլամենտական կուսակցական պայքարի բոլոր տափակ խաբեբայություններին, ստոր ձեռնածություններին և նողկալի նենգամտություններին սովոր, միշտ պատրաստ հեղափոխություն հրահրելու, երբ զրկված է պաշտոնից, և հեղափոխությունը արյան մեջ խեղդելու, երբ պետության ղեկը ձեռքին է, լի դասակարգային նախապաշարումներով՝ գաղափարների փոխարեն, լի ունայնամտությամբ՝ զգացմունքի փոխարեն, իր անհատական կյանքում նույնքան տխրահռչակ, որքան հասարակական կյանքում՝ անարգ—նա չի կարողանում մինչև անգամ այժմ, երբ խաղում է ֆրանսական Սուլլայի դերը, իր գործերի զզվելիությունն ավելի ևս չընդգծել իր ծիծաղելի ամբարտավանությամբ:

Փարիզի կապիտուլյացիան, որ Պրուսիային հանձնեց ո՛չ միայն Փարիզը, այլև ամբողջ Ֆրանսիան, ավարտեց այն երկարատև դավաճանական ինտրիգների շարքը թշնամու հետ, որ սեպտեմբերի 4-ի ուզուրպատորները, Տրոշյուի իսկ խոսքերի համաձայն, սկսել էին հենց այն օրը, երբ անցել էին իշխանության գլուխը: Մյուս կողմից՝ այդ կապիտուլյացիան քաղաքացիական պատերազմի սկիզբն էր, որ նրանք այժմ պրուսացիների օժանդակությամբ մղեցին հանրապետության և Փարիզի դեմ: Որոգայթը դրված էր արդեն հենց կապիտուլյացիայի տեքստի մեջ: Այն ժամանակ երկրի մի երրորդից ավելին գտնվում էր թշնամու ձեռքին, մայրաքաղաքը կտրված էր գավառներից, հաղորդակցության բոլոր միջոցներն անկարող վիճակի մեջ էին: Անկարելի բան էր այդպիսի հանգամանքներում Ֆրանսիայի ի-

կական ներկայացուցչություն ընտրել, յեթե նախապատրաստման համար կանոնավոր ժամանակ չտրվեր: Հենց այդ պատճառով ել կապիտուլյացիան պայման եր դնում, թե Ազգային ժողովը պետք ե ընտրվի ութ օրվա ընթացքում, այնպես որ Ֆրանսիայի որոշ մասերում կատարելիք ընտրության լուրը հասավ ընտրությունից միայն մի օր առաջ: Այնուհետև, կապիտուլյացիայի հոդվածներից մեկի համաձայն, ժողովը պետք ե ընտրվեր մի միակ նպատակի համար, այն ե՝ վճիռ կայացնելու պատերազմի և հաշտության մասին, և անհրաժեշտության դեպքում՝ պետք ե նաև հաշտության դաշնագիր կնքեր: Յերկիրը պետք ե զգար, որ զինադադարի պայմաններն անկարելի եյին դարձնում պատերազմը շարունակելը, և որ Բիսմարկի բռնադատած հաշտությունը հաստատելու համար ամենավատ մարդիկը Ֆրանսիայում՝ ամենից ավելի հարմարը կլինեյին: Սակայն չբավականանալով այս բոլոր նախազգուշական միջոցներով, Թիերը, դեռ նախքան զինադադարի գաղտնիքը փարիզեցիներին հայտնի դառնալը, մի ընտրական ուղևորություն սկսեց ամբողջ յերկրում, որպեսզի այնտեղ վերստին կյանքի կոչի լեգիտիմիստական կուսակցության դիակը. այդ կուսակցությունն այժմ օռլեանիստների հետ միասին պետք ե բռներ այդ մոմենտին միանգամայն անընդունելի դարձած բոնապարտիստների տեղը: Լեգիտիմիստներից նա չեր վախենում: Իբրև այն ժամանակվա Ֆրանսիայի կառավարություն՝ անհնարին եր նրանց հանդես գալը և այդ պատճառով ել նրանք իբրև մրցակիցներ անվտանգ եյին: Այդ կուսակցության ամբողջ գործունեյությունը, հենց Թիերի իրեն խոսքերի համաձայն (պատգամավորների պալատ, 5 հունվարի 1833 թ.), «միշտ սահմանափակվել են յերեք միջոցներով—օտարերկրյա ներխուժումով, քաղաքացիական պատերազմով և անարխիայով». այդ պատճառով ել այդ կուսակցությունն եր հանդիսանում ավելի հարմար գործիք հակահեղափոխության համար: Իսկ լեգիտիմիստներն իրենք իսկապես հավատում եյին իրենց հազարամյա թագավորության վերստին գալստյանը: Արդեն կային Ֆրանսիան դետին կոխող օտարերկրյա ներխուժման կրունկները. արդեն առկա յեր մի կայսրության անկումը և մի Բոնապարտի գերություն. և նրանք իրենք ել կրկին ասպարեզի վրա եյին: Պատմության անիվն ակնբախ կերպով հետ եր շրջվել մինչև 1816 թվականի Chambre introuvable («Աննման պալատը»): 1848-ից մինչև 1851 թվականներին, հանրապետության ժամանակ, Ազգային



ժողովում նրանց ներկայացուցիչները կրթված և վարժված պառլամենտական առաջնորդներ եյին, իսկ այժմ իրենց առաջ եյին զգում կուսակցության սովորական, շարքային դեմքերը—Ֆրանսիայի բոլոր սրիկաները:

Հենց որ այդ «կալվածատիրական պալատը», «ռամիկների» այդ ժողովը բացվեց Բորդոյում, Թիերը պարզաբանեց նրանց, որ նրանք պետք ե անմիջապես ընդունեն հաշտության նախնական պայմանները, առանց նույնիսկ պառլամենտական վիճաբանություն բաց անելու նրանց առթիվ, որովհետև այդ միակ պայմանն ե, որով Պրուսիան նրանց թույլ կտա պատերազմ սկսելու հանրապետության և նրա ամուր բերդի—Փարիզի դեմ: Յեվ իսկապես՝ հակահեղափոխությունը չեր կարող ժամանակ կորցնել: Յերկրորդ կայսրությունը կրկնապատկել եր պետական պարտքը և մեծ քաղաքները տեղական խոշոր պարտքերի տակ եր դցել: Պատերազմը սարսափելի բարձրացրել եր ազգից արվող պահանջները և անխնա վոչնչացրել եր նրա յեկամտի աղբյուրները: Այդ դեռ քիչ եր. պրուսական Շեյլոկն ել կանգնած եր ֆրանսիական հողի վրա անդորրագիրը ձեռքին և պահանջում եր իր կես միլիոն զինվորների ապրուստը, հինգ միլիարդ պատերազմական տուգանքը և նրա չվճարված մասերի համար պայմանավորված հինգ տոկոսը: Ո՞վ պետք ե վճարեր այս բոլոր հաշիվները: Հարստության սեփականատերերը միայն հանրապետությունը բռնությամբ տապալելով կարող եյին հույս ունենալ՝ իրենց իսկ առաջ բերած պատերազմի ծախքերը դցելու այդ հարստությունն արտադրողների ուսերին: Այդպիսով, հենց Ֆրանսիայի անսահման ավերումը խթանում եր հողատիրության և կապիտալի այս հայրենասեր ներկայացուցիչներին՝ օտարազգի նվաճողի աչքերի առաջ և նրա բարձր հովանավորության ներքո արտաքին պատերազմը լրացնել մի քաղաքացիական պատերազմով, ստրկատերերի մի բունտով:

Այս դավադրության առաջ մի խոշոր խոչընդոտ եր կանգնած—Փարիզը: Հաջողության առաջին պայմանը Փարիզը զինաթափ անելն եր: Այդ պատճառով ել Թիերը պահանջեց, որ Փարիզը վայր դնի իր զենքերը: Ամեն բան արվեց՝ Փարիզը համբերությունից հանելու համար. կալվածատիրական պալատը կատաղի հակահանրապետական վայնասուն եր բարձրացնում. Թիերն ինքը յերկիմաստ արտահայտություններ եր անում հանրապետության օրինական գոյության մասին. սպառնում եյին Փարիզը գլխատել և մայրաքաղաք լինելուց զրկել (décapiter et

décapitaliser)․ օրլեանիստներին դեսպան էին նշանակում․ Դյուֆորը օրենքներ էր հրատարակում ժամկետներին չվճարված մուրհակների և բնակարանային վարձի մասին,—օրենքներ, վորոնք սպառնում էին հիմքից կործանել Փարիզի առևտուրն ու արդյունաբերությունը․ Պույե–Քերտյեյի դրդումով ամեն տեսակ տպագրական հրատարակությունների յուրաքանչյուր օրինակի վրա յերկու սանտիմ հարկ էր նշանակվում․ Բլանկին և Ֆլուրանսը մահվան դատապարտվեցին․ հանրապետական լրագրերը փակվում էին․ Ազգային ժողովը փոխադրեցին Վերսալ․ Պալիկաոյի կողմից հրատարակված և սեպտեմբերի 4–ին վոչնչացված պաշարողական դրությունը վերահաստատվում էր․ դեկտեմբերի 2–ի հերոս Վինուան Փարիզի գուբերնատոր նշանակվեց, բոնապարտիստական ժանդարմ Վալանտենը՝ վոստիկանության պրեֆեկտ, իսկ յեզվիտ–գեներալ Որել–դը–Պալադինը Փարիզի Ազգային գվարդիայի գլխավոր հրամանատար:

Այժմ մենք կհարցնենք պարոն Թիերին և ազգային պաշտպանության կառավարության անդամներին՝ նրա գործակատարներին հետևյալի մասին: Հայտնի յե, վոր Թիերն իր ֆինանսների մինիստր Պույե–Քերտյեյի միջոցով յերկու միլիարդ փոխառություն էր կնքել, վորը պետք է անմիջապես վճարվեր: Հիմա, ճի՞շտ է, թե վոչ․

1) վոր այս գործն այն ձևով է սարքվել, վոր միքանի հարյուր միլիոն «կոմիսիոնական» դրամ է մտել Թիերի, Ժյուլ Ֆավրի, Էրնեստ Պիկարի, Պույե–Քերտյեյի և Ժյուլ Սիմոնի անձնական գրպանները և,

2) վոր վո՛չ մի վճարում չպետք է կատարվեր, մինչև վոր Փարիզը «խաղաղացման» չենթարկվեր:

Համենայն դեպս՝ ինչ–վոր մի բան ստիպել է նրանց շատ շտապելու այդ գործում, վորովհետև Թիերն ու Ժյուլ Ֆավրն առանց վորևէ ամոթի Բորդոյի ժողովի մեծամասնությունից պնդում էին, վոր պրուսական զորքերն անմիջապես գրավեն Փարիզը: Բայց այս բանը հարմար չէր գալիս Բիսմարկի քաղաքականությանը,—ինչպես վոր նա, Գերմանիա վերադառնալով, ծաղրական յեղանակով և միանգամայն հրապարակով պատմում էր Ֆրանկֆուրտի հիացած ֆիլիստերներին:

II

Զինված Փարիզը միակ լուրջ արգելքն էր հակահեղափոխական դավադրության համար: Փարիզը պետք էր, ուրեմն, զինաթափ անել: Այս հարցի վերաբերմամբ Բորդոյի ժողովն արտահայտվեց լիակատար անկեղծությամբ: Յեթե նույնիսկ «կալվածատիրական պալատի» պատգամավորների կատաղի մռնչյունը բավականաչափ լսելի յել չլիներ, Փարիզը Թիերի կողմից յեռապետության ձեռքը հանձնելը—կազմված դեկտեմբերյան մարդասպան Վինուայից, բոնապարտյան ժանդարմ Վալանտենից և յեզվիտ–գեներալ Որել–դը–Պալադինից—վերջին կասկածն էլ անկարելի կդարձներ: Չծածկելով Փարիզի զինաթափության իսկական նպատակը՝ դավադիրները լպիրշ կերպով Փարիզին առաջարկում էին զինաթափ լինել այնպիսի մի պատրվակով, վոր ամենաաղաղակող, ամենաանամոթ սուտն էր հանդիսանում: Փարիզի Ազգային գվարդիայի հրետանին,—ասում էր Թիերը,—պատկանում է պետությանը և պետք է կրկին վերադարձվի պետությանը: Իսկ իրողությունն այս էր․ կապիտուլյացիայի որվանից սկսած, յերբ Բիսմարկի գերիները Ֆրանսիան հանձնեցին Բիսմարկի ձեռքը, այն պայմանով, վոր իրենց թույլ տրվի բազմաթիվ պահակախումբ ունենալ՝ Փարիզն ընկճելու վորոշակի նպատակով,—այն որվանից սկսած Փարիզն արթուն պահակ էր կանգնած: Ազգային գվարդիան վերակազմության յենթարկվեց և իր գերագույն ղեկավարությունը հանձնեց Կենտրոնական կոմիտեյին, վոր ընտրված էր ազգային գվարդիականների ամբողջ մասսայի կողմից, բացի բոնապարտիստական միքանի գումարտակներից: Պրուսացիների Փարիզ մտնելու նախորյակին Կենտրոնական կոմիտեն կարգադրեց Մոնմարտր, Լավիլյետ և Բելվիլ փոխադրել այն թնդանոթներն ու միտրալյոզները, վոր կապիտուլյանտները դավաճանաբար թողել էին պրուսացիների կողմից գրավվելիք քաղաքամասերում կամ նրանց մոտերքը: Այդ հրետանին ստեղծված էր Ազգային գվարդիայի իրեն հավաքած գումարներով: Հունվարի 28–ի կապիտուլյացիայի մեջ այն պաշտոնապես ճանաչված էր իբրև Ազգային գվարդիայի մասնավոր սեփականությունը և հատկապես իբրև այդպիսին չէր մտել պետությանը պատկանող զենքերի ընդհանուր մասսայի մեջ, վոր պետք է հանձնվեր հաղթողին: Յեվ Թիերն այնքան զուրկ էր վորևէ, նույնիսկ ամենաթափանցիկ պատրվակից Փարիզի դեմ պատերազմ սկսելու համար, վոր նա ստիպված էր տափակ սուտ օգնությանը դիմել—իբր թե ազգային գվարդիայի հրետանին պետական սեփականություն է:

Հրետանու գրավումը, ակներևորեն, պետք է միայն Փարի–

դի ընդհանուր զինաթափման և դրանով նաև սեպտեմբերի 4-ի հեղափոխության զինաթափման ազդանշանը ծառայեր: Բայց այս հեղափոխությունը դարձել եր Ֆրանսիայի օրինական պետական վիճակը: Հանրապետությունը,—այդ հեղափոխության արդյունքը,—հաղթողի կողմից ճանաչված եր կապիտուլյացիայի բնագրի մեջ: Կապիտուլյացիայից հետո նա ճանաչվեց բոլոր օտար պետությունների կողմից. հանրապետության անունից եր հրավիրված Ազգային ժողովը: Բորդոյի Ազգային ժողովի և նրա գործադիր իշխանության միակ օրինական հիմքը Փարիզի բանվորների սեպտեմբերի 4-ի հեղափոխությունն եր հանդիսանում: Առանց սեպտեմբերի 4-ի հեղափոխության՝ այդ Ազգային ժողովը պետք ե իր տեղն անմիջապես զիջեր 1869 թվին ֆրանսական, այլ վոչ թե պրուսական, իշխանության ներքո ընդհանուր ընտրական ձայնատվության իրավունքով ընտրված և հեղափոխության կողմից բռնի կերպով ցրած Օրենսդրական Մարմնին: Թիերը և իր ticket-of-leave-men ստիպված պետք ե լինեյին անձնատուր լինել, վորպեսզի Լուի Բոնապարտի կողմից ստորագրված յերաշխագրեր ձեռք բերեյին՝ դեպի Կայեննա ուղևորվելու անհրաժեշտությունից ազատվելու համար: Ազգային ժողովը, Պրուսիայի հետ հաշտություն կնքելու իր լիազորությամբ, միայն այդ հեղափոխության առանձին դեպքերից մեկն եր,— իսկ նրա իսկական մարմնացումը այնուամենայնիվ դեռ զինված Փարիզն եր. այն Փարիզը, վոր կատարեց այդ հեղափոխությունը, վոր դիմացել եր հինգամսյա պաշարմանն իր սովահարության սարսափներով, այն Փարիզը, վոր հակառակ Տրոշյուի պլանի յերկարատև դիմադրություն ցույց տալով՝ հիմք ստեղծեց գավառներում համառ պաշտպանողական պատերազմ մղելու: Յեվ այդ Փարիզը պետք ե այժմ, Բորդոյի ըմբոստացած ստրկատերերի վիրավորական հրամանով կա՛մ իր զենքերը վայր դներ և ճանաչեր, վոր սեպտեմբերի 4-ի հեղափոխության իմաստը պետական իշխանությունը պարզապես Լուի Բոնապարտից նրա ռոյալիստական մրցակիցների ձեռքը հանձնելն եր,—կա՛մ նա պետք ե հանդես գար իբրև Ֆրանսիայի առաջամարտիկը. Ֆրանսիայի, վորի փրկությունը լիակատար կործանումից և վերածնությունն անկարելի բան եր, առանց հեղափոխության միջոցով տապալելու այն քաղաքական և հասարակական պայմանները, վորոնք ստեղծել եյին յերկրորդ կայսրությունը և վորոնք վերջինիս հովանավորության ներքո ծայրահեղ փտության եյին հասել: Փարիզը, վոր ուժասպառ եր



յեղել հինգամսյա սովահարությունից, վո՛չ մի վայրկյան չտատանվեց: Նա լի յեր հերոսական անվեհերությամբ. նա վորոշեց դիմանալ ֆրանսական հակահեղափոխության դավադիրների դեմ պայքարելու բոլոր վտանգներին, չնայելով վոր պրուսական թընդանոթներն իր սեփական ամրությունների վրայից դեռ սպառնում եյին նրան: Սակայն զզվանք զգալով դեպի քաղաքացիական պատերազմը, վոր սպառնում եր Փարիզին, Կենտրոնական կոմիտեն ամբողջովին պաշտպանողական դիրք եր պահում, ուշադրություն չդարձնելով վո՛չ Ազգային ժողովի պրովոկացիոն գործողություններին, վո՛չ գործադիր իշխանության անտեղի միջամտություններին նրա գործերում և վո՛չ էլ Փարիզի մեջ ու շուրջն սպառնալից զինվորական ուժ կենտրոնացնելուն:

Յեվ ահա, Թիերն ինքն սկսեց քաղաքացիական պատերազմը. նա Վինուային վոստիկանական ջոկատի և միքանի գծային գնդերի հետ գիշերով ավազակային արշավի ուղարկեց Մոնմարտր, վորպեսզի նրանք այնտեղ, անակնկալի բերելով՝ խլեն Ազգային գվարդիայի հրետանին: Բոլորին հայտնի յե, վոր այդ փորձը Ազգային գվարդիայի ուժեղ դիմադրության և զորամասերի ժողովրդի հետ յեղբայրանալու պատճառով անհաջող անցավ: Որել-դը-Պալադինն առաջուց արդեն տպագրել եր ավել իր հաղթության հաղորդագրությունը, իսկ Թիերը պատրաստ եր պահում պատերին փակցնելիք այն հայտարարությունները, վորոնք պետք ե հռչակեյին նրա պետական հեղաշրջման ձեռնարկումները: Այդ հայտարարություններն էլ այժմ ստիպված եյին փոխարինելու Թիերի մի կոչով, վորի մեջ նա հայտարարում եր իր մեծահոգի վճիռը՝ Ազգային գվարդիայի զենքերը նրան թողնելու, այն հուսով, վոր նա այդ զենքերը կգործադրի կառավարությանը պաշտպանելու խռովարարների դեմ: Ազգային գվարդիայի 300.000 անդամներից միայն 300 հոգի արձագանքեցին խղճուկ Թիերի կոչին՝ նրա հետ միանալու, ընդդեմ իրենց՝ ազգային գվարդիականների: Մարտի 18-ի փառապանծ բանվորական հեղափոխությունն անվիճելի կերպով տիրեց Փարիզին: Կենտրոնական կոմիտեն նրա ժամանակավոր կառավարությունն եր: Թվում եր, թե Յեվրոպան մի վայրկյան կասկածում եր, թե արդյոք իր աչքերի առաջ նորերս կատարված զարմանալի կարևոր պետական և պատերազմական գործողությունները վորևե իրականություն ունեն, թե՞ նրանք վաղուց անհետացած անցյալի յերազներ եյին:

Մարտի 18-ից մինչև Վերսալի զորքերի Փարիզ ներխուժելը

պրոլետարիատի հեղափոխությունն անբիծ մնաց այն բանի գործողություններից, վորոնցով լի յեն լինում հեղափոխություններն ու, ավելի ևս, «բարձր դասակարգերի» հակահեղափոխությունները: Նրա հակառակորդներն ուրիշ հիմք չեն գտնում իրենց վրդովմունքի համար, բացի գեներալ Լեկոնտի և Կլեման Թոմայի մահապատիժներից և Վանդոմի հրապարակում տեղի ունեցած ընդհարումից:

Բոնապարտյան սպաներից մեկը, գեներալ Լեկոնտը, վոր մասնակցում եր Մոնմարտրի վրա կատարված գիշերային հարձակմանը, չորս անգամ հրաման տվեց 81-րդ գծային գնդին հրացան արձակելու Pigale-ի հրապարակում խմբված անզեն ամբոխի վրա. իսկ յերբ զինվորները հրաժարվեցին կատարել նրա հրամանը, նա կատաղի կերպով հայհոյեց նրանց: Փոխանակ կանանց ու յերեխաներին գնդակահարելու՝ նրա սեփական զինվորները սպանեցին նրան: Այն արմատացած սովորությունները, վորոնց վարժեցնում են զինվորներին բանվոր դասակարգի թշնամիների դաստիարակության ներքո, իհարկե անմիջապես չեն անհետանում, յերբ այս զինվորներն անցնում են բանվորների կողմը: Միևնույն զինվորները գնդակահարեցին նաև Կլեման Թոմային:

«Գեներալ» Կլեման Թոման, դժգոհ լինելով իր պաշտոնից, նախկին վախմիստր, Լուի-Ֆիլիպպի թագավորության վերջին տարիները հարեց «Le National» հանրապետական լրագրի խմբագրությանը, և այստեղ միևնույն ժամանակ կատարում եր պատասխանատու խրովկակի (gèrant responsable) [1] և մենամարտողի դերը այդ սաստիկ կռվասեր լրագրի խմբագրության մեջ: Յերբ փետրվարյան հեղափոխությունից հետո «National»-ի տերերն իշխանությունն իրենց ձեռքն առան, նրանք այդ հին վախմիստրին գեներալ դարձրին: Այդ բանը տեղի ունեցավ հունիսյան կոտորածի նախօրեյին, վորի չարանենգ նախագծմանը մասնակցել եր նա, ինչպես նաև Ժյուլ Ֆավրը, և վորի ժամանակ նա ամենազզվելի դահճի դերնստանձնեց: Այնուհետև նա իր գեներալության հետ մեկտեղ յերկար ժամանակ չքացավ ասպարեզից, և չերևաց մինչև 1870 թվականի նոյեմբերի 1-ը: Դրանից մի որ առաջ պաշտպանության կառավարությունը քաղաքային տան մեջ Բլանկիին, Ֆլուրանսին և բանվորների մյուս ներկայացուցիչներին հանդիսավոր կերպով խոսք եր տվել՝ իր բռնագրաված իշ-

[1] Այն դեմքն է լրագրի խմբագրության մեջ, վորի պաշտոնականությունն է բանտ նստելը: Խմբ.:





Ժողովուրդը վռնդում է Թիերի վոստիկաններին և զինվորներին, վորոնք փորձում եյին Մոնմարտրի վրա գտնված հրետանին գրավել:

խանությունը հանձնելու ազատ կերպով ընտրված Փարիզի Կոմունայի ձեռքը: Փոխանակ իր խոսքը կատարելու, նա Փարիզի վրա արեց Տրոշյուի բրետոնցիներին, վորոնք այժմ բռնում եյին Բոնապարտի կորսիկացիների տեղը: Միայն գեներալ Տամիզյեն հրաժարվեց իր անունն արատավորել այդպիսի ուխտադրժությամբ և վայր դրեց իր՝ Ազգային գվարդիայի գլխավոր հրամանատարի պաշտոնը: Նրան փոխարինեց Կլեման Թոման, վորը նորից գեներալ դարձավ: Իր գլխավոր հրամանատարության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում նա պատերազմ եր մղում վո՛չ թե Պրուսիայի, այլ Փարիզի Ազգային գվարդիայի դեմ: Նա ամեն կերպ արգելք եր հանդիսանում նրա ընդհանուր սպառազինմանը, բուրժուական գումարտակները գրգռում եր բանվորական գումարտակների դեմ, հեռացնում եր Տրոշյուի «պլանին» հակառակ սպաներին, ցրում եր պրոլետարական գումարտակները, նշավակելով նրանց իբրև վախկոտներ,—այն պրոլետարական գումարտակները, վորոնց հերոսական արիությունն այժմ հիացմունք կորզեց նույնիսկ նրանց ամենակատաղի թշնամիներից: Կլեման Թոման սաստիկ հպարտանում եր նրանով, վոր իրեն կրկին հաջողվել ե ապացուցել իր անձնական ատելությունը դեպի Փարիզի պրոլետարիատը, վոր այնպես պայծառորեն յերևան եր յեկել 1848 թ. հունիսյան սպանդի ժամանակ: Մարտի 18-ից միայն միքանի որ առաջ նա ռազմական մինիստր Լեֆլոյին ներկայացրեց իր նախագիծը՝ «Փարիզի անզգամների ծաղիկը միանգամ ընդմիշտ վոչնչացնելու համար»: Վինուայի պարտությունից հետո՝ նա չկարողացավ հրաժարվել իբրև լրտես կռվի ասպարեզ յելնելու հաճույքից: Կենտրոնական կոմիտեն և Փարիզի բանվորները նույնքան պատասխանատու յեն Կլեման Թոմայի և Լեկոնտի գնդակահարման համար, վորքան Ուելսի իշխանուհին այն մարդկանց մահվան համար, վորոնք նրա Լոնդոն ժամանելիս տրորվեցին ամբոխի մեջ:

Անզեն քաղաքացիների կոտորածը Վանդոմի հրապարակում մի հեքիաթ ե: Իզուր չեր, վոր Թիերն ու կալվածատիրական ժողովի պատգամավորները համառորեն լռում եյին այդ մասին և նրա տարածումը հանձնել եյին բացառապես յեվրոպական ամենորյա մամուլի սպասավորներին:

«Կարգի մարդիկ», Փարիզի ռեակցիոներները, դողում եյին, լսելով մարտի 18-ի հեղափոխության հաղթության լուրը: Նրանց համար այդ՝ վերջապես վրա հասնող ժողովրդական հատուցման ազդանշանն եր: 1848 թվականի հունիսյան որերից մինչև 1871 թ.

Հունվարի 22-ը նրանց ձեռքի տակ սպանված զոհերի ուրվականները վոտքի եյին կանգնում նրանց աչքերի առաջ: Բայց նրանց միակ պատիժը նրանց սարսափն եր: Վոստիկաններին վո՛չ միայն զինաթափ չարին և չձերբակալեցին ինչպես վայել եր, այլ Փարիզի դռները նրանց առաջ լայն բաց արին, վորպեսզի նրանք կարողանան Վերսալ փախչել: Վո՛չ միայն «կարգի մարդկանց» վոչինչ չարին, այլև նրանց մինչև անգամ հնարավորություն տվին կրկին հավաքելու իրենց ուժերը և հենց Փարիզի իրեն մեջ ուժեղ դիրքեր գրավելու: Կենտրոնական կոմիտեյի այս զիջողական վերաբերմունքը, զինված բանվորների այս մեծահոգությունը, վոր այնքան հակասում եր «կարգի կուսակցության» սովորություններին, այս կուսակցությունն ընդունեց իբրև գիտակցված թուլության նշան: Ահա այստեղից առաջ յեկավ «կարգի կուսակցության» տխմար պլանը՝ փորձել իբր թե անզեն ցույցի միջոցով ձեռք բերելու այն, ինչ վոր չկարողացավ ձեռք բերել Վինուան իր թնդանոթներով և միտրալյոզներով: Մարտի 22-ին մայրաքաղաքի ամենահարուստ թաղամասերից ծայր առավ «ազնվազարմ պարոնների» մի աղմկալից բազմություն. այդ շարժման մեջ եյին բոլոր Փրանտները, իսկ նրա գլուխը կանգնած եյին կայսրության չափազանց հայտնի ձրիակերները, ինչպես Հեքերենը, Կոետլոգոնը, Անրի դը-Պենը և նրանց նմանները: Խաղաղ ցույցի յերկչոտ պատրվակի ներքո, բայց գաղտնապես զինված վարձու մարդասպանների զենքերով, այս սրիկայախումբն առաջ եր շարժվում՝ զինաթափ անելով և վիրավորանք հասցնելով Ազգային գվարդիայի ճանապարհին հանդիպող պահակներին և պարեկներին (Patrouille): Դուրս գալով Rue de la Paix փողոցից՝ «Կորչի՛ Կենտրոնական կոմիտեն, կորչե՛ն մարդասպանները, կեցցե՛ Ազգային ժողովը» աղաղակներով, նրանք փորձեցին ճեղքել այնտեղ կանգնած պահակախմբի շարքերը և հանկարծակիի բերել Ազգային գվարդիայի գլխավոր կայանը, վոր գտնվում եր Վանդոմի հրապարակում: Ի պատասխան նրանց արձանակների տրաքոցների՝ նրանց սովորական որինական առաջարկն արվեց ցրվելու. իսկ յերբ այդ առաջարկն ազդեցություն չունեցավ, այն ժամանակ Ազգային գվարդիայի գեներալը հրամայեց կրակել: Մի համազարկը միայն այդ դատարկագլուխ Փրանտներին անկարգ փախուստի մատնեց, մինչդեռ նրանք յերևակայել եյին, թե միայն ևեթ իրենց «վայելուչ հասարակության» յերևան յելնելը Փարիզի հեղափոխության վրա այնպիսի ազդեցություն կգործի, ինչպես Հեսու Նավյայի փողերը Յերիքովի պարիսպների վրա:



# REPUBLIQUE FRANÇAISE.

## LIBERTÉ, ÉGALITÉ, FRATERNITÉ.

# AU PEUPLE.

**Citoyens,**

Le Peuple de Paris a secoué le joug qu'on essayait de lui imposer.

Calme, impassible dans sa force, il a attendu sans crainte comme sans provocation les fous éhontés qui voulaient toucher à la République.

Cette fois, nos frères de l'armée n'ont pas voulu porter la main sur l'arche sainte de nos libertés. Merci à tous, et que Paris et la France jettent ensemble les bases d'une République acclamée avec toutes ses conséquences, le seul Gouvernement qui fermera pour toujours l'ère des invasions et des guerres civiles.

L'état de siége est levé.

Le Peuple de Paris est convoqué dans ses sections pour faire ses Élections communales.

La sûreté de tous les citoyens est assurée par le concours de la Garde nationale.

Hôtel-de-Ville, Paris, le 19 mars 1871.

*Le Comité central de la Garde nationale,*

ASSI, BILLIORAY, FERRAT, BABICK, Édouard MOREAU, C. DUPONT, VARLIN, BOURSIER, MORTIER, GOUHIER, LAVALETTE, Fr JOURDE, ROUSSEAU, Ch LULLIER, BLANCHET, J. GROLLARD, BARROUD, H. GERESME, FABRE, POUGERET.

Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեյի 1871 թ. մարտի 19-ի կոչը:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ — ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ — ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

## ԺՈՂՈՎՐԴԻՆ

Քաղաքացինե՛ր,

Փարիզի ժողովուրդը դեն գցեց այն լուծը, որ փորձում էին նրա վզին դնել։

Հանգիստ, անխռով իր ուժի գիտակցությամբ, նա սպասում էր այն անամոթ խելագարներին, որոնք ուզում էին հանցափորձ կատարել Հանրապետության դեմ։

Այս անգամ բանակում գտնվող մեր եղբայրները չցանկացան ձեռք բարձրացնել մեր ազատությունների սրբության վրա։ Մենք հայտնում ենք մեր շնորհակալությունը բոլորին։ Թո՛ղ Փարիզն ու Ֆրանսիան հաստատուն հիմք դնեն Հանրապետության՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, այնպիսի մի կառավարությամբ, որն ընդմիշտ կփակի թշնամական արշավանքների և քաղաքացիական պատերազմների դարաշրջանը։

Պաշարողական դրությունը վերացված է։

Փարիզի ժողովուրդը հրավիրվում է իր սեկցիաները՝ կոմունալ ընտրությունների համար։

Բոլոր քաղաքացիների անվտանգությունն ապահովվում է Ազգային գվարդիայի կողմից։

Ազգային գվարդիայի
Կենտրոնական կոմիտե
(20 ստորագրություն)։

Ցուցարարներն սպանեցին յերկու ազգային-գվարդիականի և ծանր վիրավորեցին ինն հոգու (վորոնց մեջ Կենտրոնական կոմիտեյի մի անդամի)․ Նրանք իրենց մեծագործության թատերաբեմը լցված՝ թողին վեր գցած ատրճանակներով, դաշույններով, գավազանասրերով և այլ իրեղեն ապացույցներով, վոր իրենց «խաղաղ» ցույցն «անզեն» բնույթ եր կրում։ Յերբ 1849 թ․ հունիսի 13-ին Փարիզի Ազգային գվարդիան իսկապես մի խաղաղ ցույց կազմակերպեց, բողոքելով Ֆրանսական զորքերի ավազակային հարձակման դեմ Հռոմի վրա,—այն ժամանակ Շանգարնյեն, «կարգի կուսակցության» գեներալը, Ազգային Ժողովի և առանձնապես Թիերի կողմից հայտարարվեց հայրենիքի փրկիչ նրա համար, վոր նա բոլոր կողմերից այս անզեն մարդկանց վրա յեր արձակել իր զորամասերին, վորոնք նրանց գնդակահարեցին, սրախողխող արին և իրենց ձիերի սմբակների տակ տրորեցին։ Այն ժամանակ Փարիզը հայտարարվեց պաշարողական դրության մեջ։ Դյուֆորը մի շարք նորանոր ճնշիչ որենքներ անցկացրեց Ազգային Ժողովում․ սկսվեցին նոր ձերբակալումներ, նոր աքսորներ, ստեղծվեց մի նոր ահաբեկիչ իշխանություն։ Սակայն ստորին դասակարգերն այդպիսի դեպքերում այլ կերպ են վարվում։ 1871 թ․ Կենտրոնական կոմիտեն թույլ տվեց, վոր «խաղաղ ցույցի» հերոսները պարզապես փախչեն, այնպես վոր նրանք հազիվ յերկու որ անցած կրկին ի վիճակի եյին ադմիրալ Սեսսեյի ղեկավարությամբ այն զինված ցույցը ձեռնարկելու, վորի վերջն յեղավ նրանց յերևելի խուճապային փախուստը դեպի Վերսալ։ Կենտրոնական կոմիտեն, համառությամբ հակառակելով վարելու այն քաղաքացիական պատերազմը, վոր սկսել եր Թիերն իր գիշերային հարձակմամբ Մոնմարտրի վրա, այս անգամ ճակատագրական սխալ գործեց նրանով, վոր նա անմիջապես իր ուժերը չշարժեց այն ժամանակ միանգամայն անոգնական Վերսալի վրա և դրանով վերջ չդրեց Թիերի և նրա կալվածատիրական պալատի դավադրություններին։ Փոխանակ այդ բանն անելու՝ «կարգի կուսակցությանը» մի անգամ ել թույլ տվին իր ուժերը փորձելու Կոմունայի մարտի 26-ի ընտրությունների ժամանակ։ Այդ որը «կարգի մարդիկը» շրջանային մերիաներում հաշտության ճառեր եյին փոխանակում իրենց չափազանց մեծահոգի հաղթողների հետ, միաժամանակ իրենց սրտերում հանդիսավոր յերդումն մրմռալով, վոր իր ժամանակին պետք ե արյունահեղ վրեժ լուծեն։

Այժմ տեսե՛ք մեդալի հակառակ կողմը։ Թիերն իր յերկրորդ

արշավանքը Փարիզի դեմ սկսեց ապրիլի սկզբին: Փարիզից գերվածների առաջին խումբը, յերբ նա Վերսալ հասավ, վրդովեցուցիչ վերաբերմունքի հանդիպեց: Էրնեստ Պիկարը, ձեռքերը շալվարի գրպանները դրած շրջում էր նրանց մեջ և ամեն կերպ ծաղրում նրանց, իսկ Թիերի և Ֆավրի տիկինները, շրջապատված իրենց պատվա(?)խմբի կանանցով, իրենց բարձր պատշգամբներից ծափահարում եյին Վերսալի խուժանի սոսր խայտառակություններին: Գերի ընկած գծային զինվորներին առանց այլևայլության գնդակահարում եյին: Մեր քաջարի բարեկամ գեներալ Դյուվալը, յերկաթ ձուլողը, սպանվեց առանց քննության ու դատաստանի: Գալիֆեն, իր կնոջ «ալֆոնսը», վոր յերկրորդ կայսրության որգիաների ժամանակ այնպիսի անամոթությամբ ցուցադրում էր իր մարմինը, այդ Գալիֆեն մի պրոկլամացիայի մեջ պարծենում էր նրանով, վոր նա յե հրամայել սպանել միքանի ազգային-գվարդիականների իրենց կապիտանի և նրա տեղակալի հետ միասին, վորոնց հանկարծակիի եյին բերել և զինաթափ եյին արել իր հեծյալները: Փարիզից ճողոպրած Վինուան Թիերից ստացավ Պատվո Լեգիոնի շքանշանի մեծ խաչը նրա համար, վոր հրաման էր ստորագրել, կարգադրելով գնդակահարել յուրաքանչյուր՝ կոմունարների մոտ գերի բռնված գծային զինվորի: Ժանդարմ Դեմարեյին (Desmarêt) շքանշան տվին, վորովհետև նա դավաճանաբար, մսագործի նման, կտոր-կտոր էր արել ասպետորեն-մեծահոգի Ֆլուրանսին. այն Ֆլուրանսին, վորը 1870 թ. հոկտեմբերի 31-ին փրկել էր ազգային պաշտպանության կառավարության անդամների գլուխը: Նրա սպանության «զատեսպնդիչ մանրամասնությունները» Թիերն առանձին հաճույքով յերկար ու բարակ հաղորդեց Ազգային Ժողովի նիստերից մեկում: Պառլամենտական Թզուկի փքված ինքնապարծությամբ, վորին թույլ են տվել Թամերլանի դերը խաղալու, նա մերժում էր ճանաչել իր չնչինության դեմ ապստամբածների վերաբերմամբ պատերազմող կողմի ամեն մի իրավունք, մինչև անգամ չէր ճանաչում նրանց վիրակապության վայրերի չեզոքությունը: Չկա ավելի զարշելի մի բան, քան այս կապիկը, վոր իրավունք է ստացել կարճ ժամանակով բավարարելու իր վագրի բնազդները,—մի կապիկ-վագր, վոր կռահել է նկարագրել է արդեն Վոլտերը:

Յերբ Կոմունան ապրիլի 7-ի դեկրետով հատուցման ձեռնարկումներ կարգադրեց գործադրել և իրեն իր պարտականությունը հայտարարեց՝ «Փարիզը պաշտպանել Վերսալի ավազակ-



ների կաննիբալական գործերի դեմ և աչքի տեղ աչք, ատամի տեղ ատամ պահանջել»,—այնուամենայնիվ Թիերը չդադարեցրեց իր դաժան վերաբերմունքը դեպի գերիները. այդ բոլորից զատ՝ նա դեռ վիրավորում էլ էր նրանց իր հաղորդագրությունների մեջ հետևյալ ձևով. «Յերբե՛ք ազնիվ մարդկանց տխուր հայացքը չի տեսել ավելի անպատիվ դեմոկրատիայի ավելի անպատիվ կերպարանքներ»,—ազնիվ մարդիկ, ինչպիսին Թիերն ինքն էր և իր Ticket-of-leave-men մինիստրների դերում: Բայց և այնպես, վորոշ ժամանակով կանգ առավ գերիների գնդակահարությունը: Սակայն հենց վոր Թիերն ու իր գեներալները—դեկտեմբերյան [1851 թ.] հերոսները—տեսան, վոր Կոմունայի հատուցման դեկրետը լոկ մի դատարկ սպառնալիք է, վոր Կոմունան խնայել է նույնիսկ իրենց լրտես-ժանդարմներին, վորոնք բռնվել եյին Փարիզում, ազգային-գվարդիականների զգեստները հագներին, վոր խնայվել են մինչև անգամ հրդեհաձիգ ռումբեր կրող վոստիկանները,—հենց վոր նրանք այդ բոլորն իմացան, նրանք կրկին վերսկսեցին գերիների մասսայական գնդակահարությունը և շարունակեցին այն մինչև վերջը: Այն տները, վորոնց մեջ թաքնվել եյին ազգային-գվարդիականները, շրջապատվում եյին ժանդարմների կողմից, նավթով թրջվում (վոր առաջին անգամ գործ է ածվում այստեղ այս պատերազմում) և հրկիզվում. հետագայում մամուլի աշխատավորների սանիտարական ջոկատը Տերն քաղաքամասում դուրս հանեց նրանց կիսայրված դիակները: Չորս ազգային-գվարդիականներ, վորոնք ապրիլի 25-ին Բել-Եպինի մոտ անձնատուր եյին յեղել մի խումբ հեծյալ հրացանաձիգների, հետո գնդակահարվեցին մեկը մյուսի հետևից այդ հրացանաձիգների կապիտանի կողմից, վոր Գալիֆեյի արժանավոր ծառան էր: Այդ չորս գվարդիականներից մեկը, Շեֆֆերը, վորին հրացանաձիգները մեռած եյին համարել, մի կերպ սողալով հասավ Փարիզի ամրությունները և ապա Կոմունայի հանձնաժողովներից մեկի առաջ դատական վկայություն տվեց այդ իրողության մասին: Յերբ Տոլենը հարցապնդում արեց այդ հանձնաժողովի հաշվետվության մասին ռազմական մինիստր Լեֆլոյին, «կալվածատիրական պալատի» պատգամավորների աղաղակները խլացրին նրա խոսքերը և արգելեցին Լեֆլոյին՝ պատասխանելու հարցապնդմանը: Նրանց «փառապանծ» զորքի համար վիրավորական կլիներ խոսել այդ զորքի քաջագործությունների մասին: Այն անփույթ տոնը, վորով Թիերի տեղեկագրերը հաղորդում եյին Մուլեն-Սակեյի մոտ քնած ժամանակ հանկարծակիի բերված ազգային-

գվարդիականների կոտորածի և Կլամարի մասսայական գնդակահարությունների մասին, ազդում էր նույնիսկ Լոնդոնի «Times»-ի նյարդերի վրա, վորոնք իսկապես վոր այնքան էլ շատ զգայուն չեյին: Սակայն ապարդյուն փորձ կլիներ մեկ-մեկ թվարկել բոլոր այն զարհուրելի գործերը, վոր կատարեցին Փարիզը ռմբակոծողները, ստրկատերերի ըմբոստության դրդողները՝ ոտար նվաճողի հովանավորության ներքո: Այդ բոլոր սարսափների մեջ Թիերը մոռանում է իր պառլամենտական ֆրազներն այն սոսկալի պատասխանատվության մասին, վոր ծանրանում է նրա գաճաճ ուսերին. Նա իր հաղորդագրություններում պարծենում է նրանով, թե l'Assemblée siège paisiblement (ժողովը խաղաղ կերպով շարունակում է իր նիստերը), և ապացուցում է իր մշտական հանդիսավոր ճաշկերույթներով, այսոր դեկտեմբերյան հեղաշրջման հերոս գեներալների հետ, վաղը՝ գերմանական պրինցների հետ, վոր իր մարսողությունն ամենևին չխանգարեցին մինչև անգամ՝ Լեկոնտի և Կլեման Թոմայի ուրվականները:

## III

1871 թ. մարտի 18-ի առավոտյան Փարիզն արթնացավ «Կեցցե՛ Կոմունան» վորոտաձայն աղաղակներից: Ի՞նչ է Կոմունան, այդ սֆինքսը, վոր այդքան ծանր փորձի յե յենթարկում բուրժուական ուղեղը:

«Փարիզի պրոլետարները,—գրում էր Կենտրոնական կոմիտեն իր մարտի 18-ի մանիֆեստում,—իշխող դասակարգերի պարտություններն ու դավաճանությունը տեսնելով՝ հասկացան, վոր հասել է ժամը, յերբ նրանք պետք է դրությունը փրկեն, նրանով, վոր իրենց սեփական ձեռքն առնեն հասարակական գործերի ղեկավարությունը... Նրանք հասկացան, վոր իրենց ամենաբարձր պարտականությունն ու իրենց բացարձակ իրավունքն է՝ իրենց սեփական վիճակի տեր ու տնորենը դառնալ և կառավարական իշխանությունն իրենց ձեռքն առնել»:—Բայց բանվոր դասակարգը չի կարող պատրաստի պետական մեքենան գրավել և այն իր սեփական նպատակների համար ծառայեցնել:

Կենտրոնացրած պետական իշխանությունն իր որգաններով, վորոնք ամենուրեք են,—մշտական զորքը, վոստիկանությունը, բյուրոկրատիան, հոգևորականությունը, դատավորական դասը,—որգաններ, վորոնք կազմված են աշխատանքի սիստեմատիկական և հիերարխական բաժանման սկզբունքով, գոյություն ունի բացարձակ միապետության որերից, յերբ նա նոր ծագող



բուրժուական հասարակության համար հզոր զենք է ծառայել՝ ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարում: Բայց և այնպես նրա զարգացումը կասեցված էր մնում ամեն տեսակ միջնադարյան հնոտիներով, հողատիրական և ազնվական առանձնաշնորհումներով, տեղական արտոնություններով, քաղաքային և համքարային մենաշնորհներով ու գավառական վարչական կանոնադրություններով: XVIII դարի Ֆրանսական հեղափոխության հսկայական ավելը սրբեց տարավ վաղուց անցած ժամանակների այդ բոլոր փլատակները, և այդպիսով միաժամանակ հասարակական գետինը մաքրեց այն ամեն վերջին արգելքներից, վորոնք կանգնած եյին ժամանակակից պետական շենքի կառուցման ճանապարհին: Այդ ժամանակակից պետական շենքը կառուցվեց առաջին կայսրության ժամանակ, վոր իր կողմից առաջ յեկավ շնորհիվ հին, կիսաֆեոդալական Յեվրոպայի կոալիցիոն պատերազմների, վոր նա մղում էր նոր Ֆրանսիայի դեմ: Կառավարման ձևի հետագա զարգացման ժամանակ՝ կառավարությունը յենթարկվեց պառլամենտական վերահսկողությանը, այսինքն՝ դրվեց ունևոր դասակարգերի անմիջական վերահսկողության ներքո: Մի կողմից՝ նա վերածվեց հսկայական պետական պարտքերի և խեղդող հարկերի մի ջերմոցի և կովախնձոր դարձավ տիրապետող դասակարգերի միմյանց հետ մրցող ֆրակցիաների և արկածախնդիրների համար, վորոնց նա հրապուրում էր շնորհիվ իր վարչական ուժի, իր յեկամուտների և այն պաշտոնների, վոր նա կարող էր բաշխել,—մյուս կողմից՝ հասարակության մեջ առաջացած տնտեսական փոփոխությունների ազդեցությամբ փոխվեց նաև նրա քաղաքական բնույթը: Այն չափով, վորքան վոր ժամանակակից արդյունաբերության առաջադիմությունը զարգացնում, ընդլայնում և խորացնում էր դասակարգային հակադրությունը կապիտալի և աշխատանքի միջև, նույն չափով էլ պետական իշխանությունն ավելի և ավելի հասարակական իշխանության բնույթ էր ընդունում, հասարակական մի ուժ՝ բանվոր դասակարգին ճնշելու համար, դառնում էր դասակարգային տիրապետության մի մեքենա: Յուրաքանչյուր հեղափոխությունից հետո, վոր մի առաջադիմություն է հանդիսանում դասակարգային կռվի մեջ, պետական իշխանության զուտ ճնշող բնույթն ավելի և ավելի բացարձակ է յերևան գալիս: 1830 թ. հեղափոխությունը իշխանությունը խլեց հողատերերի ձեռքից և հանձնեց կապիտալիստներին, այսինքն՝ բանվոր դասակարգի ավելի հեռավոր հակառակորդների ձեռքից առավ և հանձնեց այն նրանց անմիջական հակառակորդների ձեռ-

քը: Բուրժուական հանրապետականները, որոնք փետրվարյան հեղափոխության անունից իրենց ձեռքն առան պետական իշխանությունը, գործադրեցին այդ իշխանությունը հունիսյան կոտորածներն առաջ բերելու համար. նրանք այդ կոտորածով բանվոր դասակարգին ապացուցեցին, թե «սոցիալական» հանրապետությունն ուրիշ ոչինչ չի նշանակում, բայց յեթե նրանց սոցիալական ճնշումը հանրապետության կողմից. ինչպես և բուրժուաների միապետական տրամադրություն ունեցող մասսային ու հողատերերին ապացուցեցին, որ նրանք հանգիստ կերպով կարող են կառավարության հոգսերն ու դրամական օգուտները բուրժուական հանրապետականներին թողնել: Սակայն հունիսյան սխրագործությունից հետո՝ բուրժուական հանրապետականներին մնում էր միայն «կարգի կուսակցության» առաջին շարքերից անցնել վերջին շարքերը, այն «կարգի կուսակցության», որ մի կոալիցիա յեր ունեւոր դասակարգի բոլոր կուսակցությունների ու ֆրակցիաների, որ այժմ բացարձակապես հայտարարում էր իր հակադրությունն արտադրող դասակարգի դեմ: Նրանց միացյալ կառավարության հարմարագույն ձևը պառլամենտական հանրապետությունն էր Լուի Բոնապարտի նախագահությամբ. այդ՝ անքող դասակարգային ահաբեկման և «անպիտան ամբոխի» դիտավորյալ վիրավորանքի կառավարությունն էր: Յեթե, ինչպես Թիերն էր ասում, պառլամենտական հանրապետությունը այն պետական ձևն էր, որ «ամենից ավելի քիչ էր միմյանցից բաժանում իշխող դասակարգի զանազան ֆրակցիաներին», ապա, դրա հակառակ, նա մի անդունդ էր փորում այս դասակարգի և այն ամբողջ հասարակական օրգանիզմի միջև, որ ապրում էր նրա նոսր շարքերից դուրս: Յեթե նախկին կառավարությունների ժամանակ այդ դասակարգի ներսում յեղած յերկպառակությունները պետական իշխանության վրա դեռ վորոշ սահմանափակումներ եյին դնում, այժմ, ունեւոր դասակարգի միանալու շնորհիվ այդ սահմանափակումներն էլ վերանում եյին: Պրոլետարիատի սպառնալից ապստամբության դիմաց՝ միացած ունեւոր դասակարգը պետական իշխանությունն այժմ գործադրում էր անխիղճ և հանդուգն կերպով, իբրև կապիտալի ազգային ռազմական գործիքը աշխատանքի դեմ: Սակայն նրա անընդհատ խաչակրաց արշավանքը արտադրող մասսաների դեմ՝ ստիպում էր նրանց, մի կողմից, վո՛չ միայն ավելի և ավելի մեծ ճնշման իրավունքներով օժտելու գործադիր իշխանությանը՝ դիմադրությունը ճնշելու համար, այլև, մյուս կողմից, հարկադրում էր նրան իր սեփա-





Կեցցե՜ կոմունան:

կան պառլամենտական ամբոխը—Ազգային ժողովը—հետզհետե զրկելու ամեն մի պաշտպանության միջոցից՝ գործադիր իշխանության դեմ: Գործադիր իշխանությունը, հանձին Լուի Բոնապարտի, ցրեց ունևոր դասակարգի ներկայացուցիչներին: «Կարգի կուսակցության» հանրապետության բնական ժառանգը յերկբորդ կայսրությունն եր:

Կայսրությունը, վորի ծննդյան վկայականը պետական հեղաշրջումն եր, սանկցիան՝ ընդհանուր ընտրական իրավունքը և գայիսոնը՝ թուրը, ձևացնում եր, թե հենվում է գյուղացիների վրա, արտադրողների այն լայնածավալ մասսայի վրա, վորոնք անմիջականորեն չեյին մասնակցում կապիտալի և աշխատանքի միջև տեղի ունեցող պայքարին: Կայսրությունը ձևացնում եր, թե փրկում է բանվոր դասակարգին, նրանով, վոր նա խորտակում եր պառլամենտարիզմը և նրա հետ միասին կառավարության անսքող հպատակությունը ունևոր դասակարգերին: Նա պնդում եր, թե փրկում է ունևոր դասակարգերին, նրանով, վոր հաստատուն եր պահում նրանց տնտեսական տիրապետությունը բանվոր դասակարգի նկատմամբ: Յեվ, վերջապես, նա պնդում եր, թե միացնում է բոլոր դասակարգերին՝ ազգային փառքի ուրվականը վերակենդանացնելու միջոցով: Իրականության մեջ՝ կայսրությունը միակ հնարավոր կառավարական ձևն եր այնպիսի մի ժամանակ, յերբ բուրժուազիան արդեն կորցրել եր ազգը կառավարելու ընդունակությունը, իսկ բանվոր դասակարգն այդ ընդունակությունը դեռ չեր ձեռք բերել: Ամբողջ աշխարհը հրճվանքով վողջունեց կայսրությունն իբրև հասարակության փրկչի: Նրա իշխանության ներքո բուրժուական հասարակությունը, ազատված բոլոր քաղաքական հոգսերից, զարգացման այնպիսի բարձր աստիճանի հասավ, վոր ինքն էլ մտքով չեր անցկացրել: Նրա արդյունաբերությունն ու առևտուրը ծավալվեցին անսահման չափերով: Բորսայական սպեկուլյացիան տոնում եր իր կոսմոպոլիտական օրգիաները. մասսաների թշվառությունը սուր կերպով աչքի յեր ընկնում փայլուն շռայլության անամոթ պերճության հանդեպ, վոր ձեռք եր բերված սրիկայությամբ և վոճրագործությամբ: Պետական իշխանությունը, վոր, ըստ յերևույթին, հասարակությունից բարձր եր կանգնած, իրոք ինքն այդ հասարակության ամենախայտառակ սկանդալն եր և միաժամանակ նրա ամբողջ պղծության տնկարանը: Նրա սեփական փտությունն ու միաժամանակ նրա փրկած հասարակության նեխումը յերևան հանեցին Պրուսիայի սվինները, այն Պրուսիայի, վոր լցված եր կառավարման

այս սիստեմի ծանրության կենտրոնը Փարիզից Բեռլին փոխադրելու բուռն տենչանքով: Իմպերիալիզմն ամենաանառակ և միևնույն ժամանակ ամենավերջին ձևն ե այն պետական իշխանության, վորին կյանքի կոչեց նոր առաջացող բուրժուական հասարակությունն իբրև իր սեփական ազատագրության գործիք՝ ֆեոդալիզմից, և վորը լրիվ զարգացած բուրժուական հասարակությունը փոխարկեց աշխատանքը կապիտալի միջոցով ստրկացնելու գործիքի:

Կայսրության ուղղակի հակադրությունը Կոմունան եր: «Սոցիալական հանրապետության» լոզունգը, վորով Փարիզի պրոլետարիատը ողջունեց փետրվարյան հեղափոխությունը, արտահայտում եր միայն անորոշ ձգտումն դեպի այնպիսի մի հանրապետություն, վորը վո՛չ միայն պետք ե դասակարգային իշխանության միապետական ձևը վերացներ, այլև հենց դասակարգային իշխանությունը: Կոմունան հենց այդպիսի հանրապետության վորոշակի ձևն եր:

Փարիզը, հին կառավարական իշխանության կենտրոնն ու մայրաքաղաքը, և միևնույն ժամանակ ֆրանսական բանվոր դասակարգի հասարակական կենտրոնը, Փարիզը զենքը ձեռին վոտքի յելավ Թիերի և նրա կալվածատիրական պալատի փորձի դեմ. այն փորձի, վոր ուզում եր կայսրությունից իրենց ժառանգություն մնացած այս հին կառավարական իշխանությունը վերահաստատել և հավերժացնել: Փարիզը կարող եր դիմադրություն ցույց տալ միայն այն պատճառով, վորովհետև նա պաշարման հետևանքով ազատվել եր զորաբանակից, վորի տեղն այժմ բռնել եր մեծ մասամբ բանվորներից բաղկացած Ազգային գվարդիան: Այդ իրողությունը պետք եր մի տևական հաստատություն դարձնել: Այդ պատճառով ել Կոմունայի առաջին դեկրետը կանոնավոր զորքը վոչնչացնելու և այն զինված ժողովրդով փոխարինելու դեկրետն եր:

Կոմունան կազմված եր Փարիզի զանազան շրջանների քաղաքային խորհրդականներից, վորոնք ընտրված եյին ընդհանուր ձայնատվության իրավունքի հիման վրա: Նրանք պատասխանատու եյին և ամեն ժամանակ փոփոխելի: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր նրանց մեծամասնությունը բաղկացած եր բանվորներից կամ բանվորական դասակարգի ճանաչված ներկայացուցիչներից: Կոմունան պետք ե վո՛չ թե պառլամենտական հիմնարկություն լիներ, այլ գործող մի մարմին, միաժամանակ թե՛ գործադիր և թե՛ որենսդիր իշխանություն: Վոստիկանությունը, վոր մինչև



այժմ կենտրոնական կառավարության գործիքն եր, այժմ անմիջապես զրկվեց իր բոլոր քաղաքական ֆունկցիաներից և դարձավ Կոմունայի պատասխանատու և ամեն ժամանակ փոփոխելի որգանը: Նույն վիճակին արժանացան նաև կառավարչության բոլոր մյուս ճյուղերի պաշտոնյաները: Սկսած Կոմունայի անդամներից մինչև ներքևը հասարակական ծառայությունը պետք ե վարձատրվեր բանվորի աշխատավարձի չափով: Պետական բարձր պաշտոնատար անձերի ձեռք բերած արտոնություններն ու ներկայացուցչության համար ստացվող դրամներն անհետացան այդ պաշտոնյաների իրենց հետ միասին: Հասարակական պաշտոնները դադարեցին կենտրոնական կառավարության սպասարկուների մասնավոր սեփականությունը լինելուց: Վո՛չ միայն քաղաքային վարչությունը, այլև ամբողջ մինչև այժմ պետությանը պատկանող նախաձեռնությունը հանձնվեց Կոմունայի ձեռքը:

Մշտական զորքն ու վոստիկանությունը, հին կառավարության նյութական զորության գործիքները վերացնելուց հետո Կոմունան անմիջապես ձեռնարկեց խորտակելու հոգևորականության ուժը, հոգևոր ճնշման այդ գործիքը: Նա դեկրետ հրատարակեց, վորով յեկեղեցին բաժանում եր պետությունից և ցրում ու սեփականազրկում եր բոլոր յեկեղեցիները, վորչափով վոր նրանք գույք ունեցող կորպորացիաներ եյին: Տերտերները պետք ե վերադառնային մասնավոր մարդկանց համեստ կյանքին և իրենց նախորդների՝ առաքյալների նման պետք ե ապրեյին հավատացյալների տված վողորմություններով: Բոլոր դպրոցական հիմնարկները ձրիաբար բաց արվեցին ժողովրդի առաջ և միևնույն ժամանակ ազատվեցին պետության և յեկեղեցու միջամտությունից: Դրանով վո՛չ միայն դպրոցական կրթությունն եր մատչելի դարձվում բոլորի համար, այլև գիտությունն ազատվում եր այն շղթաներից, վորով կաշկանդել եյին նրան դասակարգային նախապաշարումն ու կառավարական իշխանությունը:

Դատական պաշտոնյաները կորցրին իրենց այն յերևութական անկախությունը, վոր միայն նրա համար եր ծառայել, վորպեսզի սքողի նրանց հպատակությունը բոլոր իրար հաջորդող կառավարություններին, վորոնցից ամեն մեկին նրանք հերթով հպատակության յերդում եյին տալիս և այդ յերդումը դրժում: Ինչպես հասարակության բոլոր մյուս պաշտոնյաները, նրանք ել պետք ե այնուհետև ընտրովի, պատասխանատու և փոփոխելի լինեյին:

Փարիզի Կոմունան, իհարկե, պետք ե իբրև բնական որինակ

ծառայեր Ֆրանսիայի բոլոր խոշոր արդյունաբերական կենտրոնների համար: Եթե իրերի կոմունալ կարգը միանգամ մտներ Փարիզում և յերկրորդական կենտրոններում, նախկին կենտրոնացրած կառավարությունն ստիպված կլիներ գավառներում ևս իր տեղը զիջել արտադրողների ինքնավարությանը: Ազգային կազմակերպության կարճառոտ ուրվագծում, վոր Կոմունան ժամանակ չունեցավ մանրամասն մշակելու, վորոշակի կերպով ասվում է, վոր Կոմունան պետք է լինի նույնիսկ ամենափոքրիկ գյուղի քաղաքական ձևը և վոր մշտական զորքն ամբողջ յերկրում պետք է փոխարինվի ժողովրդական միլիցիայով, ծառայության չափազանց կարճ ժամանակամիջոցով: Յուրաքանչյուր շրջանի գյուղական համայնքները պետք է իրենց ընդհանուր գործերը վարեյին շրջանի գլխավոր քաղաքում հավաքված պատգամավորների ժողովի միջոցով, իսկ այս շրջանային ժողովները պետք է, իրենց հերթին, իրենց պատգամավորներն ուղարկեյին Փարիզի Ազգային ժողովը: Պատգամավորները պետք է ամեն ժամանակ փոփոխելի լինեյին և խստիվ հետևեյին իրենց ընտրողներից ստացած հրահանգներին: Այն սակավաթիվ, բայց շատ կարևոր ֆունկցիաները, վոր այնուամենայնիվ մնում եյին կենտրոնական կառավարության համար, վո՛չ թե պետք է վերացվեյին, ինչպես դիտավորյալ ստում եյին Կոմունայի թշնամիները, այլ պետք է հանձնվեյին կոմունալ, այսինքն՝ խստորեն պատասխանատու պաշտոնյաների ձեռքը: Կոմունալ վարչաձևի միջոցով վո՛չ թե պետք է խորտակվեր ազգի միությունը, այլ ընդհակառակը՝ կազմակերպվեր: Ազգ. միությունը պետք է իրականություն դառնար՝ վոչնչացնելով այն պետական իշխանությունը, վոր իրեն համարում էր այդ միության մարմնացումը, բայց ուզում էր ազգի հանդեպ անկախ և գերադաս լինել, մինչդեռ նա իրոք միայն մի մակաբույծ էր ազգի մարմնի վրա: Խնդիրն այն էր, վոր պետք էր կտրել-դեն գցել հին կառավարական իշխանության այն որգանները, վորոնք ծառայում եյին միայն ճնշման համար, հարկավոր էր միևնույն ժամանակ իրեն հասարակությունից բարձր կանգնած կարծող այդ իշխանության օրինական ֆունկցիաները նրա ձեռքից խլել և հասարակության պատասխանատու պաշտոնյաների ձեռքը հանձնել: Փոխանակ յերեք կամ վեց տարին մի անգամ վճռելու, թե իշխող դասակարգի վո՞ր անդամը պետք է պառլամենտում ներկայացնի և ճնշի ժողովրդին, այժմ ընդհանուր ընտրական իրավունքը Կոմունայի մեջ կազմակերպված ժողովրդին պետք է ճիշտ այն ձևով ծառա-



— 103 —

# RÉPUBLIQUE FRANÇAISE

Nº 59 LIBERTÉ — ÉGALITÉ — FRATERNITÉ Nº 59

# COMMUNE DE PARIS

LA COMMUNE DE PARIS,

Considérant que le premier des principes de la République française est la liberté;

Considérant que la liberté de conscience est la première des libertés.

Considérant que le budget des cultes est contraire au principe, puisqu'il impose les citoyens contre leur propre foi

Considérant, en fait, que le clergé a été le complice des crimes de la monarchie contre la liberté,

DÉCRÈTE :

ART. 1er. L'Église est séparée de l'État.

ART. 2. Le budget des cultes est supprimé.

ART. 3. Les biens dits de mainmorte, appartenant aux congrégations religieuses, meubles et immeubles, sont déclarés propriétés nationales.

ART. 4. Une enquête sera faite immédiatement sur ces biens, pour en constater la nature et les mettre à la disposition de la Nation.

LA COMMUNE DE PARIS.

Կոմունայի դեկրետը յեկեղեցին պետությունից բաժանելու մասին

Տեքստի թարգմանությունը տե՛ս հետևյալ եջում

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ — ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ — ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

# ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱ

*Փարիզի Կոմունան,*

*գտնելով, որ Ֆրանսիական Հանրապետության առաջին սկզբունքը հանդիսանում է ազատությունը.*

*գտնելով, որ խղճի ազատությունը ազատություններից առաջինն է.*

*գտնելով, որ կրոնական դավանությունների բյուջեն հակասում է այդ սկզբունքին, որովհետև քաղաքացիներին յեկեղեցական հարկերի տակ է դնում հակառակ նրանց համոզմունքների.*

*գտնելով ապացուցված, որ հոգևորականությունը մասնակից է յեղել միապետության վոճրագործություններին ազատության դեմ,—*

*դեկրետագրում է.*

1. *Յեկեղեցին բաժանվում է պետությունից:*
2. *Դավանությունների բյուջեն վերացվում է:*
3. *Կրոնական կոնգրեգացիաներին պատկանող շարժական և անշարժ գույքը հայտարարվում է ազգային սեփականություն:*
4. *Անմիջապես ցուցակագրվելու յե այդ գույքը, նրանց տեսակությունը պարզելու և ժողովրդի տրամադրությանը հանձնելու համար:*

**Փարիզի Կոմունա**

յեր, ինչպես վոր անհատական ձայնի իրավունքը ամեն մի աշխատանք տվողին նրա համար է ծառայում, վոր բանվորներ, վերակացուներ, հաշվապահներ ջոկի իր ձեռնարկությունների համար: Յեվ բավականաչափ հայտնի յե, վոր ինչպես մասնավոր անհատներն, այնպես էլ ձեռնարկությունները սովորաբար շատ լավ կարողանում են հարմար մարդը գտնել իրենց գործնական ձեռնարկությունների համար. իսկ յեթե յերբեմն սխալվում էլ են, ապա կարողանում են այդ սխալը շատ շուտով ուղղել: Մյուս կողմից՝ վոչ մի բան չեր կարող Կոմունայի վոգուն ավելի խորթ լինել, քան ընդհանուր ձայնավորության իրավունքը հիերարխիկան ինվեստիտուրայով[1] փոխարինելը:

Նոր պատմական ստեղծագործության սովորական վիճակն է, վոր նրան թյուրիմացաբար համարում են հասարակական կյանքի այն ավելի հին և մինչև անգամ իրենց ժամանակն անցկացրած ձևերի ընդօրինակումը, վորոնց նոր հիմնարկությունները փոքրիշատե նման են: Այդպես էլ այս նոր Կոմունան, վոր խորտակում է ժամանակակից պետական իշխանությունը, ընդունվեց սխալմամբ իբրև միջնադարյան կոմունաների վերակենդանացում, վորոնք նախորդել եյին այդ պետական իշխանությանը և ապա կազմել նրա հիմքը:—Կոմունալ վարչաձևը սխալմամբ համարել են մի փորձ՝ մանր պետությունների միությամբ (վորի մասին յերազում եյին Մոնտեսքյոն և Ժիրոնդիստները) փոխարինելու մեծ ժողովուրդների այն միությունը, վորը թեև սկզբնապես բռնությամբ է ստեղծվել, բայց այժմ հասարակական արտադրության մի հզոր ֆակտոր է դարձել:—Կոմունայի անտագոնիզմը պետական իշխանության դեմ՝ սխալմամբ համարվել է հին կովի չափազանցված ձևը ծայրահեղ կենտրոնացման դեմ: Պատմական առանձնահատուկ հանգամանքներ մի քանի յերկրներում արգելք են հանդիսացել բուրժուական կառավարության ձևի կլասիկ զարգացմանը, ինչպիսին տեղի յե ունեցել Ֆրանսիայում. այդ պայմանները թույլ են տվել, վոր, ինչպես օրինակ Անգլիայում, գլխավոր պետական կենտրոնական օրգանները լրացվեն ապականված ծխական ժողովներով (vestries), քաղաքային խորհուրդների շահասեր անդամներով, աղքատների կատաղի հոգաբարձուներով՝ քաղաքներում և փաստորեն ժառանգական հաշտարար դատավորներով՝ գյուղերում: Կոմունալ վարչաձևն, ընդհակառակը, կվերադարձներ հասարակական օրգանիզմին այն բոլոր

---

[1] Ինվեստիտուրան—պաշտոնատար անձերի նշանակման մի սիստեմ է: Խմբ.:

ուժերը, վոր մինչև այժմ կլանում եր այդ մակաբուծական «պետությունը», վորը սնվում է հասարակության հյութերով և խանգարում նրա ազատ շարժումը: Միայն այս գործով նա արդեն առաջ մղած կլիներ Ֆրանսիայի վերածնությունը:

Գավառական քաղաքների բուրժուազիան Կոմունայի մեջ մի փորձ եր տեսնում՝ վերահաստատելու այն իշխանությունը, վոր նա գործադրում եր Լուի-Ֆիլիպպի ժամանակ գյուղի նկատմամբ, և վորը Լուի-Բոնապարտի ժամանակ հետ մղվեց նրանով, վոր իբր թե գյուղն սկսեց իշխել քաղաքների վրա: Իրականության մեջ, սակայն, կոմունալ վարչաձևը գյուղական արտադրողներին կենթարկեր շրջանային գլխավոր քաղաքների մտավոր ղեկավարությանը և այնտեղ նրանց համար կապահովեր, ի դեմս քաղաքային բանվորների, իրենց շահերի բնական ներկայացուցիչներին:—Կոմունայի լոկ գոյությունն իր հետ, իբրև ինքնըստինքյան հասկանալի մի բան, բերում եր տեղական ինքնավարություն, բայց այդ ինքնավարությունն այլևս իբրև հակակշիռ չեր ծառայում պետական իշխանության դեմ, վոր այժմ ավելորդ եր դառնում: Միայն վորևէ Բիսմարկի մտքով կարող եր անցնել,—վորը, յերբ զբաղված չեր լինում իր մշտական արյան ու յերկաթի ինտրիգներով, սիրով վերադառնում եր իր հին, իր մտավոր կարողություններին ամենից ավելի հարմար արհեստին՝ իբրև «Kladderadatsch»-ի աշխատակից,—միայն այդպիսի մարդու մտքով կարող եր անցնել, թե Փարիզի Կոմունան ձգտում եր իսկապես 1791 թ. հին ֆրանսական քաղաքային ինքնավարության ծաղրանկարին, այն է՝ պրուսական քաղաքային կանոնադրությանը, վոր քաղաքային վարչությունները ստորացնում, դարձնում եր պրուսական պետական մեքենայի սոսկ յերկրորդական անիվները: Վերացնելով ծախքերի յերկու ամենախոշոր հոդվածները—զորքն ու պաշտոնեյությունը՝ Կոմունան իրականացրեց բոլոր բուրժուական հեղափոխությունների լոզունգը՝ եժան կառավարությունը: Հենց միայն նրա գոյությունը ժխտում եր միապետության գոյությունը, վորը, գոնե Յեվրոպայում, դասակարգային իշխանության սովորական բալլաստն ու անխուսափելի դիմակն է հանդիսանում: Կոմունան հանրապետության համար ստեղծեց իսկական դեմոկրատական հաստատությունների հիմքը: Սակայն նրա վերջնական նպատակը վո՛չ «եժան կառավարությունն» եր, վո՛չ էլ «իսկական հանրապետությունը». նրանք յերկուսն էլ յերևան յեկան ի միջի այլոց, իրենք իրենց:

Մեկնաբանությունների այն բազմազանությունը, վորոնց յեն-








Նա, ով սեփականություն ունի,
գործերը վատ են գնում:

Նա, ով վոչինչ չունի,
գործերը լավ են գնում:

թարկվեց Կոմունան, և շահերի այն բազմազանությունը, վորոնք իրենց արտահայտությունը գտան նրա մեջ, ապացուցում են, վոր նա վերին աստիճանի ճկուն քաղաքական ձև եր, մինչդեռ բոլոր նախկին կառավարական ձևերը, ըստ իրենց եյության, ճնշման ձևեր եյին: Նրա իսկական գաղտնիքն այն եր, վոր նա ըստ եյության բանվոր դասակարգի կառավարությունն եր, արտադրող դասակարգի կռվի արդյունքը յուրացնող դասակարգի դեմ, այն վերջապես հայտնագործած քաղաքական ձևը, վորի ժամանակ կարող եր իրականանալ աշխատանքի տնտեսական ազատագրությունը:

Առանց այս վերջին պայմանի՝ Կոմունան մի անկարելիություն եր և մի պատրանք: Արտադրողների քաղաքական իշխանությունը չի կարող գոյություն ունենալ նրա սոցիալական ստրկացման հավերժացման հետ միասին: Այդ պատճառով էլ Կոմունան պետք է իբրև լծակ ծառայեր՝ այն տնտեսական հիմունքները

խորտակելու համար, վորոնց վրա հանգչում է դասակարգերի բուն գոյությունը և, հետևաբար, նաև դասակարգային իշխանությունը: Յեթե աշխատանքն ազատագրված է, ապա ամեն մարդ բանվոր է դառնում, և արտադրողական աշխատանքը դադարում է վորոշ դասակարգի առանձնահատկությունը լինելուց:

Տարորինակ բան է. հակառակ վերջին վաթսուն տարիների բոլոր մեծ խոսակցություններին բանվորների ազատագրության մասին,—հազիվ են վորևէ տեղ բանվորները գործն իրենց ձեռքն առնում, և ահա անմիջապես կրկին սկսվում են այժմյան հասարակության պաշտպանների ջատագովական ճառերը. մի հասարակություն, վոր յերկու բևեռ ունի—կապիտալ և վարձու աշխատանքի ստրկություն (հողատերերն այժմ միայն կապիտալիստների լուռ ընկերակիցներն են), կարծես թե կապիտալիստական հասարակությունն ապրում է դեռ ամենամաքուր կուսական անմեղության մեջ. կարծես թե նրա բոլոր հակասությունները դեռ անզարգացած վիճակի մեջ են, նրա բոլոր ինքնախաբեյությունները դեռ բացված չեն, նրա ամբողջ պոռնկացած իրականությունը մերկացրած չէ: «Կոմունան,—բացականչում են նրանք,—կամենում է վոչնչացնել սեփականությունը, ամեն քաղաքակրթության հիմքը»: Այո՛, պարոննե՛ր, Կոմունան կամենում էր վոչընչացնել այն դասակարգային սեփականությունը, վոր շատերի աշխատանքը քչերի հարստության է փոխարկում: Նա մտադիր էր սեփականազրկելու սեփականազրկողներին: Նա կամենում էր անհատական սեփականությունն իրականություն դարձնել, վերածելով արտադրության միջոցները, հողն ու կապիտալը, վորոնք այժմ ամենից առաջ աշխատանքի ստրկացման և շահագործման միջոց են, ազատ ու ընկերացված աշխատանքի գործիքների:

Բայց սա կոմունիզմն է, «անկարելի՛» կոմունիզմը: Սակայն այն մարդիկ իշխող դասակարգերի միջից, վորոնք բավականաչափ բանիմաց են ըմբռնելու համար, վոր այժմյան սիստեմի հարատևությունն անկարելի բան է,—իսկ այդպիսի մարդիկ շատ կան,—այդ մարդիկ դարձան կոոպերատիվ արտադրության ձանձրացուցիչ և մեծաբերան առաքյալները: Իսկ յեթե կոոպերատիվ արտադրությունը չպետք է սին ձայն և խաբեյություն մնա, յեթե նա պետք է դուրս մղի կապիտալիստական սիստեմը, յեթե ասոցիացիաների ամբողջությունը պետք է ազգային արտադրությունը կարգավորի մի ընդհանուր պլանի համաձայն, այդ արտադրությունը պետք է առնի իր ղեկավարության ներքո և վերջ պետք է տա այն մշտական անարխիային և պարբերաբար կրկն-



վող ցնցումներին, վորոնք կապիտալիստական արտադրության անխուսափելի բաժինն են,—ի՞նչ բան է այս, պարոննե՛ր, յեթե վոչ կոմունիզմ, «հնարավոր» կոմունիզմը:

Բանվոր դասակարգը Կոմունայից հրաշքներ չէր պահանջում: Նրա նպատակը չէր ժողովրդական վճռով արդեն միանգամայն պատրաստի և ավարտուն ուտոպիաներ իրագործել: Նա գիտե, վոր իր ազատությանն ու նրա հետ միասին կյանքի այն ավելի բարձր ձևին հասնելու համար, վորին անդիմադրելի կերպով ձգտում է ժամանակակից հասարակությունն իր իսկ սեփական տնտեսական զարգացման միջոցով, վոր նա, այդ բանվոր դասակարգը, պետք է համառ պայքար մղի, ամբողջ մի շարք պատմական պրոցեսներ անցնի, վորոնց շնորհիվ միանգամայն պետք է փոխվեն մարդիկ և հանգամանքները: Նա իդեալներ չի իրականացնելու. նա պետք է միայն ազատություն պարգևի նոր հասարակության այն տարրերին, վորոնք արդեն զարգացել են խորտակվող բուրժուական հասարակության ծոցում:

Միանգամայն գիտակցելով իր պատմական առաքելությունը, լի հերոսական վճռով՝ գործել այդ կոչման բարձրության համապատասխան, բանվոր դասակարգը կարող է միայն հեգնորեն ժպտալ մամուլի լակեյների ցած հայհոյանքների հանդեպ, ինչպես և բարեմիտ բուրժուական դոկտրինյորների խրատական հովանավորության հանդեպ, վորոնք գիտական անսխալականության գուշակի տոնով քարոզում են իրենց սովորական կեղծ դարձվածքներն ու սեկտանտական կապրիզները:

Յերբ Փարիզի Կոմունան իր սեփական ձեռքն առավ հեղափոխության ղեկավարությունը, յերբ հասարակ բանվորներն առաջին անգամ համարձակվեցին ձեռք տալ իրենց «բնական տերերի»—ունևոր դասակարգերի—արտոնություններին, հատկապես կառավարական արտոնություններին, նրանք այդ աշխատանքին ձեռնարկեցին անորինակ ծանր պայմաններում, և այն կատարեցին համեստությամբ, բարեխիղճ կերպով և հաջողությամբ. նրանց ստացած վարձատրությունը հազիվ հավասարվում էր այն ռոճիկի մեկ հինգերորդական մասին, վոր, ինչպես ասում է մի բարձր գիտական հեղինակություն (պրոֆեսոր Հեքսլին), նվազագույն ռոճիկ էր Լոնդոնի դպրոցական խորհրդի վորևէ անդամի համար: Այն ժամանակ հին աշխարհը գալարվում էր կատաղի ջղաձգությունների մեջ, տեսնելով, վոր քաղաքային տան վրա ծածանվում է կարմիր դրոշակը—աշխատանքի հանրապետության խորհրդանշանը:

Յեվ այնուամենայնիվ՝ այս առաջին հեղափոխությունն էր, վորի մեջ բանվոր դասակարգը բաց կերպով ճանաչվեց իբրև միակ դասակարգը, վոր դեռ ընդունակ էր հասարակական ձեռներեցության: Այդ բանն ընդունեց մինչև անգամ Փարիզի միջին դասակարգի խոշոր մասսան,—մանր առևտրականները, արհեստավորները, վաճառականները,—բացառությամբ միայն հարուստ կապիտալիստների: Կոմունան փրկեց այդ դասակարգը, իմաստուն կերպով վերացնելով հենց միջին դասակարգի մեջ շարունակ կրկնվող յերկպառակության պատճառը—պարտապանների և պարտատերերի հարցը: Միջին դասակարգի այդ նույն հատվածը 1848 թվին մասնակցել էր բանվորների հունիսյան ապըստամբության ճնշմանը, և դրանից անմիջապես հետո Սահմանադիր ժողովի կողմից առանց այլևայլության զոհ էր բերվել պարտատերերին: Բայց այս միակ հիմքը չէր, վորի պատճառով նա այժմ հարեց բանվորներին: Նա զգում էր, վոր այժմ միայն մի ընտրություն կա. Կոմունան կամ կայսրություն, ինչ անվան ներքո յել թագնվի վերջինը: Կայսրությունը տնտեսապես ավերել էր այս միջին դասակարգին, վատնելով հասարակական հարստությունը, սնելով ու զարգացնելով բորսայական սպեկուլացիան, օգնելով, վոր արվեստական արագությամբ կենտրոնանա կապիտալը և դրանով այդ միջին դասակարգի խոշոր մասը սեփականազրկման յենթարկվի: Կայսրությունը քաղաքականապես ճնշել էր, իր օրգիաներով բարոյապես վրդովել նրան, նրա վոլտերիանիզմը վիրավորել՝ նրա յերեխաների կրթությունը հանձնելով «անգետ յեղբայրների» ձեռքը. նա վրդովել էր նրանց ազգային զգացմունքն իբրև ֆրանսացիների, գլխապատառ նետելով նրանց այդ պատերազմի մեջ, վոր իր առաջացրած բոլոր ավերածությունների տեղ միայն մի փոխարինություն թողեց, այն է՝ կայսրության վոչնչացումը: Իսկապես, բոնապարտիստական և կապիտալիստական բարձր խավի խմբի Փարիզից գաղթելուց հետո՝ միջին դասակարգի իսկական «կարգի կուսակցությունը» հանդես յեկավ իբրև «Հանրապետական Միություն», կանգնեց Կոմունայի դրոշակի ներքո և պաշտպանեց նրան Թիերի դիտավորյալ զրպարտությունների դեմ: Արդյոք միջին դասակարգի այս մեծ մասսայի յերախտագիտությունը կդիմանա՞ այժմյան ծանր փորձություններին,—այդ ցույց կտա ապագան:

Կոմունան լիակատար իրավունք ուներ, յերբ նա հայտարարում էր գյուղացիներին. «Մեր հաղթությունը ձեր միակ հույսն է»: Վերսալում հյուսված և յեվրոպական մամուլի տխրահռչակ բաշիբոզուկների միջոցով ամբողջ աշխարհում փողահարված ստերից ամենալպիրշ զրպարտությունն այն էր, թե Ազգային Ժողովում նստած «կալվածատերերի պատգամավորները» ֆրանսական գյուղացիների ներկայացուցիչներն են: Յերևակայեցեք մի բոպե ֆրանսական գյուղացիների սերը դեպի այն մարդիկ, վորոնց նրանք, 1815 թվականից հետո, ստիպված եյին մեկ միլիարդ փոխհատուցում վճարելու: Ֆրանսական գյուղացիների աչքում խոշոր հողատիրոջ գոյությունն իսկ մի վտանգություն է նրա 1789 թվականի նվաճումների դեմ: Բուրժուաները 1848 թվականին գյուղացու հողամասը լրացուցիչ հարկման յենթարկեցին յուրաքանչյուր ֆրանկին 45 սանտիմ, բայց նրանք այդ բանն արին հանուն հեղափոխության: Իսկ այժմ նրանք քաղաքացիական պատերազմ են սկսել հեղափոխության դեմ, վորպեսզի կարողանան Պրուսիային վճարելիք հինգ միլիարդ պատերազմական տուգանքի գլխավոր ծանրությունը գյուղացիների ուսերին բառնալ: Իսկ Կոմունան, ընդհակառակը, հենց իր առաջին պրոկլամացիաներից մեկում հայտարարեց, վոր պատերազմի սկզբնապատճառները պետք է կրեն նաև նրա ծանրությունը: Կոմունան կազատեր գյուղացուն արյան հարկից, կտար նրան եժան կառավարություն, կփոխարիներ նրա արյունը ծծողներին՝ նոտարին, փաստաբանին, դատական կատարածուին և մյուս դատական վամպիրներին—ռոճիկավոր կոմունալ պաշտոնյաներով, վորոնք կընտրվեյին նրա կողմից և պատասխանատու կլինեյին նրա առաջ: Նա կազատեր նրան գյուղական վոստիկանի, ժանդարմի և պրեֆեկտի կամայական իշխանությունից. նա մարդկանց միտքը բթացնող տերտերին կփոխարիներ նրան լուսավորող դպրոցական ուսուցչով: Իսկ ֆրանսական գյուղացին ամենից առաջ այնպիսի մարդ է, վոր հաշիվ է անում: Նա լիովին բանական կգտներ, վոր տերտերների վարձատրությունը վո՛չ թե հարկահավաքների միջոցով ժողովվի, այլ կախված լինի միայն համայնքի բարեպաշտական զգացումների կամավոր գործունեյությունից: Սրանք եյին այն խոշոր անմիջական բարիքները, վոր խոստանում էր ֆրանսական գյուղացիներին Կոմունայի իշխանությունը, և միմիայն Կոմունայի իշխանությունը: Այդ պատճառով էլ բոլորովին ավելորդ է այստեղ մանրամասն կանգ առնել այն ավելի խճողված և իսկապես կենսական հարցերի վրա, վոր միայն Կոմունան էր ընդունակ և միաժամանակ հարկադրված՝ լուծելու գյուղացիների օգտին. այդպես—հիպոթեքային պարտքերի հարցը, վոր իբրև մի մղձավանջ ծանրացած էր գյուղացիական հողամասի վրա.

գյուղական պրոլետարիատի հարցը, որ որեցոր աճում եր այնտեղ. գյուղացիների իրենց սեփականազրկումը, որ շնորհիվ ժամանակակից գյուղատնտեսության զարգացման և կապիտալիստական յերկրագործության մրցակցության, հետզհետե ավելի ու ավելի արագ եր կատարվում:

Ֆրանսիական գյուղացին Լուի Բոնապարտին ընտրել եր հանրապետության նախագահ, սակայն «կարգի կուսակցությունն» ստեղծեց յերկրորդ կայսրությունը:

Թե իսկապես ի՛նչ եր պետք ֆրանսիական գյուղացուն, նա այդ սկսեց ցույց տալ 1849 և 1850 թվականներին, յերբ նա ամենուրեք հակադրում եր իր մերը՝ կառավարական պրեֆեկտին, իր դպրոցական ուսուցիչը՝ պետական տերտերին, իսկ իրեն՝ պետական ժանդարմին: 1850 թ. հունվար և փետրվար ամիսներին «կարգի կուսակցության» կողմից հրատարակված բոլոր որենքները, իրենց իսկ խոստովանությամբ, ուղղված եյին գյուղացիության դեմ: Գյուղացին բոնապարտիստ եր, որովհետև նրա աչքում մեծ հեղափոխությունն իր բոլոր՝ նրա համար բերած առավելություններով՝ մարմնանում եր Նապոլեոնի մեջ: Այդ ինքնախաբեյությունը յերկրորդ կայսրության ժամանակ արագությամբ անհետանում եր: Անցյալի այդ նախապաշարումը (որ իր եյությամբ թշնամի յեր կալվածատերերին) ինչպես կարող եր դիմանալ Կոմունայի՝ դեպի գյուղացիների կենդանի շահերն ու կենսական կարիքներն ուղղված ապելլյացիային:

«Կալվածատերերի «պատգամավորները» շատ լավ հասկանում եյին—և այս իսկապես նրանց գլխավոր յերկյուղն եր,—որ յերեք ամսվա ազատ հարաբերությունը Կոմունալ Փարիզի և գավառների միջև բավական ե, որպեսզի ընդհանուր գյուղացիական ապստամբություն առաջ գա: Այդ պատճառով էլ նրանք սարսափով լի շտապում եյին Փարիզը ոստիկանական պաշարման յենթարկել՝ վարակման ծավալումը խանգարելու համար:

Յեթե Կոմունան, այդպիսով, ֆրանսիական հասարակության բոլոր առողջ տարրերի իսկական ներկայացուցիչն եր, և այդ պատճառով էլ՝ իսկական ազգային կառավարությունը, ապա նա միևնույն ժամանակ իբրև բանվորական կառավարություն, իբրև աշխատանքի ազատագրման համարձակ առաջամարտիկ, բառի իսկական իմաստով միջազգային եր: Պրուսական զորքերի աչքերի առաջ, որոնք յերկու ֆրանսիական նահանգներ բռնագրավելով կցել եյին Գերմանիային, Կոմունան ամբողջ աշխարհի բանվորներին գրավելով՝ կցեց Ֆրանսիային:



Յերկրորդ կայսրությունը կոսմոպոլիտական խաբեբայության հոբելյանական տոնն եր. նրա կոչին արագությամբ հասել եյին բոլոր յերկրների բարձրաստիճան սրիկաները, որպեսզի մասնակցեն նրա օրգիաներին և ֆրանսիական ժողովրդի կողոպտմանը: Մինչև անգամ այս րոպեյիս էլ Թիերի աջ ձեռքը Գանեսկոն ե, վալախեցի խաբեբան, իսկ ձախ ձեռքը՝ Մարկովսկին, ռուսական լրտեսը: Կոմունան բոլոր ոտարներին պատիվ տվեց՝ մեռնելու անմահ գործի համար: Բուրժուազիան ժամանակ գտավ իր դավաճանության շնորհիվ տանուլ տված արտաքին պատերազմի և ոտար նվաճողի հետ սարքած իր դավադրության շնորհիվ սկսված քաղաքացիական պատերազմի միջև ընկած ժամանակամիջոցում ցույց տալ իր հայրենասիրությունը՝ ոստիկանական հալածանք կազմակերպելով գերմանացիների դեմ ամբողջ Ֆրանսիայում: Կոմունան մի գերմանացի բանվորի նշանակեց աշխատանքի մինիստր: Թե՛ Թիերը, թե՛ բուրժուազիան, թե՛ յերկրորդ կայսրությունը լեհերին շարունակ խաբել եյին իրենց համակրության բարձրագոչ արտահայտություններով, մինչդեռ իրապես նրանք Լեհաստանը մատնել եյին Ռուսաստանի ձեռքը և Ռուսաստանի կեղտոտ գործն եյին կատարում: Կոմունան հարգանք ցույց տվեց Լեհաստանի հերոս զավակներին նրանով, որ նրանց դրեց Փարիզի պաշտպանության գլուխը: Յեվ որպեսզի բոլորովին ակնբախ դառնա այն նոր պատմական դարաշրջանը, որ նա գիտակցաբար սկսում եր իրենով, Կոմունան մի կողմից հաղթական պրուսացիների աչքերի առաջ, մյուս կողմից՝ բոնապարտիստական գեներալների առաջնորդած բոնապարտիստական զորքի աչքերի առաջ ցած գլորեց ռազմական փառքի հսկայական խորհրդանշանը—Վանդոմի սյունը:

Կոմունայի մեծ սոցիալական ձեռնարկումը նրա սեփական, գործունեյությամբ լի, գոյությունն եր: Նրա ձեռնարկած առանձին միջոցառումները կարող եյին միայն այն ուղղությունը նշել, որով ընթանում ե ժողովրդի կառավարությունը հենց իրեն ժողովրդի միջոցով: Դրանց թվին ե պատկանում հացագործների ոգնականների գիշերային աշխատանքի վերացումը, պատժի սպառնալիքով աշխատանք տվողների սովորական պրակտիկայի արգելումը, որով նրանք ամեն տեսակ պատրվակներով բանվորների վրա տուգանքներ եյին նշանակում և այդ ձևով աշխատավարձն իջեցնում. գործունեյության մի յեղանակ, որի ժամանակ աշխատանք տվողը և՛ որենսդիր ե, և՛ դատավոր, և՛ կատարածու և միևնույն ժամանակ փողը գնում ե իր գրպանը:

Նույն տեսակի մի ձեռնարկում էր նաև բոլոր փակված արհեստանոցների և ֆաբրիկաների հանձնումը բանվորական ընկերություններին, փոխհատուցման իրավունք վերապահելով տերերին, անկախ այն հանգամանքից, թե տվյալ կապիտալիստն արդյոք փախե՞լ է, թե միայն գերադասել է աշխատանքը դադարեցնել:

Կոմունայի ֆինանսական ձեռնարկումներն աչքի էին ընկնում իրենց խոհականությամբ և չափավորությամբ և պետք է միայն նրանով սահմանափակվեյին, ինչ որ թույլ էր տալիս պաշարման վիճակում գտնվող քաղաքի դրությունը: Ոսմանի[1] իշխանության ժամանակ Փարիզ քաղաքն այնպես էին կողոպտում խոշոր ֆինանսական ընկերություններն ու շինարարական ձեռնարկությունները, որ Կոմունան շատ ավելի մեծ իրավունք ուներ նրանց սեփականությունը բռնագրավելու, քան Լուի Բոնապարտ—Օրլեանների տան սեփականությունը: Հոհենցոլլերններն ու անգլիական օլիգարխները, որոնց երկուսի էլ հարստությունների խոշոր մասը կողոպտված եկեղեցական գույքերից է կազմված, իհարկե, չափազանց վրդովված էին Կոմունայի արարքից, որ եկեղեցական գույքի աշխարհականացումից միայն 8000 ֆրանկ օգուտ ստացավ:

Քանի որ Վերսալի կառավարությունը, հենց որ նա կրկին մի փոքր արիություն և ուժ զգաց իր մեջ, սկսեց Կոմունայի դեմ ամենաբռնի միջոցները գործադրել. քանի որ նա ամբողջ Ֆրանսիայում ճնշում էր կարծիքների ազատ արտահայտությունը և մինչև անգամ արգելում էր մեծ քաղաքների պատգամավորների ժողովները. քանի որ նա Վերսալն ու ամբողջ Ֆրանսիան այնպիսի լրտեսման էր ենթարկել, որ շատ ավելի վատթար էր, քան թե երկրորդ կայսրության ժամանակ եղածը. քանի որ նա իր ժանդարմ-ինկվիզիտորների միջոցով այրել էր տալիս Փարիզում տպված բոլոր լրագրերը և բաց անում Փարիզից և Փարիզ գրվող բոլոր նամակները. քանի որ Ազգային Ժողովում Փարիզի օգտին որևէ խոսք ասելու ամենավեհերոտ փորձերին կատաղի վռնոցով էին պատասխանում, այնպիսի եղանակով, որ լսված չէր նույնիսկ 1816 թվականի կալվածատիրական պալատում. քանի որ վերսալցիներն արյունար-

[1] Բարոն Ոսման (Haussmann). Երկրորդ կայսրության ժամանակ Սենայի դեպարտամենտի, այսինքն՝ Փարիզի պրեֆեկտն էր: Մի շարք աշխատանքներ կատարեց նոր փողոցներ գցելու և այլն գծով՝ բանվորական ապստամբությունների դեմ մղվող պայքարը հեշտացնելու նպատակով: Խմբ.:



բու պատերազմ էին մղում Փարիզի դեմ քաղաքից դուրս և փորձ էին անում կաշառքով ու դավադրությամբ ներս մտնել Փարիզ,—այդպիսի պայմաններում Կոմունան մի՞թե խայտառակ կերպով դավաճանած չէր լինի իր կոչմանը, եթե նա պահպաներ լիբերալիզմի բոլոր վայելուչ ձևերը, ինչպես խորին խաղաղության ժամանակ: Եթե Կոմունայի կառավարությունն իր վոգով նման լիներ Թիերի կառավարությանը, ապա՝ ոչ մի պատճառ չէր լինի ճնշելու «կարգի կուսակցության» թերթերը Փարիզում, ինչպես և Կոմունայի լրագրերը Վերսալում:

Իսկապես «կալվածատիրական պալատի» պատգամավորների համար զայրանալու բան էր, որ հենց այն ժամանակ, երբ նա Ֆրանսիայի փրկության միակ միջոցն էր հայտարարում վերադարձը եկեղեցու գիրկը, այդ ժամանակ անհավատ Կոմունան բաց արեց Պիկպուսի կույսերի վանքի և ս. Լավրենտիոսի եկեղեցու առանձնահատուկ գաղտնիքները: Մի՞թե կծու սատիրա չէր Թիերի վերաբերմամբ, որ մինչդեռ նա Պատվո Լեգիոնի մեծ խաչեր էր թափում բոնապարտյան գեներալների վրա նրանց վարպետության համար ճակատամարտեր տանուլ տալու, կապիտուլյացիաներ ստորագրելու և Վիլհելմհոեյում պապիրոս փաթաթելու մեջ, Կոմունան իր գեներալներին արձակում էր պաշտոններից և ձերբակալում, հենց որ ամենաչնչին կասկած էր առաջ գալիս, թե նրանք իրենց պարտականությունների կատարման մեջ զանցառու յեն գտնվել: Մի՞թե մի կանխամտածված վիրավորանք չէր, նետված կեղծարար Ժյուլ Ֆավրի երեսին,—որ այն ժամանակ դեռ էլի Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրն էր և շարունակում էր Ֆրանսիան վաճառել Բիսմարկին, շարունակում էր հրամաններ թելադրել աննման բելգիական կառավարությանը,—երբ Կոմունան դուրս արեց և ձերբակալեց իր անդամներից մեկին նրա համար, որ նա սողոսկել էր Կոմունա կեղծ անվան ներքո և դրանից առաջ Լիոնում վեց օր բանտարկվել էր հասարակ սնանկության համար: Բայց իսկապես, Կոմունան անսխալական լինելու պրետենզիաներ չուներ, ինչպես որ այդ ունեն առանց բացառության բոլոր հին կառավարությունները: Նա հրապարակում էր իր նիստերում արտասանված բոլոր ճառերը, ընդհանուրի սեփականություն դարձնում իր բոլոր գործողությունները. նա իր բոլոր անկատարելությունները հայտնի էր դարձնում հասարակությանը:

Ամեն մի հեղափոխության մեջ նրա իսկական ներկայացուցիչների կողքին առաջ են մղվում նաև այլ տիպի մարդիկ:

Դրանցից միքանիսը նախկին հեղափոխությունների մասնակից-
ները և նրանց սնապաշտ յերկրպագուներն են, վորոնք չեն
ըմբռնում ժամանակակից շարժման իմաստը, բայց դեռևս մեծ
ազդեցություն ունեն ժողովրդի վրա՝ շնորհիվ իրենց ամենքին
հայտնի ազնվության ու արիության կամ պարզապես տրադի-
ցիայի: Մյուսները լոկ աղմկարարներ են, վորոնք տարիներ շա-
րունակ կրկնում են իրենց մշտապես միատեսակ դեկլամացիանե-
րը գոյություն ունեցող կառավարությունների դեմ և դրանով
ամենաբարձր տիպի հեղափոխականների անուն են հանում: Մար-
տի 18-ից հետո յել այդպիսի մարդիկ ասպարեզ յեկան և միքա-
նի դեպքերում մինչև անգամ առաջնակարգ դեր կատարեցին:
Վորքան ներում եր նրանց ուժերը, նրանք արգելք եյին հանդի-
սանում բանվոր դասակարգի իսկական գործողություններին,
ինչպես վոր նախկին հեղափոխությունների ժամանակ եյ խան-
գարել եյին այդ հեղափոխությունների լիակատար զարգացումը:
Նրանք անխուսափելի չարիք են, նրանցից կարելի յե ազատվել
միայն ժամանակի ընթացքում, բայց հենց այդ ժամանակը չու-
ներ Կոմունան:

Իսկապես զարմանալի յեր այն փոխակերպությունը, վորին
Կոմունան յենթարկեց Փարիզը: Յերկրորդ կայսրության անա-
ռակ Փարիզի հետքն անգամ չմնաց: Փարիզն այլևս հավաքատեղի
չեր բրիտանական խոշոր հողատերերի, իռլանդական աբսենտե-
իստների, ամերիկական եքս-ստրկատերերի և նորելուկների, ռու-
սական եքս-ճորտատերերի և վալախական բոյարների համար:
Մորգում (դիակատեղի)—վո՛չ մի դիակ, վո՛չ մի գիշերային
ավազակություն և համարյա վո՛չ մի գողություն: 1848 թ. փե-
տըրվարյան օրերից սկսած Փարիզի փողոցները վերջապես կրկին
ապահով եյին, և այս՝ առանց վորևէ վոստիկանության: «Մենք,
—ասում եր Կոմունայի անդամներից մեկը,—այժմ այլևս վոչինչ
չենք լսում սպանությունների, թալանների և անձի դեմ գործ-
ված հանցանքների մասին, կարծես թե, իսկապես, վոստիկա-
նությունն իր հետ Վերսալ ե տարել իր բոլոր կոնսերվատիվ բա-
րեկամներին»: Կոկոտուհիները կրկին գտել եյին իրենց հովանա-
վորողների—ընտանիքի, կրոնի և ամենից առաջ սեփականու-
թյան այդ փախստական պաշտպանների—ճանապարհը: Նրանց
տեղը բռնեցին դարձյալ իսկական Փարիզի կանայք, այնպես հե-
րոսական, մեծահոգի և անձնվեր, ինչպես հին կլասիկ աշխար-
հի կանայք: Փարիզը—աշխատանքի, մտածմունքի, կռվի մեջ,



արյունաքամ, նոր հասարակություն կառուցելու ընթացքում
գրեթե մոռանում եր, վոր կաննիբալներն իր դռների առաջ են,
բայց նա գտնվում եր իր պատմական նախաձեռնության գիտակ-
ցության շողշողուն վոգևորության մեջ:

Յեվ ահա, Փարիզի այս նոր աշխարհի դիմաց կանգնած եր
Վերսալի հին աշխարհը—բոլոր մեռած ռեժիմների այդ թափթը-
փուկը, լեգիտիմիստներն ու օռլեանիստները, ազգի դիակը
կտոր-կտոր անելու ծարավով լցված—անդրջրհեղեղյան հանրա-
պետականներից կազմված մի պոչով, վորոնք իրենց ներկայու-
թյամբ Ազգային Ժողովի մեջ պաշտպանում եյին ստրկատերերի
բունտը, վորոնք հույս ունեյին, թե իրենց պառլամենտական
հանրապետությունը կպահպանեն շնորհիվ իշխանության գլուխ
անցած ծերացած արլեկինի, և ծաղրանկարում եյին 1789 թվա-
կանը նրանով, վոր իրենց խորհրդավոր ժողովները կայացնում
եյին Jeu de Paume-ում (գնդակախաղի դահլիճում, վորտեղ 1789
թվականի Ազգային Ժողովն ընդունել եր իր հռչակավոր վորո-
շումները): Ահա այդ ժողովը, վոր ներկայացուցիչ եր այն ամե-
նի, ինչ վոր արդեն մեռած եր Ֆրանսիայում, բայց վորն առերե-
վույթ կյանք ունենալու դիրք եր բռնել՝ հենված միայն ևեթ
Լուի Բոնապարտի գեներալների թրերի վրա: Փարիզն—ամբողջու-
թյամբ ճշմարտություն, Վերսալն—ամբողջությամբ ստություն:
Յեվ այս ստության մունետիկը Թիերն եր:

Թիերը Սենայի և Ուազի դեպարտամենտների քաղաքագլուխ-
ների պատգամավորություններից մեկին դիմեց հետևյալ խոսքե-
րով. «Դուք կարող եք վստահ լինել իմ խոսքի վրա, վոր յես
յերբեք չեմ կոտրել»: Ժողովին նա ասում եր, թե «այդ ժողովն
ամենից ավելի ազատորեն ընտրված և ամենից ավելի լիբերալ
ժողովն ե, վոր յերբևիցե ունեցել ե Ֆրանսիան». իր խայտա-
բղետ զինվորությանը նա ասում եր, թե «նրանք ամբողջ աշխար-
հի զարմանքն են և ամենալավ բանակը, վոր յերբևիցե ունեցել ե
Ֆրանսիան». գավառներին հավատացնում եր, թե Փարիզի ռմ-
բակոծումը միայն հեքիաթ ե. «Յեթե միքանի ռումբեր ընկել ել
են, ապա այդ Վերսալի բանակի կողմից չի կատարվել, այլ մի-
քանի ինսուրգենտների կողմից, վորոնք ուզում եյին ցույց տալ,
թե կռվում են, մինչդեռ նրանք չեն համարձակվում վո՛չ մի տեղ
յերևալ»: Հետագայում նա հայտարարում եր գավառներին.
«Վերսալի հրետանին չի ռմբակոծում Փարիզը, այլ միայն գըն-
դակոծում ե թնդանոթներով այն»: Փարիզի արքեպիսկոպոսին

Նա ասում է, թե միանգամայն սուտ են այն լուրերը Վերսալի զորքերի մասին, իբր թե նրանք գնդակահարություններ ու բռնություններ (!) են կատարել: Փարիզին նա հայտարարում է, թե մտադիր է միայն «Փարիզն ազատել այն զզվելի բռնակալներից, վորոնք ճնշում են նրան» և թե՝ Կոմունայի Փարիզն իսկապես «վո՛չ այլ ինչ է, յեթե վոչ միայն վոճրագործների մի խումբ»:

Թիերի Փարիզն «սառը ամբոխի» իսկական Փարիզը չէր, այլ յերևակայության Փարիզը, սրիկաների Փարիզը, բուլվարների արական և իգական մշտական այցելուների Փարիզը, հարուստ, կապիտալիստական, վոսկեզօծված, ծրիակեր Փարիզը. այն Փարիզը, վոր այժմ իր լակեյներով, իր բարձրաստիճան խաբեբաներով, իր գրական բոհեմայով և իր կոկոտուհիներով լցնում էր Վերսալը, Սեն-Դենին, Ռյուելը և Սեն-Ժերմենը. Նրանց համար քաղաքացիական պատերազմը միայն մի հետաքրքրական միջնախաղ էր, վոր նրանք հաճույքով դիտում եյին հեռադիտակներով. Նրանք հաշվում եյին թնդանոթների հարվածները, յերդվում եյին իրենց սեփական պատվով և իրենց պոռնիկների պատվով, վոր այստեղ թատերախաղն անհամեմատ ավելի լավ է սարքված, քան թե յերբևիցե յեղել է Porte St. Martin-ի թատրոնում: Չէ՞ վոր ընկածներն իսկապես սպանված եյին, վիրավորների աղաղակը կեղծ չէր և նրանց աչքերի առաջ կատարվող ամբողջ դրաման համաշխարհային-պատմական դրամա յէր:

Այս էր պարոն Թիերի Փարիզը, ճիշտ այնպես, ինչպես վոր Կոբլենցի էմիգրացիան պարոն դե-Կալոննի Ֆրանսիան էր:

## IV

Ստրկատերերի դավադրության՝ Փարիզը նվաճելու առաջին փորձը, վորի համաձայն պրուսական զորքերը պետք է գրավեյին այն, հաջողություն չունեցավ միայն այն պատճառով, վոր Բիսմարկը մերժեց այդ առաջարկը: Յերկրորդ փորձը, մարտի 18-ին, վերջացավ զորքի պարտությամբ և կառավարության Վերսալ փախչելով, ուր նրա հետևից գնաց նաև ամբողջ վարչական մեքենան: Փարիզի հետ հաշտության բանակցություններ վարելու պատրվակով՝ Թիերն այժմ ժամանակ վաստակեց Փարիզի դեմ պատերազմ նախապատրաստելու համար: Բայց վո՞րտեղից պետք է նա զորք գտներ: Գծային գնդերի մնացորդները թվով սակավ եյին, իսկ տրամադրությամբ՝ անհուսալի: Թիերի





Կոմունարուհու գնդակահարումը:

Թախանձագին կոչերը գավառներին, վորպեսզի իրենց Ազգային զվարդիայով և կամավորներով շտապեն Վերսալին ոգնության, բացարձակ մերժման հանդիպեցին: Միայն Բրետանն ուղարկեց մի բուռ շուաններ, վորոնք կռվում եյին սպիտակ դրոշակի ներքո, յուրաքանչյուրի կրծքին Հիսուսի սիրտը սպիտակ քաթանի մեջ կարված, և վորոնց մարտակոչն եր՝ կեցցե՛ թագավորը: Այդպիսով՝ Թիերին մնում եր շտապով իրար գլխի հավաքել մի խայտաբղետ ամբոխ՝ բաղկացած նավաստիներից, ծովային զինվորներից, պապական զուավներից, Վալանտենի ժանդարմներից, Պյետրիի վոստիկաններից և լրտեսներից: Սակայն այդ զորքը ծիծաղելի աստիճանի անբավարար կլիներ, առանց հետզհետե ժամանող կայսերական զորքի պատերազմական գերիների, վոր Բիսմարկը բաց եր թողնում մաս առ մաս, այնքան քանակությամբ, վոր բավական եր մի կողմից՝ քաղաքացիական պատերազմն սկսելու, իսկ մյուս կողմից՝ Վերսալը Պրուսիայից ստորկական կախման մեջ պահելու համար: Այս պատերազմի ընթացքում Վերսալի վոստիկանությունը պետք ե հսկողություն ունենար Վերսալի զորքի վրա, իսկ ժանդարմները պետք ե շարունակ այդ զորքին վոգևորեյին և իրենց հետևից տանեյին, ամենուրեք կանգնելով բոլորից առաջ՝ ամենավտանգավոր դիրքերում: Այն ամրությունները, վորոնք ընկնում եյին, վո՛չ թե նվաճվում եյին, այլ գնվում: Կոմունարների հերոսական արիությունը համոզեց Թիերին, վոր Փարիզի դիմադրությունը կոտրելու համար բավական չեն վո՛չ իր սեփական ռազմագիտական հանճարը և վո՛չ ել իր տրամադրության տակ յեղած սվինները:

Միաժամանակ ավելի և ավելի լարվում եյին նրա հարաբերությունները գավառների հետ: Վերսալը վո՛չ մի քաջալերագիր չստացավ, վոր կարողանար փոքր ինչ խրախուսել Թիերին և նրա «կալվածատերների պատգամավորներին»: Բոլորովին ընդհակառակը: Ամեն կողմից պատգամավորություններ և գրավոր դիմումներ եյին տեղում, վորոնք պահանջում եյին, բոլորովին վոչ հարգալից տոնով, հաշտվել Փարիզի հետ, հիմք ընդունելով հանրապետության աներկմիտ ճանաչումը, կոմունալ ազատությունների հաստատումը և Ազգային Ժողովի ցրումը, վորի լիազորությունների ժամանակն արդեն անցել ե: Այդ պատգամավորություններն ու դիմումները այնպիսի թիվ եյին կազմում, վոր Դյուֆորը, Թիերի արդարադատության մինիստրը, պետական դատախազներին ուղղված ապրիլի 23-ի շրջաբերականում հրամայում

էր «հաշտության կոչերը» վոճրագործություն համարել: Սակայն, նկատի ունենալով Փարիզի դեմ իր սկսած արշավանքի անհուսալի հեռանկարը, Թիերը վճռեց փոխել իր գործելակերպը և ամբողջ յերկրի համար ապրիլի 30-ին համայնական խորհուրդների ընտրություններ նշանակեց, վոր պետք է կատարվեին նոր, նրա կողմից Ազգային ժողովին թելադրված, համայնական կանոնադրության հիման վրա: Գործելով մի տեղ իր պրեֆեկտների ինտրիգներով, մի այլ տեղ իր ոստիկանության սպառնալիքներով՝ նա միանգամայն վստահ հույս եր տածում, թե գավառների ընտրություններն այնպիսի բարոյական ուժ կընձեռեն Ազգային ժողովին, վոր նա յերբեք չեր ունեցել. նա հույս ուներ նաև գավառներից ստանալու այն նյութական ուժը, վոր պետք եր նրան՝ Փարիզը նվաճելու համար:

Թիերն սկզբից ևեթ կարևոր եր համարել իր ավազակային պատերազմը Փարիզի դեմ, վոր փառաբանում եյին նրա սեփական բյուլետենները, ինչպես և իր մինիստրների՝ ամբողջ Ֆրանսիայում մի նոր ահաբեկիչ իշխանություն ստեղծելու փորձերը—լրացնել հաշտության մի փոքրիկ կատակերգությամբ, վոր պետք է միքանի նպատակների ծառայեր: Այդ կատակերգությունը պետք է մոլորեցներ գավառներին, գրավեր միջին դասակարգին Փարիզում, և ամենից առաջ հնարավորություն տար Ազգային ժողովի կեղծ հանրապետականներին իրենց դավաճանությունը Փարիզի դեմ թաքցնելու Թիերի վրա ունեցած վստահությամբ: Մարտի 21-ին, յերբ Թիերը դեռ զորք չուներ, նա հայտարարեց Ազգային ժողովում. «Ինչ ուզում է լինի, յես զորք չեմ ուղարկի Փարիզի վրա»: Մարտի 27-ին նա կրկին հայտարարեց. «Յես պաշտոնի մտնելիս հանրապետությունը գտել եմ իբրև մի կատարված իրողություն, և յես հաստատապես վճռել եմ պահպանել այն»: Իսկ իրականության մեջ նա Լիոնի և Մարսելի հեղափոխությունները ճնշեց հանրապետության անունով, մինչդեռ Վերսալում նրա «կալվածատերերի պատգամավորները» իրենց վռնոցով լռեցնում եյին մինչև անգամ «հանրապետության» անվան հիշատակությունը: Այս հերոսական գործից հետո նա կատարված իրողությունն սկսեց միայն յենթադրված իրողություն համարել: Որլեանական պրինցները, վորոնց նա զգուշության համար հեռացրել եր Բորդոյից, այժմ ազատորեն ինտրիգներ եյին լարում Դրյոյում՝ բացարձակապես խախտելով որենքը: Այն պայմանները, վորոնց մասին Թիերը խոսում եր



անվերջ խորհրդակցությունների ժամանակ Փարիզի և գավառների պատգամավորների հետ—վորքան ել նրանց տոնն ու գունավորումը շարունակ փոխվում եր ժամանակից ու հանգամանքներից կախված—վերջիվերջո հանգում եյին միշտ մի բանի, թե նրա վրեժը հավանորեն սահմանափակվելու յե «այն մի բուռ վոճրագործներով, վորոնք մասնակցել են Կլեման Թոմայի և Լեկոնտի սպանությանը». և այս, իհարկե, այն պայմանով, վոր Փարիզն ու Ֆրանսիան պարոն Թիերին իրեն առանց այլևայլության ընդունեն իբրև ամենալավ հանրապետությունը, ճիշտ այնպես, ինչպես վոր ինքը 1830 թվին Լուի-Ֆիլիպպին եր համարել ամենալավ հանրապետությունը: Ինչ վերաբերում է այդ զիջումներին,—նա վո՛չ միայն հոգ եր տանում կասկածելի դարձնելու նրանց՝ պաշտոնական բացատրությունների միջոցով, վոր նրա մինիստրներն այդ առթիվ տալիս եյին Ազգային ժողովում, այլև նա բացի դրանից գործում եր Դյուֆորի միջոցով: Դյուֆորը, այս հին որլեանիստ փաստաբանը, պաշարողական դրության ժամանակ միշտ գերագույն դատավոր եր յեղել, ինչպես այժմ 1871 թվին՝ Թիերի օրով, այնպես ել 1839 թվին՝ Լուի-Ֆիլիպպի ժամանակ և 1849 թվին՝ Լուի Բոնապարտի նախագահության օրերին: Յերբ նա մինիստր չեր, հարստություն եր դիզում Փարիզի կապիտալիստներին պաշտպանելով, իսկ քաղաքական կապիտալ ձեռք բերեց՝ հանդես գալով այն որենքների դեմ, վոր ինքն եր հրատարակել: Այժմ, չբավականանալով նրանով, վոր մի շարք ճնշիչ որենքներ եր անցկացրել Ազգային ժողովի միջոցով, վորոնք Փարիզի անկումից հետո պետք է այնտեղ արմատախիլ անեյին հանրապետական ազատության վերջին մնացորդները, նա ինքը նախորոք նշում եր Փարիզի վիճակը նրանով, վոր կրճատեց ռազմական դատարանների իրեն չափազանց յերկար թվացող դատավարությունը և աքսորի մի նոր, դրակոնական որենք հրատարակեց: 1848 թվականի հեղափոխությունը, վերացնելով քաղաքական հանցավորների համար մահվան պատիժը, նրա փոխարեն դրել եր աքսորը: Լուի Բոնապարտը չհանդգնեց գոնե բացարձակ կերպով վերահաստատելու գիլյոտինի իշխանությունը: Այդ պատճառով ել Վերսալի կալվածատիրական ժողովը, վոր դեռ բավականաչափ համարձակություն չուներ մինչև անգամ միայն նշելու, թե փարիզեցիք, նրա կարծիքով, ապստամբներ չեն, այլ մարդասպաններ են, ստիպված եր իր կանխորոշված վրեժխնդրության մեջ սահմանափակվելու Դյու-

Փորի աքսորի նոր օրենքով: Այս բոլոր հանգամանքների մեջ Թիերը չէր կարող այնքան երկար ժամանակ խաղալ իր հաշտության կատակերգությունը, եթե այդ կատակերգությունն առաջ չբերեր, ինչպես որ նա ինքն էլ ուզում էր, «կալվածատերերի պատգամավորների» կատաղի բարկությունը, որոնք իրենց բթամտությունից ո՛չ նրա խաղն էին ըմբռնում և ո՛չ էլ նրա կեղծավորության, նենգության և զալվածության անհրաժեշտությունը:

Աչքի առաջ ունենալով առաջիկա համայնական ընտրությունները ապրիլի 30-ին, Թիերը ապրիլի 27-ին խաղաց իր հաշտության մեծ տեսարաններից մեկը: Սենտիմենտալ ֆրազների հեղեղի մեջ նա Ազգային ժողովի ամբիոնից, ի միջի այլոց, բացականչեց. «Միակ դավադրությունը, որ կա հանրապետության դեմ, դա Փարիզի դավադրությունն է, որ մեզ հարկադրում է ֆրանսական արյուն թափել: Բայց ես կրկնում եմ նորից և նորից. թո՛ղ վայր դնեն այդ անիծյալ զենքերն այն ձեռքերը, որ բարձրացրել են այն, և պատիժն անմիջապես կդադարեցվի հաշտության այնպիսի մի պայմանագրի միջոցով, որից դուրս կմնա ոճրագործների միայն մի փոքրաթիվ խումբ»: Ի պատասխան «կալվածատերերի պատգամավորների» նրա ճառն ընդհատող բուռն բացականչությունների, նա ասաց. «Ասացե՛ք ինձ, պարոննե՛ր, թախանձագին խնդրում եմ ձեզ, մի՞թե ես իրավացի չեմ: Մի՞թե ձեզ իսկապես ցավ է պատճառում, որ ես կարողացա ճշմարտությունն ասել, թե ոճրագործները միայն մի փոքրիկ խումբ են: Մի՞թե երջանկություն չէ մեր բոլոր դժբախտությունների մեջ, որ հազվադեպ բացառություն են կազմում այն մարդիկ, որոնք ընդունակ էին թափելու Կլեման Թոմայի և գեներալ Լեկոնտի արյունը»:

Սակայն Ֆրանսիայի ականջները խուլ էին Թիերի ճառերի համար, որոնցով նա հույս ուներ, իբրև պառլամենտական սիրենայի երգով, հրապուրելու բոլորին: Բոլոր 700.000 համայնական խորհրդականներից, որոնք ընտրվեցին Ֆրանսիայի մնացած 35.000 համայնքներում, միացյալ լեգիտիմիստները, օռլեանիստներն ու բոնապարտիստները 8000 հոգի էլ չկարողացան անցկացնել: Լրացուցիչ ընտրություններն ու կրկնաքվեարկությունները է՛լ ավելի թշնամական արդյունք տվին Թիերի կառավարության համար: Ազգային ժողովը՝ փոխանակ գավառներից իրեն համար այնքան կարևոր նյութական ուժն ստանալու,






Ժյուլ Ֆավր. Դե ոգնեցէք մեզ ընկճելու Փարիզը, մեծարգո՛ պարոն Բիսմարկ:
Բիսմարկ. Լա՛վ, լա՛վ, ես կմտածեմ և կպատասխանեմ ձեզ: Դե, վե՛ր կացէք:

կորցրեց նույնիսկ բարոյական ուժի վերջին իրավունքը—Ֆրանսիայի ընդհանուր ձայնավորության արտահայտությունը լինելու իրավունքը: Եվ պարտությունը կատարյալ դարձնելու համար՝ բոլոր ֆրանսական քաղաքների նոր ընտրված համայնական խորհուրդների անդամները Վերսալի ուզուրպատորական ժողովին սպառնում էին մի հակաժողովով՝ Բորդոյում:

Դրանով արդեն հասել էր Բիսմարկի համար վճռական միջամտության երկար սպասված րոպեն: Նա իշխանական տոնով հրամայեց Թիերին անմիջապես լիազորներ ուղարկելու Ֆրանկֆուրտ՝ վերջնական հաշտություն կնքելու համար: Հլու հնազանդությամբ լսելով իր տիրոջ և հրամայողի կոչը՝ Թիերը Ֆրանկֆուրտ ուղարկեց իր հավատարիմ Ժյուլ Ֆավրին և Պույե-Քերթյեին: Պույե-Քերթյեն Ռուանի մի «հայտնի» բամբակագործ ֆաբրիկանտ էր, երկրորդ կայսրության ջերմ և մինչև անգամ ստրկամիտ կողմնակից: Նա այդ կայսրության մեջ ո՛չ

մի վատթար բան չէր տեսնում, բացի Անգլիայի հետ ունեցած առևտրական պայմանագրից, որ վնաս էր հասցնում նրա սեփական ֆաբրիկանտական շահերին: Հազիվ էր Թիերը նրան Բորդոյում ֆինանսների մինիստր նշանակել, և արդեն նա սկսեց հարձակվել այդ «դժբախտ» պայմանագրի վրա, ակնարկներ անել, որ շուտով վոչնչացվելու յե այն, և մինչև անգամ անամոթություն ունեցավ, թեև ապարդյուն կերպով (վորովհետև չէր հարցրել Բիսմարկի թույլտվությունը), փորձելու անմիջապես մտցնելու Էլզասի դեմ հին պրոտեկցիոնական մաքսերը, վորին, նրա ասելով, վո՛չ մի նախկին միջազգային պայմանագիր չէր խանգարում: Այդ մարդը, վոր հակահեղափոխությունը մի միջոց էր համարում աշխատավարձը Ռուանում իջեցնելու, և ֆրանսական գավառները գիջելը մի միջոց էր համարում իր ապրանքների գները Ֆրանսիայում բարձրացնելու համար—մի՞թե նա Ժյուլ Ֆավրի արժանավոր ընկերը չէր սրա վերջին, իր կյանքի ամբողջ գործը պսակող դավաճանության մեջ:

Երբ լիազորների այս հիանալի զույգը Ֆրանկֆուրտ հասավ, Բիսմարկը խստությամբ դիմեց նրանց հետևյալ հրամանով. «Կա՛մ կայսրությունը վերահաստատել, կա՛մ առանց այլևայլության ընդունել իմ սեփական հաշտության պայմանները»: Այդ պայմանները պահանջում էին կրճատել պատերազմական տուգանքի վճարման ժամկետները և Փարիզի ամրությունները պրուսական զորքերով գրավված պահել այնքան ժամանակ, մինչև վոր Բիսմարկն իրեն բավարարված հայտարարի իրերի դրությամբ Ֆրանսիայում: Այդպիսով, Պրուսիան գերագույն միջնորդ դատավոր ճանաչվեց Ֆրանսիայի ներքին գործերի մեջ: Դրա փոխարեն Բիսմարկը լիակատար պատրաստակամություն հայտնեց Փարիզը վոչնչացնելու համար բաց թողնել գերված բոնապարտիստական զորքը և կարիքի դեպքում նրանց անմիջական օգնություն ցույց տալ Վիլհելմ կայսրի զորքերով: Իբրև գրավական իր ազնվության՝ նա հետաձգեց պատերազմական տուգանքի առաջին վճարի ժամկետը մինչև Փարիզի «խաղաղացումը»: Թիերն ու նրա լիազորներն, իհարկե, ագահությամբ կուլ տվին այդ հրապուրիչ խայծը: Նրանք պայմանագիրն ստորագրեցին մայիսի 10-ին և հոգ տարան, վոր Ազգային Ժողովը հաստատի այն արդեն մայիսի 21-ին:

Հաշտություն կնքելու և բոնապարտյան գերիների վերադարձի միջև ընկած ժամանակաշրջանում Թիերն իրեն ավելի և






LA REPONSE

LES AFFAIRES SONT LES AFFAIRES

ՊԱՐՈՆ ԺՅՈՒԼ ՖԱՎՐԻՆ, ՎԵՐՍԱԼ.

— Մի միլիարդ էլ տվեք, և յես Փարիզում կարգ կմտցնեմ:

Բիսմարկ:

պարտավոր էր զգում չարունակելու իր հաշտության կատակերգությունը: Այդ բանն առավել ևս անհրաժեշտ էր նրա համար, վորովհետև նրա հանրապետական ոգնականները ծայրահեղ կարիք եյին զգում այնպիսի մի պատրվակի, վոր կարողանային աչքի մեկը փակել և չտեսնել Փարիզի արյան բաղնիքի նախապատրաստությունները: Դեռ մայիսի 8-ին նա պատասխանեց մանր բուրժուազիայի կողմից յեկած մի հաշտարար պատգամավորության. «Հենց վոր ինսուրգենտները վճռեն անձնատուր լինել, Փարիզի դռներն ամբողջ մի շաբաթ լայն բացված կլինեն բոլորի համար, բացի Կլեման Թոմա և Լեկոնտ գեներալներին սպանողներից»:

Դրանից միքանի օր հետո, յերբ «կալվածատերերի պատգամավորները» այդ խոստման համար նրանից խստությամբ բացատրություն պահանջեցին, նա մերժեց վորևե պատասխան տալ, բայց հետևյալ նշանակալից ակնարկն արեց. «Յես ասում եմ ձեզ, վոր մեր մեջ անհամբեր մարդիկ կան, վորոնք արդեն չափազանց շտապում են: Նրանք պետք է դեռ ութ օր էլ համբերեն. այդ ութ օրից հետո այլևս վո՛չ մի վտանգ չի լինի և խնդիրը միանգամայն համապատասխան կլինի նրանց արիության ու նրանց ընդունակություններին»: Հենց վոր Մակ-Մահոնը կարողացավ խոստանալ նրան, վոր շուտով Փարիզ կմտնի, Թիերը հայտարարեց Ազգային Ժողովին, թե «նա Փարիզ է մըտնելու օրենքը ձեռքին և լիակատար հատուցումն է պահանջելու այն սրիկաներից, վորոնք թափել են զինվորների արյունը և խորտակել են հասարակական հուշարձանները»: Յերբ մոտեցավ վճռական վայրկյանը, նա ասաց Ազգային Ժողովին. «Յես պետք է անողոք լինեմ», Փարիզին՝ թե նրա դատավճիռն արդեն հանված է, իսկ իր բոնապարտիստական բանդիտներին՝ թե նրանք կառավարության կողմից թույլտվություն ունեն Փարիզից վրեժ լուծելու, ինչպես կամենան: Վերջապես, յերբ մայիսի 21-ին դավաճանությունը Փարիզի դռները բաց արեց գեներալ Դուեյի առաջ, Թիերը մայիսի 22-ին իր «կալվածատերերի պատգամավորներին» հայտնեց իր հաշտության կատակերգության «նպատակը», վոր նրանք համառությամբ չեյին կամեցել հասկանալ:

«Յես միքանի օր առաջ ասացի ձեզ, վոր մենք մոտենում ենք մեր նպատակին. այսոր յես գալիս եմ ձեզ ասելու, վոր մենք արդեն հասել ենք այդ նպատակին: Կարգը, արդարությունն ու քաղաքակրթությունը վերջապես հաղթանակը տարան»:

Այո՛, այդ հաղթանակ եր: Բուրժուական կարգի քաղաքակրթությունն ու արդարությունը հանդես են գալիս իրենց իսկական, փոթորկվող հղի լույսի մեջ, հենց որ ստրուկներն այդ կարգի մեջ ըմբոստանում են իրենց տերերի դեմ: Այն ժամանակ այդ քաղաքակրթությունն ու արդարությունը յերևան են գալիս իբրև անքող վայրագություն և անօրեն վրեժխնդրություն: Յուրաքանչյուր մի նոր ճգնաժամ հարստություն արտադրողների և յուրացնողների միջև տեղի ունեցող դասակարգային կռվի մեջ՝ ավելի ակնբախ է դարձնում այդ իրողությունը: 1871 թվականի անասելի ստոր նենգությունների առաջ անհետանում են մինչև անգամ բուրժուազիայի 1848 թ. հունիսին կատարած գազանությունները: Այն անձնանվեր հերոսությունը, որով Փարիզի ամբողջ ժողովուրդը—մարդ, կին ու յերեխա—դեռ ութ օր շարունակում եր կռվել վերսալցիների քաղաք ներխուժելուց հետո, արտացոլում է նրա գործի մեծությունը նույնպիսի պայծառությամբ, ինչպես որ սալդատների դժոխային գործերն արտացոլում են այն քաղաքակրթության բնիկ ոգին, որի վարձկան առաջամարտիկներն ու վրիժառուներն եյին նրանք: Իսկապես որ մի փառավո՜ր քաղաքակրթություն, որի դժվար լուծելի խնդիրն այն եր, թե ի՛նչպես ազատվի մարդկանց դիակների այն կույտերից, որ ստեղծել եր ինքը, յերբ կռիվն արդեն վերջացած եր:

Թիերի և նրա արյան ծարավի շների վարմունքին նման մի բան գտնելու համար մենք պետք է վերադառնանք Սուլլայի և Հռոմեական յերկու յեռապետությունների ժամանակները: Միևնույն սառնարյուն մասսայական կոտորածը. նույն անտարբեր վերաբերմունքն սպանելու ժամանակ դեպի հասակն ու սեռը. գերիներին տանջելու նույն սիստեմը. նույն հալածանքը, բայց այս անգամ մի ամբողջ դասակարգի դեմ. թաքնված ղեկավարների միևնույն կատաղի որսը, որպեսզի նրանցից ո՛չ մեկը չազատվի. նույն մատնիչությունը քաղաքական և անձնական թշնամիների դեմ. նույն անտարբերությունը՝ կռվից բոլորովին հեռու կանգնած մարդկանց կոտորելիս: Միայն մի տարբերություն կա. այդ այն է, որ հռոմեյացիները դեռ միտրալյոզներ չունեյին՝ գերիներին խմբերով գնդակահարելու համար և նրանք «իրենց ձեռքերին օրենք չեյին կրում», ո՛չ էլ իրենց շրթունքներին «քաղաքակրթություն» բառը:

Յեվ այս խայտառակ վայրագություններից հետո տեսե՛ք



այժմ այդ բուրժուական քաղաքակրթության մյուս, ե՛լ ավելի գզվելի կողմը, որ նկարագրել է իր իսկ սեփական մամուլը:

Լոնդոնի պահպանողական լրագրերից մեկի Փարիզի թղթակիցը գրում է. «Մինչդեռ հեռվում հնչում են դեռ առանձին կրակոցների ձայները և անխնամ վիրավորները մեռնում են Père La Chaise-ի գերեզմանատան հուշարձանների արանքներում, մինչդեռ 6000 սարսափահար ինսուրգենտներ հուսահատության մահառիթ կռվում մոլորվել են կատակոմբների լաբյուրինթոսի մեջ, և բազմաթիվ դժբախտների դեռ հալածում են փողոցներում, որպեսզի խմբերով գնդակահարեն միտրալյոզներով,— վրդովեցուցիչ է տեսնել, թե ինչպես սրճարանները լցված են աբսենտ խմողներով, բիլյարդ և դոմինո խաղացողներով, տեսնել, թե ինչպես ապականված կանայք լցված են բուլվարները, և լսել, թե ինչպես ճոխ ռեստորանների առանձին կաբինետներից հնչող օրգիաների բարձրաղաղ աղմուկը խանգարում է գիշերային անդորրը»: Պարոն Եդվարդ Երվեն գրում է «Journal de Paris»-ում, վերսալյան մի լրագրում, որ արգելված եր Կոմունայի կողմից. «Այն յեղանակը, որով յերեկ Փարիզի բնակչությունն (!) արտահայտում եր իր գոհունակությունը, իսկապես ավելի քան թեթևամիտ է, և մենք վախենում ենք, որ այս քանի գնա, այնքան ավելի վատանա: Փարիզն այժմ տոնական կերպարանք ունի, որ միանգամայն անտեղի յե. և յեթե մենք չենք ուզում «անկման շրջանի փարիզեցիներ» կոչվել, պետք է այդ բանին վերջ տալ»: Յեվ ապա նա քաղվածորեն բերում է Տակիտոսի հատվածը. «Յեվ այնուամենայնիվ, այն սոսկալի կռվի հետևյալ առավոտը և դեռ ավելի վաղ, յերբ այն բոլորովին վերջացած չեր, ստորացած և ապականված Հռոմն սկսեց կրկին թավալվել հեշտասիրության այն ճահճի մեջ, որ քայքայում եր նրա մարմինը և արատավորում նրա հոգին—alibi proelia et vulnera, alibi balnea popinaeque (այստեղ կռիվներ ու վերքեր, այնտեղ բաղնիքներ ու ռեստորաններ)»:—Պարոն Հերվեն մոռանում է միայն, որ Փարիզի այն բնակչությունը, որի մասին նա խոսում է, միայն Թիերի Փարիզի բնակչությունն է, խաբեբաների Փարիզի, որոնք խմբերով վերադառնում եյին Վերսալից, Սեն-Դենիից, Ռյուելից և Սեն-Ժերմենից. իսկապես որ դա «անկման շրջանի Փարիզն եր»:

Այս՝ աշխատանքի ստրկացման վրա հիմնված՝ խայտառակ քաղաքակրթությունն իր յուրաքանչյուր արյունահեղ հաղթանա-

նի ժամանակ խլացնում է իր զոհերի, նոր և լավագույն հասարակության անձնվեր առաջամարտիկների աղաղակը հալածանքի և զրպարտության վոռնոցով, վոր իր արձագանքն է գտնում աշխարհի բոլոր ծայրերում: Կոմունայի ուրախ բանվորական Փարիզը «կարգի» այդ արյունածարավ շների ձեռքի տակ հանկարծ մի դժոխքի է վերածվում: Յեվ ի՞նչ է ասում այս հրեշավոր փոխակերպությունը բոլոր յերկրների բուրժուազիայի բանականությանը: Ուրիշ վոչի՞նչ, բացի այն, վոր Կոմունան դավադրություն է կազմել քաղաքակրթության դե՞մ: Փարիզի ժողովուրդը վոգևորությամբ զոհաբերում է իրեն Կոմունայի համար. վո՛չ մի նախկին ճակատամարտ սպանվածների այդպիսի թիվ չի տվել: Ի՞նչ է ապացուցում այս: Ուրիշ վոչի՞նչ, բացի նրանից, վոր Կոմունան վո՛չ թե ժողովրդի սեփական կառավարությունն էր, այլ մի բուռն վոճրագործների բռնությամբ գրաված իշխանությո՞ւնը: Փարիզի կանայք ուրախությամբ զոհում են իրենց կյանքը բարիկադների վրա և կառափնավայրերում: Ի՞նչ է ապացուցում այս: Ուրիշ վոչի՞նչ, բացի նրանից, վոր Կոմունայի դևը նրանց Մեգերներ և Հեկատնե՞ր է դարձրել: Կոմունայի չափավորությունն իր անվիճելի իշխանության յերկու ամիսների ընթացքում կարող է համեմատվել միայն նրա պաշտպանության հերոսական քաջության հետ: Ի՞նչ է ապացուցում այս: Ուրիշ վոչի՞նչ, բացի նրանից, վոր Կոմունան յերկու ամիս շարունակ չափավորության և մարդկայնության դիմակի ներքո խնամքով ծածկում էր իր արյան ծարավի դիվական կըրքերը, վորպեսզի ազա՛տ արձակի այն իր մահացու կռվի ժամի՞ն:

Բանվորների Փարիզն իր հերոսական անձնազոհության գործողությունների ժամանակ կրակի մատնեց նաև շենքեր ու հուշարձաններ: Յերբ պրոլետարիատի վրա իշխողները նրա կենդանի մարմինը կտոր-կտոր են անում, թող նրանք այլևս հույս չունենան կրկին հաղթանակով վերադառնալու իրենց անվնաս մնացած բնակարանները: Վերսալի կառավարությունն աղաղակում է՝ «հրձիգությո՛ւն», և իր բոլոր արբանյակներին մինչև ամենահեռավոր գյուղերը հետևյալ լոզունգն է փսփսում. «Հալածեցե՛ք ամենուրեք իմ հակառակորդներին իբրև սովորական հրձիգության մեջ կասկածելի անձերի»: Ամբողջ աշխարհի բուրժուազիան բարեհաճությամբ դիտում է մասսայական կոտորածը ճակատամարտից հետո, բայց նա սարսափո՛ւմ է, յերբ «պղծվում են» մասնավոր բնակարաննե՛րը:





Վերջին մարտերը Պեր Լաշեզի գերեզմանատանը:

Յերբ կառավարություններն իրենց պատերազմական նավատորմիղներին պաշտոնական թույլտվություն են տալիս՝ «սպանելու, հրկիզելու և կործանելու», արդյոք այդ հրձիգության թույլտվությո՞ւն է: Յերբ բրիտանական զորքերը դիտմամբ այրեցին Կապիտոլը Վաշինգտոնում և Ձինաստանի կայսեր ամառային պալատը,—արդյոք այդ հրձիգությո՞ւն էր: Յերբ պրուսացիները վո՛չ թե ռազմական կշռադատություններից, այլ պարզապես չարամիտ վրիժառության զգացմունքից, վրան նավթ լցնելով, ինչպես յեղավ Շատոդենում, այրում էյին քաղաքներ ու բազմաթիվ գյուղեր,—արդյոք այդ հրձիգությո՞ւն էր: Յերբ Թիերը վեց շաբաթ շարունակ ռմբակոծում էր Փարիզն այն պատրվակով, թե նա միայն այն տներն է ուզում հրդեհել, վորոնց մեջ մարդիկ կան, արդյոք այդ հրձիգությո՞ւն էր:—Պատերազմի ժամանակ կրակը միանգամայն օրինական զենք է: Թշնամու գրաված շենքերը ռմբակոծում են, վորպեսզի հրդեհեն նրանց: Յեթե պաշտպանողներն ստիպված են թողնել այդ շենքերը, նրանք իրենք են կրակ տալիս նրանց, վորպեսզի հարձակվողները չկարողանան ամրանալ այնտեղ: Հրդեհման յենթարկվելն է յեղել աշխարհի բոլոր կանոնավոր զորքերի ռազմաճակատում ընկած շենքերի անխուսափելի վիճակը: Սակայն ստրկացածների պատերազմում իրենց ստրկացնողների դեմ, այս միակ օրինավոր պատերազմում պատմության մեջ, այդ վարմունքը, համենայն դեպս, անթույլատրելի՛ յե համարվում: Կոմունան կրակը գործադրել է իբրև պաշտպանության միջոց, այդ բառի ամենախիստ իմաստով առած: Նա գործադրեց այն՝ վերսալցիների առաջ փակելու համար այն յերկայնաձիգ ուղիղ փողոցները, վոր Օսմանը դիտմամբ բաց էր արել հրետանու կրակի համար: Նա գործադրեց այն՝ իր նահանջը ծածկելու համար, ճիշտ այնպես, ինչպես վոր վերսալցիներն իրենց առաջխաղացման ժամանակ նռնակներ էյին գործածում, վորոնք առնվազն նույնքան տներ վոչնչացրին, վորքան Կոմունայի հրդեհը: Դեռ մինչև այժմ էլ վիճելի յե, թե վո՞ր շենքերն են պաշտպանվողներն այրել, վորոնք՝ հարձակվողները: Յեվ պաշտպանվողներն այն ժամանակ միայն կրակի օգնությանը դիմեցին, յերբ Վերսալի զորքերն արդեն սկսել էյին գերիների մասսայական կոտորածը: Բացի դրանից, Կոմունան դեռ շատ առաջ հրապարակով հայտարարել էր, վոր յեթե իրեն չափազանցության հասցնեն, նա իրեն կթաղի Փարիզի ավերակների ներքո և Փարիզը յերկրորդ Մոսկվայի կվերածի: Նույնպիսի խոստում արել էր առաջները նաև ազգային պաշտ-

պանության կառավարությունը, սակայն, իհարկե, միայն նրա համար, վորպեսզի քողարկի իր դավաճանությունը: Հենց այդ նպատակի համար եր Տրոշյուն նախապատրաստել անհրաժեշտ նավթը: Կոմունան գիտեր, վոր իրեն հակառակորդների համար Փարիզի ժողովրդի կյանքը վոչինչ չարժեր, բայց շատ բան արժեյին նրանց սեփական տները Փարիզում: Իսկ Թիերն իր կողմից հայտարարել եր, վոր նա իր վրեժխնդրության մեջ անողոք պետք ե լինի: Յերբ մի կողմից նրա զորքն արդեն պատրաստ եր կռվի, մյուս կողմից՝ պրուսացիները փակել եյին յելքի ճանապարհները, նա բացականչեց. «Յես անողորմ պետք ե լինեմ: Հատուցումը պետք ե լիակատար լինի, դատաստանը՝ խիստ»: Յեթե Փարիզի բանվորների գործողությունները բարբարոսություն եյին, ապա այդ հուսահատ պաշտպանության բարբարոսությունն եր, վո՛չ թե հաղթանակի բարբարոսությունը, վորի մեջ մեղավոր են նաև քրիստոնեյաները, վորոնք վոչնչացրին հեթանոսական հին աշխարհի իսկապես անգնահատելի գեղարվեստական գործերը: Բայց նույնիսկ այդ բարբարոսությունն արդարացրել ե պատմությունն իբրև մի անխուսափելի և համեմատաբար աննշան մոմենտ այն հսկայական կռվի մեջ, վոր տեղի յեր ունենում նոր, աճող և հին, խորտակվող հասարակության միջև: Կոմունայի վարմունքն ե՛լ ավելի պակաս նման եր Ռոմանի բարբարոսությանը, վոր վոչնչացրեց պատմական Փարիզը՝ դատարկապորտների Փարիզին տեղ բաց անելու համար:

Իսկ վաթսուն և չորս պատանդների մահապատի՛ժը, նրանց գլխին Փարիզի արքեպիսկոպոսի՛նը, վոր կատարել ե Կոմունան:—1848 թ. հունիսին բուրժուազիան և իր զորքերը վերականգնել եյին մի արդեն վաղուց մոռացված պատերազմական սովորություն—իրենց անզեն գերիների գնդակահարումը: Հետագայում այդ վայրագ սովորությունն ավելի կամ պակաս չափով գործ ե ածվել ամեն անգամ ժողովրդական ապստամբություն ճնշելիս Յեվրոպայում և Հնդկաստանում, վորով պարզ ապացուցված ե, վոր դա «քաղաքակրթության մի իսկական առաջադիմություն եր»: Մյուս կողմից՝ պրուսացիները Ֆրանսիայում կրկին վերականգնել եյին պատանդներ վերցնելու սովորությունը. դրանք բոլորովին անմեղ մարդիկ եյին, վորոնք իրենց կյանքով պետք ե պատասխանեյին ուրիշների կատարած գործողությունների համար: Յերբ Թիերն, ինչպես տեսանք, հենց կռվի սկզբից արդեն ուժի մեջ մտցրեց գերված կոմունարներին գնդա-






Կոմունարներ, վերջին գծի եյին վերցված Փարիզի պատերի տակ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ:

կահարելու մարդասեր սովորությունը, Կոմունային ուրիշ վոչ մի միջոց չեր մնում այդ գերիների կյանքի փրկության համար, բայց յեթե դիմելու պրուսացիների պատանդներ վերցնելու սովորությանը: Քանի վոր վերսալցիներն այնուամենայնիվ շարունակում եյին գնդակահարել գերի ընկածներին, նրանք իրենք եյին իրենց պատանդների կյանքը կորստյան մատնում: Եվ ի՞նչպես կարելի յեր նրանց կյանքը խնայել այն արյունահեղ կոտորածից հետո, վորով Մակ-Մահոնի պրետորյանները տոնեցին իրենց մուտքը Փարիզ: Մի՞թե միայն մի դատարկ կատակ պետք է դառնար նաև բուրժուազիայի վո՛չ մի բանի առաջ կանգ չառնող վայրագության դեմ ունեցած վերջին հակակշիռը—պատանդներ վերցնելը: Դարբուա արքեպիսկոպոսի իսկական սպանողը Թիերն է: Կոմունան միքանի անգամ առաջարկել եր արքեպիսկոպոսին և մի ամբողջ խումբ տերտերների փոխանակել միայն ևեթ Բլանկիի հետ, վորին այնպես պինդ բռնել եր Թիերը: Թիերը համառությամբ հրաժարվեց այդ փոխանակումը կատարելուց: Նա գիտեր, վոր Բլանկիին բաց թողնելով՝ նա Կոմունային մի ղեկավար գլուխ տված կլիներ, մինչդեռ արքեպիսկոպոսը նրա նպատակներին ամենալավ կերպով կարող եր ծառայել—իբրև դիակ: Այս դեպքում Թիերն ընդօրինակում եր Կավենյակին: Ի՞նչպիսի սոսկումի աղաղակ բարձրացրին Կավենյակը և իր «կարգի մարդիկը», յերբ նրանք 1848 թ. հունիսին ինսուրգենտներին մեղադրում եյին արքեպիսկոպոս Աֆֆրի սպանության մեջ: Յեվ, այնուամենայնիվ, նրանք շատ լավ գիտեյին, վոր արքեպիսկոպոսին գնդակահարել են «կարգի կուսակցության» զինվորները: Արքեպիսկոպոսի գլխավոր փոխանորդը, Ժակմեն, այդ գործողությունից անմիջապես հետո, նրանց հրապարակով վկայություն տվեց հենց այդ իմաստով:

Այս բոլոր զրպարտությունները, վոր «կարգի կուսակցությունն» իր արյունահեղ որգիաների ժամանակ չի մոռանում տարածել իր զոհերի մասին, ապացուցում են միայն, վոր այսօրվա բուրժուաներն իրենց համարում են նախկին ֆեոդալների օրինական ժառանգները, վորոնք ամեն զենք իրենց ձեռքին օրինավոր եին գտնում պլեբեյների հանդեպ, մինչդեռ վորևիցե զենք պլեբեյի ձեռքում ըստինքյան արդեն հավասար եր վոճրագործության:

Իշխող դասակարգի դավադրությունը՝ հեղափոխությունը օտար նվաճողների հովանավորության ներքո մղվող քաղաքա-

ցիական պատերազմի միջոցով տապալելու համար—մի դավադրություն, վոր մենք հետապնդեցինք սեպտեմբերի 4-ից սկսած մինչև Մակ-Մահոնի պրետորյանների ներխուժումը Սեն-Կլուի դռներով— ավարտվեց արյան բաղնիքով Փարիզում: Բիսմարկը հաճույքով է նայում Փարիզի ավերակներին, վորոնց մեջ նա գուցե տեսնում է մեծ քաղաքների ընդհանուր ավերման առաջին քայլը, վորի մասին նա տենչում էր, յերբ դեռևս միայն մի հասարակ կալվածատեր-պատգամավոր էր 1849 թվականի պրուսական Chambre introuvable-ում (աննման պալատում): Նա գոհունակությամբ նայում է Փարիզի պրոլետարիատի դիակներին: Նրա համար այդ վո՛չ միայն հեղափոխության բնաջնջումն է, այլև միաժամանակ Ֆրանսիայի վոչնչացումը, վորն այժմ իսկապես գլխատված է և այն էլ՝ ֆրանսիական կառավարության ձեռքով: Բոլոր հաջողության մեջ գտնվող պետական գործիչներին հատուկ մակերեսայնությամբ՝ նա տեսնում է միայն այդ ահագին պատմական դեպքի արտաքին մակերևույթը: Յեղե՞լ է արդյոք յերբևիցե պատմության մեջ այնպիսի մի տեսարան, վոր հաղթողն իր հաղթությունը պսակի նրանով, վոր իրեն վո՛չ միայն իբրև ժանդարմ տրամադրի պարտված կառավարությանը, այլև իբրև վարձկան մարդասպան: Պրուսիայի և Փարիզի Կոմունայի միջև պատերազմ չկար: Ընդհակառակը, Կոմունան ընդունել էր հաշտության նախնական պայմանները, և Պրուսիան հայտարարել էր իր չեզոքությունը: Հետևաբար, Պրուսիան կռվող կողմ չէր: Ուրեմն նա գործում էր իբրև սոսկ վարձկան մարդասպան. իբրև յերկչոտ մարդասպան, վորովհետև նա իրեն վո՛չ մի վտանգի չէր յենթարկում. իբրև վարձկան մարդասպան, վորովհետև նա նախորոք իր 500 միլիոն արյան դրամի վճարումը պայմանավորել էր Փարիզի անկումով: Այդտեղ ահա, վերջապես, հրապարակ յեկավ այդ պատերազմի ճշմարիտ բնույթը, վոր կարգադրել էր նախախնամությունը՝ անաստված և անառակ Ֆրանսիային բարեպաշտ և խորապես բարոյական Գերմանիայի միջոցով պատժելու համար: Միջազգային իրավունքի այս անլուր խախտումը, նույնիսկ այն իմաստով վերցրած, ինչպես ըմբռնում էին այդ իրավունքը հին աշխարհի իրավաբանները, փոխանակ սթափեցնելու «քաղաքակիրթ» Յեվրոպայի կառավարություններին և ստիպելու նրանց որենքից դուրս հայտարարելու միջազգային որենքները խախտող վոճրագործ Պրուսիային, վոր միայն գործիք է Պետերբուրգի կաբինետի ձեռքում,—դրդում է նրանց մի-





Գերի վերցված կոմունարները Վերսալում:

այն այն հարցը քննարկելու, թե պետք չէ՞ արդյոք Վերսալի դահիճների ձեռքը հանձնել նաև այն զոհերին, վորոնց հաջողվել եր ճողոպրել Փարիզի շուրջը յեղած կրկնակի շղթայից:

Վոր նոր ժամանակների ամենասարսափելի պատերազմից հետո հաղթական և պարտված զորքերը միմյանց հետ միանում են պրոլետարիատին կոտորելու համար,—այդպիսի անլուր դեպքը վո՛չ թե ապացուցում է, ինչպես Բիսմարկն է կարծում, դեպի վեր ձգտող նոր հասարակության վերջնական ճնշումը, այլ ավելի շուտ ապացուցում է հին բուրժուական հասարակության կատարյալ քայքայումը: Ամենաբարձր հերոսական սխրագործությունը, վորին դեռ ընդունակ եր հին հասարակությունը, ազգային պատերազմն է: Սակայն այդ պատերազմն էլ ամենազտագույն կառավարական խաբեբայություն է դուրս գալիս, վոր ուրիշ վո՛չ մի նպատակ չունի այլևս, բայց յեթե հետաձգել դասակարգային կռիվը· և այդ էլ մի կողմ է նետվում, հենց վոր դասակարգային կռիվը բոցավառվում է իբրև քաղաքացիական պատերազմի հրդեհ: Դասակարգային տիրապետությունն այլևս չի կարողանում ծածկվել ազգային համազգեստի ներքո· ազգային կառավարությունները մեկ են՝ պրոլետարիատի դեմ:

1871 թ· հոգեգալստյան կիրակիից հետո չի կարող այլևս վո՛չ մի հաշտություն և վո՛չ մի զինադադար լինել Ֆրանսիայի բանվորների և նրանց աշխատանքի արդյունքները յուրացնողների միջև: Վարձկան սոլդատության յերկաթե ձեռքը գուցե կարող է այդ յերկու դասակարգերին էլ վորոշ ժամանակ ճնշված վիճակի մեջ պահել: Բայց նրանց կռիվը բռնկվելու յե նորից ու նորից ավելի և ավելի աճող ծավալով, և վո՛չ մի կասկած չի կարող լինել, թե ո՛վ է լինելու վերջնական հաղթողը—սակավաթիվ յուրացնողնե՞րը, թե հսկայական աշխատավոր մեծամասնությունը: Իսկ ֆրանսական բանվորները հանդիսանում են միայն ամբողջ ժամանակակից պրոլետարիատի առաջապահ գունդը:

Յեվրոպական կառավարությունները, այդպիսով, Փարիզի առաջ գործով ցույց են տալիս դասակարգային իշխանության միջազգային բնույթը, մինչդեռ իրենք էլ ամբողջ աշխարհով մեկ աղաղակ են բարձրացնում Բանվորների Միջազգային Ընկերության մասին—վոր աշխատանքի միջազգային հակակազմակերպությունն է կապիտալի համաշխարհային դավադրության դեմ,—համարելով նրան այս ամբողջ դժբախտության պատճա-

ող: Թիերը մեղադրում է այդ կազմակերպությանը նրանում, որ նա աշխատանքի բռնակալն է, բայց իրեն ձևացնում է նրա ազատարարը: Պիկարը հրամայեց արգելել Ինտերնացիոնալի ֆրանսական անդամների ամեն մի հարաբերություն նրա արտասահմանի անդամների հետ: Թիերի 1835 թ. մեղսակից, ծերությունից մոմլիկ դարձած գրաֆ Ժոբերը հայտարարեց, թե բոլոր կառավարությունների գլխավոր խնդիրն է՝ արմատախիլ անել Ինտերնացիոնալը: Ազգային ժողովի «կալվածատերերի պատգամավորները» վռնում են նրա դեմ, և ամբողջ յեվրոպական մամուլն էլ ձայնակցում է նրանց: Մի արժանահարգ ֆրանսական գրող, որ միանգամայն հեռու յե կանգնած մեր ընկերությունից, արտահայտվում է հետևյալ ձևով. «Ազգային գվարդիայի Կենտրոնական Կոմիտեյի անդամները, ինչպես և Կոմունայի անդամների մեծամասնությունը—Բանվորների Միջազգային Ընկերության ամենագործունյա, ամենախոհական և ամենայեռանդուն գլուխներն են... Մարդիկ, վորոնք միանգամայն ազնիվ են, անկեղծ, խելոք, անձնվիրությամբ լի, մաքուր և մոլեռանդ, այդ բառի լավագույն իմաստով»: Վոստիկանական գունավորում ստացած բուրժուական բանականությունը, իհարկե, Բանվորների Միջազգային Ընկերությունը պատկերացնում է իրեն իբրև մի տեսակ դաղտնի դավադրական ընկերություն, վորի կենտրոնական վարչությունը ժամանակ առ ժամանակ ապստամբություն բռնկումներ է նշանակում զանազան յերկրներում: Բայց, իսկապես, մեր ընկերությունը միայն այն միջազգային միությունն է, վոր միացնում է քաղաքակիրթ աշխարհի առաջավոր բանվորներին զանազան յերկրներում: Վո՛րտեղ էլ, ի՛նչ կերպարանքով էլ և ի՛նչպիսի պայմաններում էլ վորևե կերպով յերևան յելնի դասակարգային կռիվը, բնական է, վոր մեր Բանվորների Միջազգային Ընկերության անդամներն առաջին շարքերում կլինեն կանգնած: Այն հողը, վորի վրա աճում է այդ Ընկերությունը, ժամանակակից հասարակությունն ինքն է: Այդ Ընկերությունը չի կարող վոչնչացվել, ինչքան էլ վոր արյուն թափվի: Նրան արմատախիլ անելու համար կառավարությունները պետք է ամենից առաջ վոչնչացնեյին կապիտալի բռնակալ իշխանությունն աշխատանքի վրա—ուրեմն՝ վոչնչացնեյին իրենց սեփական մակաբուծական գոյության նախապայմանը:

Բանվորների Փարիզն իր Կոմունայով միշտ կփառաբանվի իբրև նոր հասարակության փառավոր առաջընթացը: Նրա նահա-





Վերսալցի դահիճները վառոդի հոտ են փնտռում:

տակներն իրենց համար ընդմիշտ արձան կանգնեցրին բանվոր դասակարգի մեծ սրտում: Նրա դահիճներին պատմությունն այժմ արդեն գամել է նշավակության սյունին, որից նրանց ազատելու համար անզոր են նրանց տերտերների բոլոր աղոթքները:

---

## ՀԱՎԵԼՎԱԾ

«Գերիների սյունը կանգ առավ Ավենյու Ուրիխի վրա և դասավորվեց մայթի վրա չորսը կամ հինգը մի շարքում՝ յերեսները դեպի փողոցը:

Գեներալ մարկիզ դե-Գալիֆեն և նրա շտաբը ձիերից իջան և դիտեցին գիծը, սկսելով ձախ թևից: Գեներալը դանդաղ անցավ շարքերի յերկարությամբ, դիտելով նրանց. մեկ այստեղ, մեկ այնտեղ նա խփում եր վորևե մեկի ուսին կամ հայացքով դուրս կանչում հետևի շարքերից: Այդ ձևով ջոկվածներին մեծ մասամբ առանց հետագա խոսակցությունների կանգնեցնում եյին փողոցի մեջտեղը, վորտեղ նրանք շուտով առանձին սյուն եյին կազմում:

... Ակներև եր, վոր այստեղ կարող եյին խոշոր սխալներ տեղի ունենալ: Հեծելազորի սպան գեներալի ուշադրությունը հրավիրեց մի տղամարդու և մի կնոջ վրա—ինչ-վոր առանձին հանցանքի առթիվ: Դուրս վազելով շարքերից՝ կինը ծունկ չոքեց և բազկատարած բուռն արտահայտություններով ապացուցում եր իր անմեղությունը: Գեներալը մի փոքր սպասեց, իսկ հետո միանգամայն հանդիստ դեմքով ասաց, դիրքը չփոխելով. «Տիկին, յես յեղել եմ Փարիզի բոլոր թատրոններում. ավելորդ ե կատակերգություն խաղալը...»: Այն որը վայը տարել եր նրան, ով հասակով մի փոքր բարձր եր, ավելի կեղտոտ եր, ավելի մաքուր եր, ավելի մեծ եր կամ ավելի տգեղ, քան իր կողքի մարդիկ: Իմ աչքին ընկավ այն հանգամանքը, վոր մի մարդ իր արագ ազատումն արտասուքի այս հովտից պարտական յեղավ միայն իր ջարդված քթին:

Յերբ հարյուր մարդուց ավելի այս ձևով ջոկվեցին և զինվորների մի ջոկատ նշանակվեց նրանց գնդակահարելու համար, սյունն առաջ շարժվեց, մինչդեռ այն մյուսները մնացին: Դրանից մի քանի րոպե հետո մեր հետևում լսվեցին հրացանաձգության ձայներ, վորոնք, փոքրիկ ընդհատումներով, շարունակվեցին քառորդ ժամ: Այս—այդ պարզացրած կարգով դատապարտված դժբախտների մահապատիժն եր»: («Daily News»-ի Փարիզի թղթակիցը, հունիսի 8-ին): Այդ Գալիֆեն, «իր կնոջ հաշվով ապրող մարդը, վոր այնպես հայտնի դարձավ նրա մերկության անպատկառ ցուցադրումով յերկրորդ կայսրության որգիաների ժամանակ», պատերազմի ժամանակ հայտնի յեր ֆրանսական վառակիր (прапорщик) Պիստոլ անունով:

«Temps»-ը, մի զգույշ և անպայման սենսացիաների հետևից չընկնող լրագիր, պատմում ե գնդակահարված և դեռ կենդանի թաղված մարդկանց սոսկալի պատմությունը: Այդպիսիների մի զգալի թիվ թաղված եր St. Jacques-la-Bouchière-ի մոտի հրապարակում, ըստ վորում նրանցից միքանիսը միայն թեթև կերպով եյին ծածկված հողով: Ցերեկը փողոցի աղմուկը խլացնում եր ամեն ինչ, բայց գիշերային խաղաղության մեջ մերձակա տների բնակիչները զարթնեցին հեռավոր տնքոցների ձայնից, իսկ առավոտյան տեսան գետնից բարձրացած սեղմված բռունցք: Դրա հետևանքով հրամայվեց նորից հանել դիակները: Յես ամենևին չեմ կասկածում, վոր շատ վիրավորներ կենդանի-կենդանի յեն թաղվել: Մի դեպքի համար յես յերաշխավոր եմ: Յերբ մայիսի 24-ին Բրյունելն իր սիրուհու հետ գնդակահարվեցին Վանդոմի հրապարակի վրա գտնված մի տան բակում, նրանց թողին այնտեղ մինչև 27-ի յերեկոն: Յերբ վերջապես յեկան հավաքելու դիակները, կինը դեռ կենդանի յեր, և նրան տարան վիրակապության վայրը: Թեև նա վիրավորված եր չորս գնդակով, բայց նա այժմ վտանգից ազատ ե»: («Evening Standard»-ի Փարիզի թղթակիցը, 1871 թ. հունիսի 8-ին):



Փարիզը 1871 թ. մայիսին:

# ՄԱՐՔՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ ԿՈՒԳԵԼՄԱՆԻՆ

## I

12 ապրիլի 1871 թ.

Յեթե դու աչքի անցկացնես իմ «Բրյումերի տասնութի» վերջին գլուխը, կգտնես, վոր յես ֆրանսական հեղափոխության հետագա փորձը հայտարարում եմ՝ վո՛չ թե, ինչպես մինչև այժմ եր, բյուրոկրատական–ռազմական մեքենան մի ձեռքից մյուսը փոխադրել, այլ խորտակել այն, և այս նախնական պայման է յուրաքանչյուր իսկական ժողովրդական հեղափոխության համար մայր ցամաքում[1]: Փարիզի մեր հերոսական կուսակցական ընկերների փորձն էլ հենց այդ բնույթն ունի: Ի՜նչպիսի ճկունություն, ի՜նչպիսի պատմական ձեռներեցություն, ի՜նչպիսի անձնվիրության ընդունակություն ունեն այդ փարիզցիները: Վեցամսյա

---

[1] Իր «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ Լենինը բացատրել է, թե ինչու Մարքսն իր յեզրակացությունը սահմանափակել է մայր ցամաքով.

«Այդ հասկանալի յեր 1871 թվին, յերբ Անգլիան դեռևս զուտ կապիտալիստական յերկրի օրինակ եր, առանց զինվորականության և նշանակալից չափով՝ առանց բյուրոկրատիայի: Այդ պատճառով էլ Մարքսը բացառում եր Անգլիան, վորտեղ հեղափոխությունը, և մինչև իսկ ժողովրդական հեղափոխությունը, պատկերացվում եր հնարավոր և այն ժամանակ հնարավոր եր՝ առանց «պատրաստի պետական մեքենան» խորտակելու նախապայմանի»:

Այժմ, 1917 թվին, առաջին մեծ իմպերիալիստական պատերազմի դարաշրջանում, Մարքսի այդ սահմանափակումը վերանում է: Թե՛ Անգլիան, թե՛ Ամերիկան, ամբողջ աշխարհում անգլո–սաքսոնական «ազատության» խոշորագույն և վերջին ներկայացուցիչները՝ զինվորականության և բյուրոկրատիզմի բացակայության իմաստով, թավալգլոր ընկան ամեն ինչ իրենց յենթարկող, ամեն բան ճնշող բյուրոկրատական ռազմական հիմնարկությունների համաեվրոպական կեղտոտ, արյունոտ ճահիճը: Հիմա թե՛ Անգլիայում, թե՛ Ամերիկայում «ամեն մի իսկապես ժողովրդական հեղափոխության նախապայմանն է» ջարդել, խորտակել «պատրաստի պետական մեքենան», (վոր պատրաստված է այնտեղ 1914—1917 թվականներին ու հասցված «յեվրոպական», համաիմպերիալիստական կատարելության)»:

տվահարությունից և ավերածությունից հետո, ավելի շուտ ներքին դավաճանության, քան թե արտաքին թշնամու շնորհիվ, նրանք ապստամբում են պրուսական սվինների ներքո, կարծես թե Ֆրանսիայի և Գերմանիայի միջև պատերազմ ամենևին չի յել յեղել, և կարծես թե թշնամին դեռ Փարիզի դռների առաջ կանգնած չէ: Պատմությունն հերոսության այդպիսի օրինակ չունի: Յեթե նրանք պարտություն կրեն, դրանում մեղավոր կլինի միայն նրանց «բարեհոգությունը»: Պետք էր անմիջապես արշավել Վերսալի վրա, հենց վոր Վինուան, ապա Փարիզի ազգային գվարդիայի ռեակցիոն մասն ինքը Փարիզից հեռանալով մաքրեց ճակատը: Ճիշտ մոմենտը բաց թողնվեց խղճմտության պատճառով: Չեյին ուզում քաղաքացիական պատերազմ սկսել, կարծես թե զզվելի հրեշ Թիերը քաղաքացիական պատերազմը չէր սկսել Փարիզը զինաթափ անելու իր փորձով: Յերկրորդ սխալը. Կենտրոնական կոմիտեն շատ շուտ հրաժարվեց իշխանությունից, իր տեղը Կոմունային զիջելու համար: Դարձյալ մինչև կասկածամտություն հասցրած «ազնվության» պատճառով: Ինչ էլ վոր լինի, Փարիզի այժմյան ապստամբությունը,—յեթե նա նույնիսկ ճնշվի հին հասարակության գայլերի, խոզերի և ստոր շների կողմից,—մեր կուսակցության ամենափառավոր սխրագործությունն է Հունիսյան ապստամբությունից հետո[1]: Համեմատեցե՛ք այս փարիզեցիների հետ, վորոնք պատրաստ են յերկինքը գրոհի յենթարկելու, գերմանո-պրուսական սուրբ հռոմեական կայսրության ստրուկներին իր անդրշիրիմյան մասկարադներով, վորոնցից կազարմայի, յեկեղեցու, յունկերության և ամենից ավելի փիլիստերության հոտ է գալիս:

Ի դեպ: Լուի Բոնապարտի գանձարկղից անմիջականորեն տրված նպաստների պաշտոնական հրատարակության մեջ նշանակված է, վոր Ֆոխտը (Vogt) 1859 թ. օգոստոսին 40·000 ֆրա՛նկ է ստացել: Այդ փաստը յես հայտնել եմ Լիբկնեխտին՝ հետագա օգտագործման համար:

II

17 ապրիլի 1871 թ.

Միանգամայն անհասկանալի յե ինձ համար, թե ինչպես ես կարողանում դու մանր-բուրժուական ցույցերն à la 1849 թ. հունիսի 13 և այլն համեմատել Փարիզում տեղի ունեցող այժմյան կռվի հետ:

Իհարկե, չափ հարմար կլիներ համաշխարհային պատմություն կերտել, յեթե կռիվն սկսվելիս լիներ միայն անսխալ բարենպաստ շանսերի առկայության դեպքում: Մյուս կողմից՝ պատմությունը խիստ միստիկական բնույթ կունենար, յեթե «պատահականությունները» վոչ մի դեր չխաղայեին: Այդ պատահականություններն, իհարկե, իբրև բաղկացուցիչ մասեր մտնում են զարգացման ընդհանուր ընթացքի մեջ և իրենց հերթին հավասարակշռվում են ուրիշ պատահականություններով: Սակայն արագացումն ու դանդաղումը մեծ չափով կախված են այդպիսի «պատահականություններից», վորոնց շարքում դեր է խաղում նաև այն մարդկանց բնավորության «պատահականությունը», վորոնք սկզբից ևեթ կանգնած են լինում շարժման գլուխը:

Վճռական անբարենպաստ «պատահմունքն» այս անգամ ամենևին չպետք է փնտրել ֆրանսիական հասարակության ընդհանուր պայմաններում, այլ պրուսացիների ներկայության մեջ Ֆրանսիայում, հենց Փարիզի դռների առաջ: Իսկ այս բանը գիտեյին նաև Վերսալի բուրժուական սրիկաները: Հենց դրա համար էլ նրանք փարիզեցիների առաջ հետևյալ յերկընտրանքը դրին—կա՛մ մարտահրավերն ընդունել, կա՛մ անձնատուր լինել առանց կռվի: Բանվոր դասակարգի բարոյալքումը վերջին դեպքում շատ ավելի մեծ դժբախտություն կլիներ, քան թե ուզածդ քանակությամբ «առաջնորդների» կորուստը: Բանվոր դասակարգի կռիվը կապիտալիստների դասակարգի և նրանց պետության դեմ՝ Փարիզի կռվի շնորհիվ մտել է իր նոր փուլը: Ինչպես էլ վոր այս անգամ անմիջականորեն վերջանալու լինի գործը, այնուամենայնիվ նվաճված է համաշխարհային պատմական կարևորություն ունեցող մի նոր յելակետ:

[1] Լենինն այդ նամակի մասին գրում եր. «1871 թվի ապրիլի 12-ին Մարքսը մի խանդավառ նամակ է գրում Կուգելմանին,—մի նամակ, վոր մենք սիրով կախ կտայինք յուրաքանչյուր ռուս սոցիալ-դեմոկրատի, յուրաքանչյուր ռուս գրագետ բանվորի պատից»:

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ալեքսանդր II (1818—1881) — ռուսաց կայսր 1855—1881 թ.։ 1881 թվականի մարտի 1-ին սպանվեց նարոդովոլեցիների ձեռքով։ — 44։

Աֆֆր (1793—1848) — Փարիզի արքեպիսկոպոս։ 1848 թվի հունիսին փորձ արեց հաշտեցնելու բարիկադների վրա կռվող բանվորներին զինվորների հետ և գնդակահարվեց կառավարական զորքերի կողմից։ — 123։

Բելե (1795—1878) — I Ինտերնացիոնալի Ֆրանսական սեկցիայի անդամ, պրուդոնիստ, Փարիզի կոմունայի անդամ։ — 61։

Բերրիի հերցոգուհի (1798—1870) — 1820 թվին սպանված Բերրիի հերցոգի, Բուրբոնների դինաստիայի ավագ ճյուղի ներկայացուցչի այրին։ — 55։

Բիսմարկ (1815—1898) — իշխան։ 1861 թվից Պրուսիայի կառավարության գլուխը, իսկ 1871 թվից՝ գերմանական կայսրության կանցլերը։ Կիրառում էր գերմանական պետությունները Պրուսիայի գլխավորությամբ միավորելու քաղաքականությունը։ Սոցիալիզմի ամենաչարանենգ թշնամի, սոցիալիստների դեմ ուղղված բացառիկ օրենքների նախաձեռնողը 1878—1890 թ. թ.։ — 8, 14, 32, 43, 44, 52, 54, 58, 62, 64, 65, 90, 99, 102, 105, 109—111, 124, 127։

Բլանկի (1805—1881) — հայտնի Ֆրանսական հեղափոխական, սոցիալիստ։ Պայքար էր մղում Ֆրանսիայի բոլոր բուրժուական կառավարությունների դեմ, գլխավորում էր մի շարք հեղափոխական գաղտնի ընկերությունների։ Կողմնակից էր իշխանության գրավման մի խումբ հեղափոխական-դավադիրների կողմից. չէր հասկանում մասսաների հեղափոխական պայքարի մեջ ներգրավելու անհրաժեշտությունը։ — 18, 64, 68, 123։

Բրյունել (1830—1871) — բլանկիստ, Ազգային գվարդիայի կենտկոմի անդամ, Փարիզի կոմունայի անդամ, մայիսի 10-ից—Իսսի Փորտի պետ։ Սպանվեց վերսալցիների կողմից 1871 թ. մայիսի 24-ին։ — 133։

Գամբետտա (1838 — 1882) — բուրժուական հանրապետական. «Ազգային պաշտպանության» կառավարության մեջ ներքին գործերի մինիստր։ — 52։

Գալիֆե (1830—1909) — Ֆրանսական գեներալ, Փարիզի կոմունայի դահիճը։ — 76, 78, 132, 133։

Գանեսկո (1830—1877) — Ֆրանսական պահպանողական հրապարակախոս, ծագումով Ռումինիայից, 1868 թվից—բոնապարտիստական ժուռնալի խմբագիր։ — 97։

Գիզո (1787—1874) — Ֆրանսական պետական գործիչ, օրլեանիստ և պատմաբան. հուլիսյան միապետության տարիներին միքանի անգամ մինիստր է յեղել։ — 56։

Գիռ — Ֆրանսական գեներալ։ — 52։

Գորչակով Ա. (1798—1883) — ռուս դիվանագետ, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր 1856—1882 թ. թ.:— 44:

Դարբուա (1813—1871) — Փարիզի արքեպիսկոպոս:— 123:

Դյուվալ (1841—1871) — ձուլիչ-բանվոր, բլանկիստ, I Ինտերնացիոնալի անդամ, Ազգային գվարդիայի Կենտկոմի անդամ, Փարիզի կոմունայի ռազմական և գործադիր հանձնաժողովների անդամ:— 76:

Դյուֆոր (1798—1881) — օրլեանիստ, արդարադատության մինիստր Թիերի կառավարության մեջ 1871—1873 թ. թ.:— 64, 75, 105, 107, 108:

Դուե — ֆրանսիական գեներալ:— 113:

Եսպարտերո (1793—1879) — իսպանական բուրժուական քաղաքական գործիչ:— 56:

Երվե (1835—1899) — ֆրանսիական ժուռնալիստ:— 115:

Թամերլան (1336—1405) — միջին-ասիական հսկայական կայսրության հիմնադիր: Հայտնի յե իր դաժանությամբ:— 76:

Թիեր (1797—1877) — օրլեանիստ, Վերսալի կառավարության գլուխը 1871 թվին և Կոմունայի դահիճը. 1871 թվից մինչև 1873 թիվը—Երրորդ հանրապետության նախագահ:— 16, 18, 30, 50—52, 54—59, 61—64, 65—67, 69, 71, 75—78, 80, 84, 94, 97, 99, 101, 102, 105—110, 113—115, 119, 120, 123, 128, 138:

Թոմա (1809—1871) — ֆրանսիական գեներալ, վոր մասնակցել է Փարիզի պրոլետարիատի ճնշմանը 1848 թվի հունիսին: 1871 թվի մարտի 18-ին գնդակահարվեց ազգային գվարդիականների կողմից:— 68, 71, 78, 107, 108, 113:

Ժակմե — Փարիզի արքեպիսկոպոսի գլխավոր փոխանորդը:— 123:

Ժոբեր (1798—1874) — օրլեանիստ, Ազգային ժողովի անդամ, հասարակական աշխատանքների մինիստր Թիերի վերսալյան կառավարության մեջ:— 128:

Լաֆիտտ Ժ. (1767—1844) — ֆրանսիական բանկիր, օրլեանիստ, մինիստրության գլուխ 1830—1831 թ. թ.:— 55:

Լեկոնտ (1817—1871) — ֆրանսիական գեներալ:— 68, 71, 78, 107, 113:

Լեֆլո (1804—1887) — ռազմական մինիստր «ազգային պաշտպանության» կառավարության մեջ:— 71, 77:

Լիբկնեխտ Վ. (1826—1900) — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրներից և ղեկավարներից մեկը: Կարլ Լիբկնեխտի հայրը:— 138:

Լյուդովիկ XVI (1754—1793) — ֆրանսիական թագավոր 1774 թվից. XVIII դարի վերջի Ֆրանսիական բուրժուական հեղափոխության ժամանակ գահընկեց արվեց և Կոնվենտի վորոշմամբ գլխատվեց:— 17:

Լուի-Ֆիլիպպ (1773—1850) — ֆրանսիական թագավոր 1830 թվից. գահընկեց արվեց 1848 թ. հեղափոխության կողմից:— 12, 13, 55, 57, 58, 68, 90, 107, 108:

Կալլոն դե (1734—1802) — Լյուդովիկ XVI-ի ֆինանսների մինիստր:— 102:

Կավենյակ (1802—1857) — ֆրանսիական գեներալ, բուրժուական հանրապետական. 1848 թվին ընկճեց բանվորների հունիսյան ապստամբությունը Փարիզում:— 123:

Կոետլոգոն (1814—1886) — ֆրանսիական չինովնիկ:— 72:

Կորբոն (1808—1891) — ֆրանսիական քաղաքական գործիչ և հրապարակախոս: 1870 թ. սեպտեմբերի 4-ից հետո Փարիզի 15-րդ օկրուգի մեր:— 51:

Կուգելման (1830—1902) — գերմանական սոցիալ-դեմոկրատ, Գերմանիայի



1848 թ. հեղափոխության մասնակից, I Ինտերնացիոնալի անդամ:— 5, 6, 137—138:

Հեքերեն (Դանտես) — ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինին սպանողը, 1851 թվի դեկտեմբերի 2-ի հեղաշրջման ակտիվ մասնակիցներից մեկը, բոնապարտիստ:— 72:

Հեքսլի (1825—1895) — անգլիացի գիտնական բնախույզ, Դարվինի բարեկամն ու հետևորդը:— 93:

Հոհենցոլլերններ — 1701 թվից պրուսական թագավորների դինաստիան, իսկ 1871 թվից—գերմանական կայսրների: Գահընկեց արվեց 1918 թվի նոյեմբերի 9-ի հեղափոխության կողմից:— 32, 98:

Մակ-Մահոն (1808—1893) — ֆրանսիական մարշալ, Փարիզի կոմունայի դահիճը. 1873 թվից մինչև 1879 թ.—Ֆրանսիական հանրապետության նախագահ:— 113, 123, 124:

Միլյեր (1817—1871) — ձախ պրուդոնիստ, ժուռնալիստ, Փարիզի կոմունայի մասնակից: 1871 թ. մայիսի 26-ին գնդակահարվեց վերսալցիների կողմից:— 53:

Միրաբո, կոմս (1749—1791) — XVIII դարի վերջի Ֆրանսիական բուրժուական հեղափոխության գործիչ:— 56:

Մոնտեսքյո (1689—1755) — ֆրանսիական հայտնի մտածող և հրապարակախոս:— 89:

Նապոլեոն I (1769—1821) — ֆրանսիական կայսր 1804 թվից մինչև 1814 թիվը:— 13, 17, 24, 34, 42, 57, 96:

Նապոլեոն III (Լուի Բոնապարտ, 1808—1873) — ֆրանսիական կայսր 1852 թվի դեկտեմբերից մինչև 1870 թվի սեպտեմբերը:— 7, 13, 14, 29, 32, 34, 36, 39, 40, 43—45, 49, 50, 52, 57, 58, 62, 66, 71, 80, 83, 90, 96, 98, 101, 107, 138:

Շանգարնյե (1793—1877) — ֆրանսիական գեներալ, միապետական:— 75:

Ոսման (1809—1891) — Փարիզի պրեֆեկտը Երկրորդ կայսրության տարիներին:— 98, 119, 120:

Որել դե-Պալադին (1804—1877) — ֆրանսիական գեներալ:— 64, 65, 67:

Որլեաններ — Բուրբոնների ֆրանսիական թագավորական դինաստիայի կրտսեր ճյուղը:— 13, 98:

Պալիկաո (1796—1879) — ֆրանսիական գեներալ, 1870 թվի օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 4-ը ռազմական մինիստր էր:— 64:

Պեն — ֆրանսիական ժուռնալիստ, բոնապարտիստ:— 72:

Պիկար Արտուր — ավանտյուրիստ, խմբագիր «Ելեկտոր լիբր» թերթի, վոր հրատարակում էր «ազգային պաշտպանության» կառավարությունը:— 54:

Պիկար Երնեստ (1821—1877) — Ա. Պիկարի յեղբայրը, ֆինանսների մինիստր «ազգային պաշտպանության» կառավարության մեջ, ներքին գործերի մինիստր Թիերի կառավարության մեջ:— 54, 64, 76, 128:

Պյետրի (1820—1902) — 1851 թվի դեկտեմբերի 2-ի պետական հեղաշրջման ակտիվ մասնակից, վոստիկանության պրեֆեկտ Երկրորդ կայսրության ժամանակ:— 32, 105:

Պույե-Քերթյե (1820—1891) — Ռուանի ֆաբրիկանտ, բոնապարտիստ, ֆինանսների մինիստր Թիերի կառավարության մեջ:— 64, 109:

Պրուդոն (1809—1865) — *ֆրանսիական տնտեսագետ, մանր բուրժուազիայի փիլիսոփա, անարխիստ*: — 22, 23:

Սեսսե (1810—1879) — *ֆրանսիական ադմիրալ, միապետական. Ազգային ժողովի անդամ, Փարիզի կոմունայի դահիճներից մեկը*: — 75:

Սիմոն (1814—1896) — *ժողովրդական լուսավորության մինիստր Վերսալի կառավարության մեջ*: — 64:

Սյուզանն — *ֆրանսիական գեներալ*: — 52:

Սուլլա (138—78 *մինչև մեր դարաշրջանը*) — *դիկտատոր հին Հռոմում*: — 61, 114:

Վալանտեն — *բոնապարտիստ, ոստիկանության պրեֆեկտ*: — 64, 65, 105:

Վայան (1840—1915) — *Փարիզի կոմունայի անդամ, բլանկիստ, I Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի անդամ*: — 22:

Վիլհելմ I (1797—1888) — *պրուսական թագավոր 1861 թվից, գերմանական կայսր 1871 թվից մինչև 1888 թիվը*: — 39, 110:

Վինուա (1800—1880) — *ֆրանսիական գեներալ, բոնապարտիստ*: — 64, 65, 67, 71, 72, 76, 138:

Վոլտեր (1694—1778) — XVIII *դարի ֆրանսիական փիլիսոփա և գրող, լուսավորական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչներից մեկը Ֆրանսիայում*: — 76:

Տակիտոս (*մոտ* 55—120 *մեր թվակ.*) — *հայտնի հռոմեական պատմաբան*: — 115:

Տամիզյե (*ծն.* 1809 *թ.*) — *ֆրանսիական գեներալ*: — 71:

Տոլեն (1828—1897) — *ֆրանսիական բանվոր, պրուդոնիստ, I Ինտերնացիոնալի սեկցիայի մասնակիցներից մեկը Փարիզում*: 1870 *թվի սեպտեմբերի* 4-*ից հետո անցավ վերսալցիների կողմը և* 1871 *թվին վտարվեց Ինտերնացիոնալից*: — 77:

Տրոշյու (1814—1896) — *բոնապարտիստական գեներալ, «ազգային պաշտպանության» կառավարության նախագահ և միաժամանակ Փարիզի գեներալ-նահանգապետ*: — 50—52, 61, 66, 71, 120:

Ֆավր (1809—1880) — *ֆրանսիական փաստաբան, բուրժուական հանրապետական,* 1870 *թվին—«ազգային պաշտպանության» կառավարության անդամ, արտաքին գործերի մինիստր Թիերի կառավարության մեջ, Փարիզի կոմունայի ճնշումը կազմակերպողներից մեկը*: — 51—53, 58, 64, 68, 76, 99, 109—111:

Ֆերրի (1832—1893) — *փաստաբան, «ազգային պաշտպանության» կառավարության քարտուղար,* 1870 *թվի հոկտեմբերի* 31-*ից հետո—Փարիզի մեր*: 80-*ական թվականներին Ֆրանսիայում պրեմյեր-մինիստր էր և արտաքին գործերի մինիստր*: — 54:

Ֆլուրանս (1838—1871) — *ֆրանսիական ժուռնալիստ, բլանկիստ, Ազգային գվարդիայի կենտկոմի անդամ, կոմունայի ռազմական հանձնաժողովի անդամ*: *Սպանվեց վերսալցիների կողմից* 1871 *թվի ապրիլի* 3-*ին*: — 64, 68, 76:

Ֆոխտ Կ. (1817—1895) — *գերմանական բուրժուական դեմոկրատ, վուլգար մատերիալիստ*: 50—60-*ական թվականներին բոնապարտիստ և Նապոլեոն* III-*ի գործակալ*: *Մարքսը նրան մերկացրել է «Պարոն Ֆոխտը» պամֆլետում*: — 138:



## ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

**1870 թ. հուլիսի 19-ից մինչև 1871 թվի մայիսի 30-ը**

---

**1870 թ.**

19 հուլիսի — *Ֆրանկո-պրուսական պատերազմի սկիզբը*:

23 հուլիսի — I *Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի առաջին կոչը Բանվորների միջազգային ընկերության անդամներին՝ Ֆրանկո-պրուսական պատերազմի մասին*:

2 սեպտեմբերի — *Ֆրանսիական բանակի պարտությունը Սեդանի մոտ*: *Նապոլեոն* III *գերի յե ընկնում*:

4 սեպտեմբերի — *Հանրապետության հռչակումն և «ազգային պաշտպանության» բուրժուական կառավարության կազմվելը*:

9 սեպտեմբերի — *Գլխավոր խորհրդի յերկրորդ կոչը Ֆրանկո-պրուսական պատերազմի մասին*:

18 սեպտեմբերի — *Փարիզի պաշարման սկիզբը պրուսական բանակի կողմից*:

31 հոկտեմբերի — *Փարիզի բանվորների ապստամբության անհաջող փորձ Բլանկիի և Ֆլուրանսի ղեկավարությամբ*: *Քաղաքային տան գրավումը և «ազգային պաշտպանության» կառավարության անդամներից մի քանիսի ձերբակալումը*:

**1871 թ.**

21—22 հունվարի — *Բանվորների զինված յելույթի նոր փորձ Փարիզում*: *Բանվորների գնդակահարումը կառավարական զորքերի կողմից*:

28 հունվարի — *«Ազգային պաշտպանության» կառավարությունը զինադադար է կնքում և համաձայնում է Փարիզը հանձնել պրուսացիներին*:

13 փետրվարի — *Հակահեղափոխական Ազգային ժողովի բացումը Բորդոյում*:

18 մարտի — *Թիերի կառավարության փորձը՝ գիշերով անելու Փարիզի բանվորներին և գրավելու Ազգային գվարդիայի հրետանին*: *Հեղափոխություն Փարիզում*: *Իշխանության անցումը Ազգային գվարդիայի Կենտրոնական Կոմիտեյի ձեռքը*: *Թիերի կառավարության փախուստը Վերսալ*:

22 մարտի — *Միապետականների հակահեղափոխական ցույցը Փարիզում*:

23 մարտի — *Կոմունայի հռչակում Մարսելում*:

24 մարտի — *Կոմունայի հռչակում Լիոնում*:

26 մարտի — *Փարիզի կոմունայի ընտրությունները*

28 մարտի — *Փարիզի կոմունայի հռչակումը: Ազգային գվարդիայի Կենտրոն իշխանությունը հանձնում է Փարիզի կոմունային:*

30 մարտի — *Նորակոչիկների հավաքի ու մշտական բանակի վերացումը և Ազգային գվարդիան միակ զինված ուժ հայտարարելը: Կոմունայի դեկրետը բնակարանային վարձի հաշիվները վոչնչացնելու մասին:*

1 ապրիլի — *Կոմունայի դեկրետն այն մասին, վոր Կոմունայի ծառայողների և նրա անդամների վարձատրությունը չպետք է անցնի տարեկան 6000 ֆրանկից:*

2 ապրիլի — *Կոմունայի դեկրետը յեկեղեցին պետությունից բաժանելու մասին և յեկեղեցական գույքերն ազգայնացնելու մասին: Վերսալի կառավարության ռազմական գործողությունների սկիզբը հեղափոխական Փարիզի դեմ:*

5 ապրիլի — *Դեկրետ՝ պատանդներ ձերբակալելու մասին, վոր հրատարակվեց իբրև պատասխան վերսալականների կողմից կոմունարներին գնդակահարելու: Փարիզի ռմբակոծության սկիզբը վերսալականների կողմից:*

16 ապրիլի — *Կոմունայի դեկրետը ձեռնարկատերերի լքած արդյունաբերական ձեռնարկությունները բանվորների կոոպերատիվ ընկերություններին հանձնելու մասին:*

17 ապրիլի — *Կոմունայի դեկրետը մուրհակների վճարումները յերեք տարով տարկետելու մասին:*

20 ապրիլի — *Հացթուխների գիշերային աշխատանքի վերացումը:*

30 ապրիլի — *Բանվորների շահագործման միջոց ծառայող փոխատվական գանձարկղների վոչնչացումը:*

9 մայիսի — *Վերսալականները գրավում են Իսսի Ֆորտը: Հասարակական անվտանգության Կոմիտեյի կազմակերպումը բլանկիստներից:*

10 մայիսի — *Թիերի կառավարությունը դաշնագիր ստորագրեց Բիսմարկի հետ: Բիսմարկը պարտավորություն ստանձնեց վերադարձնել պրուսացիների գերի վերցրած ֆրանսիական բանակը, վորպեսզի սա օգտագործվի Փարիզի կոմունան ճնշելու համար:*

16 մայիսի — *Վանդոմի սյունի տապալումը, վոր շովինիզմի և ազգային թշնամության սիմվոլն եր:*

21 մայիսի — *Փարիզի կոմունայի վերջին նիստը: Ազգային գվարդիայի դավաճանության և անփութության հետևանքով վերսալականների զորքերը ներխուժում են Փարիզ:*

22—28 մայիսի — *Փողոցային կռիվներ Փարիզում: Վերսալականներն արյունահեղ դատաստան են տեսնում Փարիզի կոմունարների գլխին:*

30 մայիսի — *Մարքսի յելույթը I Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի նիստում մանիֆեստով՝ քաղաքացիական պատերազմի մասին Ֆրանսիայում և Փարիզի կոմունայի պատմական նշանակության մասին:*



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

*Հրատարակչության կողմից* . . . . . . . . 5

*Ֆրիդրիխ Էնգելսի ներածությունը* . . . . . . . . 7

*Բանվորների Միջազգային ընկերության Գլխավոր Խորհրդի առաջին կոչը ֆրանս-պրուսական պատերազմի մասին* . . . . . . . . 29

*Բանվորների Միջազգային ընկերության Գլխավոր Խորհրդի յերկրորդ կոչը ֆրանս-պրուսական պատերազմի մասին* . . . . . . . . 36

*Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում 1871 թ.: Բանվորների Միջազգային ընկերության Գլխավոր Խորհրդի կոչը* . . . . . . . . 50

*Հավելված* . . . . . . . . 132

Մարքսի *նամակներից Կուգելմանին* . . . . . . . . 137

I. 12 *ապրիլի* 1871 *թ.* . . . . . . . . 138

II. 17 *ապրիլի* 1871 *թ.* . . . . . . . . 141

*Անվանացանկ* . . . . . . . .

*Դեպքերի ժամանակագրությունը Ֆրանսիայում* 1870 *թ. հուլիսի* 19-*ից մինչև* 1871 *թ. մայիսի* 30-*ը* . . . . . . . . 145

Թարգմանիչ Ցե. Տ-Մինասյան
Խմբագիր Ս. Բուդումյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Գուլուխանյան
Կոնտրոլ սրբագրիչ Ցե. Տեր-Մինասյան

---

Գլավլիտի լիազոր Վ. 1089, հրատ. № 770
Պատվեր № 303, տիրաժ 10,000
Թղթի չափսը $62 \times 94\ ^{1}/_{16}$ (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
$9\ ^{1}/_{4}$ տպ. մամուլ, $4\ ^{3}/_{4}$ թերթ թուղթ.
Հանձնվել է արտադրության 26/XII 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 9/I 1940 թ.
Գինը 1 ռ. 50 կ., կազմը 2 ռ.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0181235